

ՕՍՄԱՆՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ
ԱՐԵՎԱՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ե. Մ. Ա. Մ. Ն.
1967

367

ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎԵԼԻԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

4



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

ОСМАНСКИЕ ЗАКОНЫ
В ЗАПАДНОЙ АРМЕНИИ
(СВОД ЗАКОНОВ XVI—XVII ВВ.)

Перевод, предисловие и
комментарии
А. Х. САФРАСТЯНА и М. К. ЗУЛАЛЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՐ

9(48.928)
0-67

ՕՍՄԱՆՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(XVI—XVII ԴԴ. ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆԵՐ)

Թարգմանությունը, առաջաբանը
և ծանոթագրությունները
Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ և Մ. Կ. ՉՈՒԼԱԼՅԱՆԻ

21019

1384



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1964



Արևմտյան Հայաստանի վիլայեթներին և այլ շրջաններին վերաբերող XVI—XVII դ.դ. օսմանյան օրենքների այս ժողովածուն որոշակի գաղափար է տալիս Թուրքիայի տիրապետության տակ ընկած Արևմտյան Հայաստանի այն ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական դրություն, օսմանյան ազդեցությունների պետության կատարած անարգել բռնությունների ու ճնշումների, գյուղացիության իրավական վիճակի, ինչպես և հողատիրության հետ կապված բազմաթիվ այլ հարցերի մասին:

«Նյութեր Արևելքի ժողովուրդների պատմության» մատենաշարով լույս են տեսել.

1. Ա. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անգրիզիկասի մյուս ժողովուրդների մասին, հ. I և II:

2. Հ. Նալբանդյան, Աբաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին:

19319

Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Օսմանյան կանուննամեններից թարգմանաբար կազմված սույն ժողովածուն արժեքավոր նյութեր է պարունակում XVI—XVII դարերի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ:

Վերջին երկու-երեք տասնամյակում Թուրքական պատմագրությունը սկսել է ավելի լայն շահով ուսումնասիրել Օսմանյան կայսրության սկզբնական ժամանակաշրջանի պատմությունը: Լույս են ընծայվում բազմաթիվ արխիվային նյութեր և փաստաթղթեր:

Այս կարգի նյութերից են նաև XV—XVI դարերին վերաբերող օրինամատյաններն (kanunnâme) ու օրենքները (kanunlar): Ստամբուլի համալսարանի պրոֆ. Օ. Լ. Բարկանը հրատարակել է XV ve XVI asırlarda Osmanlı İmparatorluğunda ziraî ekonominin hukukî ve malî esasları («XV և XVI դարերում Օսմանյան կայսրության մեջ գյուղատնտեսության իրավական և ֆինանսական հիմունքները») երեք հատորանոց աշխատությունը, որի առաջին հատորը՝ Kanunlar (կանուններ) տպագրվել է Ստամբուլում 1945 թվականին: Այդ նյութերի հիման վրա և կազմվել է սույն ժողովածուն:

Կազմողների նպատակը չի եղել թարգմանաբար բերված օրինամատյանների (կանուննամենների) բազմակողմանի ուսումնասիրությունը: Սակայն օրենքներից օգտվողներին օժանդակելու և դրանք ընթերցող լայն շրջաններին ավելի մատչելի դարձնելու նպատակով, անհրաժեշտ է համարվել առաջաբանի սահմաններում տալ օսմանյան կանուննամենների ծագման և զարգացման համառոտակի պատմությունը և դրանց հետ կապված մի շարք հարցերի լուսաբանությունը:

Օրենքների ուսումնասիրության մեջ կարևոր տեղ ունեն դաֆթարները: Դաֆթարներ էին կոչվում Օսմանյան կայսրության, ինչպես և նրանից առաջ Սելջուկյան տիրակալության տակ գտնվող

երկրներում, Անատոլիայի բեյությունների և արևելյան բազմաթիվ տերությունների մեջ հայտնի գրանցման մատյանները, որոնք կառավարության հրամանով և միջոցներով պարբերաբար արձանագրվում էին հատուկ հաշվառման (tahrir) միջոցով:

Իհարկե, այդ դարաշրջանի հասկացողության և պայմանների համաձայն, ընդհանուր հաշվառումը տեղի էր ունենում և կատարվում ըստ վիլայեթների (կամ էյալեթների) և լիվանների (սանջակների):

Դաֆթարների բովանդակության և կարևորության մասին ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Ուզունչարըլըլին գրում է: «Օսմանյան կայսրության հողերի գրանցման դաֆթարների (tahrir defterleri) թիվը ներկայումս հազարից ավելի է: Գրանցման դաֆթարները ցույց են տալիս Թուրքիայի բոլոր գյուղերի և գավառների հարկ վճարող (mükellef) բնակչության թիվը, զինվորների քանակը, տարեկան եկամտի և բերքի քանակը, բոլոր արհեստներն ու ծառայությունները»*:

Կանոննամաների արժեքը շատ ավելի է մեծանում, երբ նրկատի ենք ունենում, որ XVI դարի առաջին կեսին Թուրքիայում դեռևս չկար որոշակի կազմված, ձևակերպված և ընդունված օրենքների կողմից՝ ընդհանուր պետական օրենսդրություն:

Օ. Լ. Բարկանը, իր հերթին, խոսելով դաֆթարների և առհասարակ Ստամբուլի արխիվային նյութերի նշանակության մասին, իրավամբ նշում է, որ թուրքական պատմական գրականության մեջ հազվագյուտ են Օսմանյան կայսրության XV—XVI դարերի սոցիալատնտեսական կյանքի պատմությանը վերաբերող նյութերը: Օսմանյան կայսրության ներքին կյանքի ուսումնասիրության համար «ամենալավագույն աղբյուրները, անտարակույս, — գրում է Օ. Բարկանը, — գտնվում են թուրքական արխիվներում, և որ դրանց օգտագործմամբ հնարավոր է մի կողմից վերականգնել ճշգրիտ վիճակագրական տվյալներ գյուղատնտեսության աշխատողների տարբեր դասակարգերի և քոչվոր գյուղացիների ու քաղաքային բնակչության մասին, իսկ մյուս կողմից, մուսուլման ու քրիստոնյա աշխատավորների մասին, և այդպիսով ճշգրիտ պատկերացում ունենալ

* Şku, I. H. Uzunçarşılı, „XV ve XVI inci asırlarda Anadolu beyliklerinde toprak ve halk idaresi“. İkinci Türk Tarih Kongresi, İstanbul, 1942, s. 499—500.

Օսմանյան կայսրության բոլոր երկրամասերի հողային սեփականության ձևերի վերաբերյալ»*:

Նման դաֆթարներից մեկը 1947 թվականին Թիֆլիսում հրատարակել է Ս. Ս. Ջիկիան՝ «Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարը**» վերնագրով: Այդ աշխատության շնորհիվ կարելի է որոշակի գաղափար կազմել այս տիպի դաֆթարների կազմության և բովանդակության մասին: Կատարված հաշվառման հետևանքով, դաֆթարում մանրամասն կերպով արձանագրված են վիլայեթի սահմաններում եղած վարչական միավորները՝ լիվա (սանջակ), կազա և նահիյեններ (փոքր վարչական միավորներ): Դաֆթարում արձանագրված են՝ նահիյենների կազմում եղած գյուղերը, գյուղերի բոլոր ծխերը (خان — տուն): Միևերը արձանագրված են ընտանիքի ավագի անունով ու հայրանունով***, օրինակ, Ախլցխայի Ռաբաթ գյուղում՝

Իսա Ներսես քեշիշի որդին

Մուրադբաշխ Օրսլի որդին

Չուկե նրա որդին

Ռուսեմ Ջանիգյարի (?) որդին

Անդրանիկ նրա որդին և այլն:

Հետո մանրամասն կերպով հիշվում են յուրաքանչյուր գյուղի վճարելիք բոլոր տեսակի հարկերը՝ գլխահարկը, հացահատիկների, անասունների, ամուսնության, ջրաղացի և այլն, ըստ որում, գլխահարկը (իսպենջ), նշանակվում է ըստ շնչի՝ 25 ակչեի հաշվով: Մրնացած հարկերն էլ նույն ձևով են նշանակվում: Դարձյալ իբրև օրինակ, նշենք Ախլցխայի հարկերի ցուցակը, գրված շնչերի թվարկումից հետո (ակչեներով),

* O. Lütfü, „Problèmes fonciers dans l'Empire Ottoman au temps de sa fondation“, Annales d'histoires sociales, Paris, 1939, t. I, № 3, p. 233—234.

** „Пространный реестр Гюрджистанского вилайета“, Турецкий текст, издал, перевел, исследованием и комментарием снабдил С. С. Джикия, кн. 1, текст, Тбилиси, 1947 г.

Այս դաֆթարը (دفتر مفصل ولایت گورجستان) վերաբերում է Թուրքիայի գրաված և «Գյուրջիստանի վիլայեթ» անունով կազմված հողամասերում հիշրեթի 1003 թվականին (1595) տեղի ունեցած հաշվառմանը: Գյուրջիստանի վիլայեթի մեջ մտել են Ախլցխայի, Խերթվիսի, Ախալքալակի, Չլզրի, Փոսխովի և Բեզրեի լիվաները (սանջակ) Ախլցխա կենտրոնով: Դաֆթարը հրատարակված է նաև վրացերեն թարգմանությամբ:

*** Թուրքիայում մինչև քննադատական ռեֆորմներն ազգանունն չէր գործածվում:

երկրներում, Անատոլիայի բեյությունների և արևելյան բազմաթիվ տերությունների մեջ հայտնի գրանցման մատյանները, որոնք կառավարության հրամանով և միջոցներով պարբերաբար արձանագրվում էին հատուկ հաշվառման (tahrir) միջոցով:

Իհարկե, այդ դարաշրջանի հասկացողության և պայմանների համաձայն, ընդհանուր հաշվառումը տեղի էր ունենում և կատարվում ըստ վիլայեթների (կամ էյալեթների) և լիվանների (սանջակների):

Դաֆթարների բովանդակության և կարևորության մասին ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Ուզունչարչըլին գրում է. «Օսմանյան կայսրության հողերի գրանցման դաֆթարների (tahrir defterleri) թիվը ներկայումս հազարից ավելի է: Գրանցման դաֆթարները ցույց են տալիս Թուրքիայի բոլոր գյուղերի և գավառների հարկ վճարող (mükellef) բնակչության թիվը, գինվորների քանակը, տարեկան եկամտի և բերքի քանակը, բոլոր արհեստներն ու ծառայությունները»*:

Կանոննամեների արժեքը շատ ավելի է մեծանում, երբ նրկատի ենք ունենում, որ XVI դարի առաջին կեսին Թուրքիայում դեռևս չկար որոշակի կազմված, ձևակերպված և ընդունված օրենքների կողքի՝ ընդհանուր պետական օրենսդրություն:

Օ. Լ. Բարկանը, իր հերթին, խոսելով դաֆթարների և առհասարակ Ստամբուլի արխիվային նյութերի նշանակության մասին, իրավամբ նշում է, որ թուրքական պատմական գրականության մեջ հազվագյուտ են Օսմանյան կայսրության XV—XVI դարերի սոցիալատնտեսական կյանքի պատմությանը վերաբերող նյութերը: Օսմանյան կայսրության ներքին կյանքի ուսումնասիրության համար «ամենալավագույն աղբյուրները, անտարակույս, — գրում է Օ. Բարկանը, — գտնվում են թուրքական արխիվներում, և որ դրանց օգտագործմամբ հնարավոր է մի կողմից վերականգնել ճշգրիտ վիճակագրական տվյալներ գյուղատնտեսության աշխատողների տարբեր դասակարգերի և քոչվոր գյուղացիների ու քաղաքային բնակչության մասին, իսկ մյուս կողմից, մուսուլման ու քրիստոնյա աշխատավորների մասին, և այդպիսով ճշգրիտ պատկերացում ունենալ

* Süss, I. H. Uzunçarşılı, „XV ve XVI inci asırlarda Anadolu beyliklerinde toprak ve halk idaresi“. İkinci Türk Tarih Kongresi, İstanbul, 1942, s. 499—500.

Օսմանյան կայսրության բոլոր երկրամասերի հողային սեփականությունների ձևերի վերաբերյալ»*:

Նման դաֆթարներից մեկը 1947 թվականին Թիֆլիսում հրատարակել է Ս. Ս. Զիկիան՝ «Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարը**» վերնագրով: Այդ աշխատության շնորհիվ կարելի է որոշակի գաղափար կազմել այս տիպի դաֆթարների կազմության և բովանդակության մասին: Կատարված հաշվառման հետևանքով, դաֆթարում մանրամասն կերպով արձանագրված են վիլայեթի սահմաններում եղած վարչական միավորները՝ լիվա (սանջակ), կազա և նահիյեներ (փոքր վարչական միավորներ): Դաֆթարում արձանագրված են՝ նահիյեների կազմում եղած գյուղերը, գյուղերի բոլոր ծխերը (خان — տուն): Ծխերը արձանագրված են ընտանիքի ավագի անունով ու հայրանունով***, օրինակ, Ախլախայի Ռաբաթ գյուղում՝

Իսա Ներսես քեշիշի որդին
Մուրադբաշխ Օրսլեի որդին
Չուկե նրա որդին
Ռուստեմ Ջանիգյարի (?) որդին
Անդրանիկ նրա որդին և այլն:

Հետո մանրամասն կերպով հիշվում են յուրաքանչյուր գյուղի վճարելիք բոլոր տեսակի հարկերը՝ գլխահարկը, հացահատիկների, անասունների, ամուսնության, ջրաղացի և այլն, ըստ որում, գլխահարկը (իսպենջ), նշանակվում է ըստ շնչի՝ 25 ակչեի հաշվով: Մընացած հարկերն էլ նույն ձևով են նշանակվում: Դարձյալ իբրև օրինակ, նշենք Ախլախայի հարկերի ցուցակը, գրված շնչերի թվարկումից հետո (ակչեներով),

* O. Lütfü, „Problèmes fonciers dans l'Empire Ottoman au temps de sa fondation“, Annales d'histoires sociales, Paris, 1939, t. I, № 3, p. 233—234.

** „Пространный реестр Гюрджистанского вилайета“, Турецкий текст, издал, перевел, исследованием и комментарием снабдил С. С. Джикия, кн. 1, текст, Тбилиси, 1947 г.

Այս դաֆթարը (دفتر مفصل ولایت گورجستان) վերաբերում է թուրքերից գրավված և «Գյուրջիստանի վիլայեթ» անունով կազմված հողամասերում հիջրեթի 1003 թվականին (1595) տեղի ունեցած հաշվառմանը: Գյուրջիստանի վիլայեթի մեջ մտել են Ախլախայի, Խերթվիսի, Ախալքալակի, Չլզըբի, Փոսլուվի և Բեգրեի լիվանները (սանջակ) Ախալքալակում: Դաֆթարը հրատարակված է նաև վրացերեն թարգմանությամբ:

*** Թուրքիայում մինչև քեմալական ռեֆորմներն ազգանունն չէր գործածվում:

Իսպենյ	175 շունչ	գումարը	4350
Յորեն	800 քիլ	արժեքը	9600
Գարի	700 քիլ	արժեքը	7000
Հաճար	250 քիլ	արժեքը	2000
Կորեկ	100 քիլ	արժեքը	1000
Սիսեռ	5 քիլ	արժեքը	150
Ոսպ	4 քիլ	արժեքը	100
Բակլա	4 քիլ	արժեքը	60
Շիրե	300 մեն	արժեքը	2400
Խոտի հարկը			550
Պողի հարկը			500
Թափուրի և դեշտբանիի հարկը			550
Բանջարանոցի հարկը			550
Խոզի հարկը			300
Փեթակի հարկը			440
Բադեհեա և ամուսնություն հարկը			355
Յալլաղի հարկը			135

Գումարը 37.000 ալչե*

Իհարկե վերոհիշյալ տվյալները վերաբերում են վիլայեթի միայն մեկ գյուղին. ուրիշ գյուղերի հարկերի ցուցակը փոփոխվում է, ավելանում են այլ հարկեր, փոփոխվում են նաև քանակն ու արժեքը:

Մի շարք գյուղերի հարկերի ցուցակից հետո, որպես լրացուցիչ ծանոթագրություն հիշվում են տվյալ գյուղի վակֆերը, հողերը՝ այգիները, ջրաղացները, հանրային օգտագործման արոտավայրերը և այլն:

«Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարը», ինչպես ասացինք, որոշ պատկերացում է տալիս առհասարակ թուրքական դաֆթարների մասին: Պարզվում է, որ շատ քիչ տարբերությամբ, նման դաֆթարներ ունեցել են նաև Օսմանյան ընդարձակ կայսրության բազմաթիվ վարչական միավորները՝ վիլայեթներն ու լիվանները:

Վերջերս հունգարացի արևելագետ Լ. Ֆեկետեի հրատարակությանը լույս տեսավ Բուդապեշտի (Հունգարիա) վիլայեթի ընդար-

* Հարկերի մասին անհրաժեշտ տեղեկություն տալիս ենք Կանոնամաների ծանոթագրություններում:

ձակ դաֆթարը՝ բնագրով և գերմաներեն թարգմանությամբ*: Հունգարացի գիտնականի «Թուրքական հարկերի գրանցումը» վերնագրով 1943 թվականին Բուդապեշտում տպագրված աշխատության առաջաբանի թուրքերեն թարգմանությունը տպագրված է Türk Tarih Kurumu-ի օրգան՝ Belleten-ում: Լ. Ֆեկետեի վերոհիշյալ աշխատության մասին պրոֆ. Թ. Հուլասի Կումը գրում է՝ «Մեր կարծիքով Օսմանյան կայսրության իսկական պատմությունը կարող է լրիվ ամբողջությամբ երևան գալ միայն «հարկերի գրանցումները» հրատարակության միջոցով պատմաբաններին մատչելի լինելուց հետո: Տարակույս չկա, որ վերոհիշյալ հարկերի գրանցման լույսի տակ Անադոլուի օսմանյան դարաշրջանի պատմությունը և կամ Հունգարիայի թուրքական շրջանի պատմությունը բոլորովին տարբեր գույնով պիտի տեսնենք: Այս տեսակետից, առանց չափազանցության, կարող ենք ասել, որ օրինակ, Հունգարիայի հետ առնչություն ունեցող նյութերը, եթե պրոֆ. Լ. Ֆեկետեի նախագծով մշակվեն, ապա հնարավոր և անհրաժեշտ կլինի Հունգարիայի XVI և XVII դարերի պատմությունը վերստին գրել: Բնական է, որ Հունգարիայի թուրքական շրջանի պատմության մասին մեր այս տեսակետը վերաբերում է նաև Անադոլուին, Բալկաններին և առհասարակ Օսմանյան կայսրության բոլոր մասերին»**:

Դաֆթարների ավելի մանրամասն ուսումնասիրությունը անմիջականորեն չի առնչվում ներկա աշխատությանը, ուստի բավականանում ենք վերը բերված տեղեկություններով:

Ինչպես երևում է «Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարից» և առհասարակ համանման նյութերով հետաքրքրվող թուրք պատմաբանների ուսումնասիրություններից, բոլոր դաֆթարների սկզբում տրված են տվյալ վարչական միավորի (վիլայեթի, լիվայի, երբեմն ավելի լայն սահմանով) համար կազմված կանոնամաները: Դա, ինչպես պարզվում է, ընդունված կարգ և սովորություն է եղել: Այսպես, «Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարի» սկզբում տրված է՝ «Գյուրջիստանի վիլայեթի կանոնաման»:

(قانون نامه ولایت گورجستان)
 Պրոֆեսոր Օ. Լ. Բարկանի վերոհիշյալ աշխատության մեջ հավաքված 200-ից ավելի կանոնամաները և կանոնները նմանապես մեծ մասամբ վերցված են տվյալ վիլայեթին կամ լիվային պատկա-

* L. Fekete, „Die Siyaqet-Schrift in der Türkischen Finanzverwaltung. Beitrag zur Turkischen Paläographie mit 104 tafeln, in zwei bänden, Budapest, 1955.

** Belleten, Sayı 42, Ankara, Nisan 1947, s. 299.

նող դաֆթարից, թեև հիշատակվում են նաև դաֆթարի մեջ չմտած օրենքները:

Պրոֆեսոր Օ. Լ. Բարկանի «Kanunlar» գրքում հավաքված օրենքները, շնչին բացառությամբ, վերաբերում են XVI դարի առաջին կեսին: Ներկա ժողովածուի մեջ զետեղված օրենքներն ևս նույն ժամանակաշրջանին են պատկանում: Այսպես, Գյուրջիստանի վիլայեթի կանուննամեի վերջում ասված է. «Գրվեց շերմագիել-էվվել ամսի սկզբին 1003 թվականին (1595)», էրզրումի վիլայեթի կանուննամեն ունի հիշրեթի 947 թվականը (1540), Երզնկայինը՝ 922 թվականը (1516), Դիարբեքիինը՝ 947 (1540) և այլն:

Սակայն եթե այս թվականները համարենք նրանց հաստատման տարեթվերը, դարձյալ անորոշ են մնում՝ նախ, տվյալ օրենքը որքա՞ն ժամանակ առաջ է գոյություն ունեցել, երկրորդ, ե՞րբ և ի՞նչպիսի փոփոխությունների է ենթարկվել, երրորդ՝ որքա՞ն ժամանակ է գործադրության մեջ մնացել: Իբրև օրինակ, եթե համեմատենք մեր ձեռքի տակ եղած «Գյուրջիստանի վիլայեթի կանուննամեի» երկու տարբերակները, մեկը «Kanunlar»-ում, Օ. Լ. Բարկանի տպագրածը, մյուսը՝ Թբիլիսիի թանգարանում պահված օրինակը, կտեսնենք, որ դրանց տարեթվերը իրար շեն համապատասխանում (1570 և 1595 թթ.) և բովանդակության մեջ կան որոշ տարբերություններ. երկրորդի մեջ եղած որոշ հոդվածներ բացակայում են առաջինում:

Պրոֆ. Օ. Լ. Բարկանի ուսումնասիրություններից ևս պարզվում է, որ կանուննամեները և կանունները, որոնք պահվում են Թուրքիայի պետական արխիվներում և գրադարաններում, ինչպես նաև մասնավոր գրադարաններում, ունեն իրենց տարբերակները, անգամ երբեմն առանց տարեթվի: Վերջինների վավերականությունը հեղինակը կասկածի տակ է առնում:

«Հին օսմանյան կանուննամեները, — գրում է Օ. Լ. Բարկանը, — օրենքի տեխնիկայի և կազմության առանձնահատկությունների տեսակետից երևան են եկել ոչ թե որոշակի և ընդհանուր մի շարք վճիռների (հükküm) սիստեմատիկ դասավորման ձևով, այլ ավելի շուտ կազմվել են որոշ ժամանակի և տեղի պայմաններում, կոնկրետ առիթների կապակցությամբ գրված հրամաններից և ֆերմաններից (հրովարտակներից): Այդ օրենքները օսմանյան երկրներին հատուկ, միատեսակ, ընդհանուր կանուններ չեն, այլ յուրաքանչյուր վայրի, սովորությունների համաձայն հավաքված մասնավոր օրենքներ են»*:

* O. L. Barkan, Kanunlar, s. LIX—LX.

Այս օրենքներից պարզվում է, որ կազմողները ստիպված են եղել հաշվի առնել թուրքական նվաճումից և գրավումից առաջ տվյալ երկրների սոցիալ-տնտեսական, ներքին քաղաքական կարգերը, տեղում գոյություն ունեցող օրենքները, սովորություններն ու ավանդությունները: «Ամենալավ հարկը, — ասված է մի կանուննամեում, — այն հարկն է, որ ժողովուրդը վաղուց ի վեր սովորել է տալ» («En iyi vergi halkın ötedenberi vermeğe alışmış olduğu vergidir»):

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մի քանի կոնկրետ փաստերի վրա, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանի վիլայեթների օրենքներին:

Կանուննամեներում և կանուններից շատերում կան այսպիսի նշումներ՝ «ըստ գոյություն ունեցող սովորությունների», «ըստ տեղական սովորության» և այլն: Էրզրումի վիլայեթի կանուննամեի 54-րդ հոդվածում նշված է՝ «Ըստ արևելյան սովորության հին դաֆթարում նեռքար արձանագրվածի որդին նոր դաֆթարում նեռքարի որդի կարձանագրվի»:

Օսմանյան կանուննամեների վրա որոշակի ազդեցություն են գործել օսմանյան տիրակալությունից առաջ տվյալ տերիտորիայի վրա իշխող պետությունների օրենքներն ու սովորությունները: Արևմտյան Հայաստանի կազմի մեջ մտնող վիլայեթներին վերաբերող կանուննամեների վրա նկատվում է Ակ-Կոյունլու թուրքմենների պետության, մասնավորապես նրանց Ուզուն-Հասան փաղիշահի (1453—1477) և այլոց օրենքների ազդեցությունը:

Դա բացատրվում է ոչ թե նրանով, որ օսմանյան թուրքերը որևէ երկրի գրավումից հետո, ելնելով տեղացի ժողովրդի շահերից և «հարգելով» նրան, պահպանում էին տեղական օրենքները, սովորություններն ու ավանդությունները, այլ այն բանով, որ XV—XVI դարերում թուրքական պետականությունն ի վիճակի չէր ընդհանուր օրենսդրություն մշակելու:

Արևմտյան Հայաստանում և այլ հայաբնակ շրջաններում առանձնապես կիրառության մեջ են եղել վերոհիշյալ Հասան փաղիշահի օրենքները: Էրզրումի վիլայեթի կանուննամեի առաջին հոդվածում, Երզնկայի կանունի առաջին և տասներեքերորդ հոդվածներում, Կամախի կանունի առաջին հոդվածում, Բաբերդի, Էրզանիի և այլ օրենքներում պարզ կերպով գրված է՝ «Ըստ Հասան փաղիշահի կանունի»* («Ber muceb-i kanun-i Hasan padişah») և այլն:

* Հասան փաղիշահը կամ ինչպես նրան կոչում են Ակ-Կոյունլու Ուզուն-Հասանը, որը 1453 թվականին միայն Դիարբեքիի բեյ էր համարվում, իր իշխա-

Ակնհայտ է, որ Արևմտյան Հայաստանի մի շարք երկրամասերում XV—XVI դարերում, երբ օսմանյան թուրքերի օրենքները դեռևս որոշակի ու հաստատ բնույթ չունեին, օսմանցիները «երկար ժամանակ էական փոփոխություն չեն ենթարկել» Հասան փաղիշահի օրենքները*:

Ինչպես երևում է Արևմտյան Հայաստանի վիլայեթներին վերաբերող թուրքական օրենքներից, դրանց հեղինակները Հասան փաղիշահի օրենքների ուժն ու ազդեցությունը նսեմացնելու և օսմանյան պետության դիրքերն ամրապնդելու նպատակով, մի շարք կանոննամեներում նշումներ են կատարել, թե իբր տվյալ շրջանի բնակիչները դիմել են օսմանյան սուլթանին և խնդրել իրենց վիլայեթներում նույնպես մտցնել ու գործադրել Ռումի (օսմանյան) օրենքները: Այսպես, օրինակ՝ էրզրումի վիլայեթի օրենքի առաջին հոդվածում ասված է. «Ռայայեթները, առևտրականները և օսմանյան երկրի մյուս բնակիչները շարժողացան տոկալ Հասան փաղիշահի կանոնի համաձայն կիրառվող օրենքներին և դիմելով բարձր արքայական գահին, խնդրեցին, որ Ռումի օրենքը [գործադրվի], նաև նրանց նկատմամբ**»:

Արևմտյան Հայաստանի վիլայեթների կանոննամեներում նշումներ կան նաև «ֆրդական սովորությունների», «ֆրդական օրենքների», «աշիրեթական կարգերի» մասին: Բիթլիսի վիլայեթի օրենքի առաջին հոդվածում ասված է. «Հիշյալ վիլայեթում մինչև այժմ հարկերը գանձվում են քրդերի սովորության համաձայն***», և այնուհետև թվարկվում են այդ հարկերը: Դիարբեքի վիլայեթի օրենքի 24, 25 և 26-րդ հոդվածներում հատուկ նշումներ կան քրդական աշիրեթների մասին:

1515 և 1516 թվականներին նվաճելով Արևմտյան Հայաստանն ու Քուրդիստանը, օսմանյան ռազմա-ֆեոդալական պետությունը ոչինչ չփոխեց քրդական նահապետական-ֆեոդալական նախկին վարչական սիստեմի մեջ, իսկ այդ սիստեմի էությունն այն էր, որ քուրդ ցեղապետները լոկ ձևականորեն էին ճանչում օսմանյան պետության գերագույն իշխանությունը, իսկ իրականում երկրի ան-

նություն 30 տարիներում ստեղծեց մի մեծ կայսրություն, որի մեջ մտնում էին Անատոլիայի արևելյան վիլայեթները, Հայաստանը, արաբական և իրանյան Իրաքը և Խորասանը:

* O. L. Barkan, „Osmanlı İmperatorluğunda çiftçi simfların hukukî statüsü“, Ülkü, 1937, s. 39—40.

** O. L. Barkan, Kanunlar, s. 63.

*** Նույն տեղում, էջ 192:

կախ տերն ու տնօրենն էին: Ակներև է, որ հայ ժողովրդի այն հատվածը, որ բնակվում էր Արևմտյան Հայաստանի քուրդ ֆեոդալներին պատկանող վայրերում, ընկնում էր կրկնակի լծի տակ: Այդ իսկ տեսակետից գիտական մեծ արժեք ունեն այդ լուծն արտացոլող կանոննամենների հոդվածները:

* * *

Դեաֆթարները և նրանց կանոննամենները կարևոր նշանակություն ունեն նաև գյուղացու (ռայայի)* և ֆեոդալի փոխհարաբերության, հողային սեփականության ձևերի բնորոշման հարցերի ուսումնասիրության տեսակետից:

Մինչև այժմ այն կարծիքն է տիրել, թե Արևելքում ճորտատիրություն առհասարակ գոյություն չի ունեցել, մինչդեռ սույն կանոննամենները հակառակն են ապացուցում:

Իսլամական շարիաթը լոկ ձևականորեն էր ապահովում գյուղացու անձնական ազատությունները, իսկ ֆեոդալական հարաբերությունները թուրքիայում միշտ չէ, որ հիմնվել են շարիաթի սկզբունքների վրա: Այդ հարաբերությունները ամրապնդվել են սուլթանի ու սուլթանական կառավարության հրատարակած օրենքներով, որոնք հաճախ, պրակտիկայում չեն համապատասխանել շարիաթի սկզբունքներին, այլ ելակետ են ունեցել ռազմա-ֆեոդալական պետության շահերը:

Կանոննամեններում հաճախակի ենք հանդիպում հատուկ հոդվածների, որոնք գյուղացուն արգելում են փոխադրվել մի վայրից մի այլ վայր: Հակառակ դեպքում կանոննամեն իրավունք է վերապահում ֆեոդալին փնտրել գյուղացուն և, եթե նրա փախուստի ժամկետից չի անցել տասը տարի, բռնել նրան ու պահանջել պատճառված վնասի հատուցումը: Այսպես՝ էրզրումի կանոննամեի 13-րդ

* Կանոննամեններում օգտագործված «ռայա» (կամ ռայաթ) տերմինը հավասարաչափ վերաբերում էր ինչպես ոչ-մուսուլման, այնպես էլ մուսուլման ազգաբնակչությանը: Հիշյալ փաստաթղթերում ամբողջ հողագործ գյուղացիության նկատմամբ օգտագործված «ռայա» (raya) կամ հոգնակի «ռեայա» (reâya) տերմինը հանդիպում է նաև այսպիսի կապակցություններում՝ «առհավատ ռայաներ» (reâya keferesi կամ reâya-i-kefere), թուրք ռայաներ (reâya-i-etrak), մուսուլման ռայաներ (reâya-i-müslimîn), զիմմի ռայաներ (reâya-i-zimmî) (տես, O. L. Barkan, Kanunlar, s. 35, 102, 200, 251, 353 և այլն):

հողվածում ասված է՝ «Եվ ուայաթը իր ձեռքում հող ունենալով հանդերձ, եթե փախչի, սիփահին օրենքով իրավունք ունի նրան իր տեղը վերադարձնել: Սահայն տասը տարուց ավելի մի տեղում բնակվողին ետ բերելն արգելվում է»: Կանոննամեներում հաճախակի հանդիպում ենք այսպիսի տերմինների՝ «sahib-i raiyet» («ուայաթի տերը»), «sahib-i arz» («հողի տեր») և այլն: Պահաս չեն նաև «resm-i cift bozan» (չիֆթը քայքայողի հարկ), «kulluk resmi» («ծառայության հարկ») և նման տերմինները:

«Չիֆթը քայքայողի հարկը» գանձվում էր այն բոլոր դեպքերում, երբ գյուղացին թողնում էր մշակելի հողակտորը և հեռանում:

Մեր նպատակից դուրս է մանրամասն կանգ առնել գյուղացուն հողին ամրացնելու, ֆեոդալից նրա ունեցած կախման վիճակի բոլոր ձևերի հետ առնչվող հարցերի վրա: Կանոննամեների տվյալները թելադրում են հանգելու այն եզրակացություն, որ Օսմանյան կայսրության մեջ աշխատավոր գյուղացին XVI դարում հիմնականում ամրացված էր հողին և ֆեոդալից կախման վիճակի մեջ էր գտնվում: Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ ֆեոդալը Օսմանյան կայսրության մեջ ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի ֆեոդալի, գյուղացու անձի նկատմամբ շունչ իրավական իշխանություն, որովհետև նա «հողի տերը» («sahib-i arz») չէր, այլ հողը գտնվում էր նրա ժամանակավոր օգտագործման ներքո:

Դաֆթարների բովանդակության և բնույթի մասին խոսելիս վերը նշվեց, որ դրանք հաճախ ենթարկվել են փոփոխությունների: Նոր պատերազմների ու նոր նվաճումների և հետևաբար վարչակազմի միավորների փոփոխությունների կապակցությամբ տեղի են ունենում նոր հաշվառումներ (tahrir): Այդ հաշվառումները իրենց հետ բերում են և նոր փոփոխություններ, որոնց հետևանքով ստեղծվել են հին ու նոր դաֆթարներ (defter-i atik ve defter-i-cedid): Մրանց մասին հաճախ հիշատակություններ կան կանոննամեներում: Դաֆթարների փոփոխության հետ միաժամանակ փոփոխվել են նաև կանոննամեները: Անկախ դրանից, կանոննամեները փոփոխությունների են ենթարկվել գլխավորապես հարկային սիստեմի փոփոխության և նոր ֆերմանների ու որոշումների հրատարակման կապակցությամբ: Ահա հենց այս և նման պատճառներով գրեթե բոլոր կանոննամեներում պատահում ենք այսպիսի նշումների, «Փաղիշահական հրամանով նոր դաֆթարում արձանագրվեց» (իհարակե, ի փոփոխումն նախկինի):

XV—XVI դարերում Օսմանյան կայսրության կանոննամեների մասնավորապես անմիջականորեն մեզ հետաքրքրող Արևմտյան Հա-

յաստանի շրջաններին վերաբերող օրենքների բնորոշ և ուշադրության արժանի հատկանիշներից է նաև այն, որ համարյա բոլոր օրենքներում նշվում են հարկային սիստեմի և հարկահանութային ձևերի գրեթե համատարած և մշտական աղավաղումների և դրանց հետ կապված ապօրինությունների և բռնությունների անարգել տարածման մասին:

Իսլամական շարիաթի և թուրքական իրավաբանական տերմինոլոգիայում բիդ'աթ* անունով հայտնի ապօրինության բազմաթիվ ու բազմատեսակ օրինակներ կան գրեթե բոլոր կանոննամեներում, որոնք հիշատակվում են մանրամասնորեն և փաղիշահական հատուկ հրովարտակներով (ֆերման) հայտարարվում «վերացված»: Այդ բիդ'աթների վերացման մասին եղած կարգադրությունները մի շարք կանոննամեներում կարևոր տեղ են բռնում: Բերենք վերոհիշյալ ապօրինությունների և դրանց վերացման փորձերի մասին մի քանի օրինակներ:

Երզրումի վիլայեթի կանոննամեի 25-րդ հոդվածում նշվում է, որ դաֆթարում արձանագրված հարկերից բացի ուայաթներից գանձվել են նաև «ըրգադիյե» (irgadiye) պարհակի հարկ, կալի հարկ, հարդի համար տասանորդ, որոնք ապօրինի լինելու համար վերացվում են: Նույն կանոննամեի 40-րդ հոդվածում նշվում է, որ հաշվառուները (muhtesib) դաֆթարում գյուղի վրա արձանագրված տարեկան եկամտի ամեն մեկ հազար ալլեից մեկ ալլե, ամեն մեկ ջրաղացից՝ երկու ալլե, ամեն մեկ ձիթհանից՝ 20 ալլե «իհտիսաբիե» (ihtisabiye=հաշվառման վարձք) են գանձել, որը նույնպես վերացվում է:

Դիարբեքի Վիլայեթի օրենքի 21-րդ հոդվածում ասված է, որ վիլայեթի քաղաքներում և գյուղաքաղաքներում հաշվառում անցկացնելիս բազմաթիվ ապօրինություններ են կատարվել և ապաթվարկվում են դրանք. ինչպես նաև նշված է, որ այդ ապօրինությունները վերացվում են: Նման նշումներ կան նաև Բողոքի և այլ օրենքներում:

Ապօրինությունների վերացման մասին տրված ֆերմանները, անտարակույս, ունեն սոսկ ձևական նշանակություն: Մի քանի կանոննամեներում այդ ձևականությունը պարզ երևում է. օրինակ՝ էրգանի լիվայի օրենքների դաֆթարի 21-րդ հոդվածում հիշատակ-

* Բիդ'աթ (bid'at) բառացի՝ նորաձևություն, նորամուծություն, այսինքն՝ շարիաթին չհամապատասխանող և նրան հակասող:

վում է տարածված ըրգադիյեի (պարհակային աշխատանք) ապօրինությունը: Հոգովածի վերջում ավելացվում է՝ «դարձյալ նույն կերպով որոշվեց»: Կեսարիայի լիվայի կանոնի առաջին հոդվածում նըշվում է երկու տասնորդ առնելու ապօրինությունը: հետո ավելացվում է՝ «համաձայն հին դաֆթարի նորից այդպես արձանագրվեց»:

* * *

Ներկա ժողովածուն ընդգրկում է 23 կանոն: Պրոֆ. Օ. Լ. Բարկանը Օսմանյան կայսրության տարբեր մասերի և վարչական միավորների կանոնները տալիս է առանց որևէ սխտեմի (աշխարհագրական, վարչական և այլն): Մեր թարգմանած կանոնները տալիս ենք, ըստ հնարավորության, աշխարհագրական կարգով, նախ Արևմտյան Հայաստանի սահմանների մեջ մտնող վիլայեթների և սանջակների (լիվա) կանոնները, իսկ այնուհետև Թուրքիայի տիրապետության տակ գտնվող մի քանի այլ հայաբնակ վիլայեթներին ու սանջակներին:

Ժողովածուի մեջ զետեղված կանոնները վերաբերում են էրզրումի, Նրզնկայի, Կամախի, Բաբերթի, Բիթլիսի, Ռումի (Սվազի), Կարամանի, Բիհեսնիի և Դիարբեքիի վիլայեթներին, Ամիդի, էրզանիի, Խարբերդի, Չմշկածագի, Արաբկիրի, Դիվրիկի, Կեսարիայի, Մալաթիայի լիվաներին: Վերջում տալիս ենք նաև Տրապիզոնի վիլայեթի կանոննամեն և Սիսի լիվայի կանոնը:

Բացի վերոհիշյալ կանոններից, նպատակահարմար է համարվել տալ նաև Գյուրջիստանի վիլայեթի և Գյանջայի էյալեթի կանոննամենները, որոնք որոշ պատկերացում են տալիս Անդրկովկասի հարևան եղբայրական երկրների՝ Վրաստանի և Ադրբեջանի տերիտորիաների օսմանյան տիրապետության տակ ընկած որոշ մասերի դրուժյան մասին:

Գյանջայի էյալեթի կանոնը վերաբերում է համեմատաբար շատ ավելի ուշ դարաշրջանի (XVIII դարի առաջին քառորդին):

Կանոննամեններում և կանոններում բազմիցս հանդիպում ենք Արևմտյան Հայաստանի շրջաններում գործածության մեջ եղող բազմատեսակ դրամական, կշռի և չափի միավորների: Առանձնապես հիշատակության արժանի են Հասան փադիշահի չափերը և կշիռները: Հիշվում են նաև սելջուկյան, եգիպտական, իրանական և նույնիսկ հայկական չափի ու կշռի միավորներ: Մի շարք օրենքներում այդ այլազան միավորների մասին բացատրություններ են տրված: Այդ բացատրությունները լրացվում են համապատասխան ծանոթագրություններով:

Ուշադրության արժանի են նաև կանոննամենների լեզուն և շարադրության ձևը: Դրանք առհասարակ գրված են XV—XVII դարերին հատուկ թուրքերեն լեզվով, որն իր քերականական կազմովյամբ, շարադասությամբ և արտահայտություններով թուրքերենի, արաբերենի և պարսկերենի խառնուրդ է: Հաճախ պատահում են նաև հին թուրքական բառեր և արտահայտություններ, որոնց պատճառներով էլ հաճախ դժվարություններ են հասկացվում կանոննամենների որոշ հոդվածներ, ինչպես նաև որոշ բառեր: Արաբատառ բնագրերից պրոֆ. Օ. Լ. Բարկանը կարդացել և վերծանել է ավելի քան 200 կանոննամենների մեծ մասը: Սակայն հեղինակին միշտ չէ, որ հաջողվել է տալ կանոննամենների ճշգրիտ վերծանումը, անընթեռնելի են մնացել նախադասություններ, առանձին բառեր, մասնավորապես տեղանուններ: Նման դեպքերում հեղինակն ստիպված է եղել տողատակի ծանոթություններում նման նախադասություններն ու բառերը տալ նաև արաբական գրությամբ, ավելացնելով բազմակետեր և հարցական նշաններ: Միանգամայն հասկանալի է, որ անգամ թուրք մասնագետների կողմից չհաղթահարված այդ դժվարությունները բացասաբար պիտի անդրադառնային նաև հայերեն թարգմանության վրա:

1384
1907
1957

Ժողովածուի մեջ գրեթե բոլոր կանոննամեններում պատահում են այնպիսի տերմիններ, բառեր և անուններ, որոնք պահանջում են առանձին բացատրություն և լուսաբանություն: Այդ բացատրություններն օրենքների տեքստերի թարգմանության մեջ տալը անպատակահարմար և անհնար լինելով, տալիս ենք լրացուցիչ ծանոթագրությունների ձևով:

Պետական-վարչական, զինվորական, ազրարային, հարկային և այլ տերմինների վերաբերյալ բացատրություններն տրված են համապատասխան դարում նրանց ունեցած իմաստով:

Ծանոթագրությունները տրված են այբբենական կարգով:

* * *

Այս ժողովածուում բերված Արևմտյան Հայաստանին և այլ հայաբնակ վայրերին վերաբերող քանից ավելի օսմանյան կանոնների նշանակությունն ու արժեքը հայ պատմագրության համար այն է, որ նրանք իբրև պատմական փաստաթղթեր, բավականին պարզ ցույց են տալիս XVI—XVII դարերում Թուրքիայի տիրապետության տակ ընկած Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության որոշակի պատկերը: Կանոննամեններում պարզ կերպով

պով արտացոլվում են Արևմտյան Հայաստանի տերիտորիայում ապրող ժողովուրդների, գլխավորապես հայ ժողովրդի, իրավազուրկ վիճակը, օսմանյան ռազմա-ֆեոդալական կառավարության և տեղերում նրա ներկայացուցիչների անկաշկանդ և անսահմանափակ ճնշումներն ու բռնությունները (հողերի օգտագործման, հարկերի նշանակման ու գանձման, իրավական դրության մասին), հատկապես հարկային սխտեմում գոյություն ունեցող և, գնալով ավելի ուժեղացող, ապօրինություններն ու շարաշահումները:

Օսմանյան կենտրոնական կառավարությունը, երկրում գոյություն ունեցող ռազմա-ֆեոդալական կարգերը ամրապնդելու և բոլոր ֆեոդալների (սկսած սուլթանից և վերջացրած հասարակ սիփահիներով) վայելած անսահման իրավունքները «կարգավորելու» և որոշ շահով «օրինականացնելու» նպատակով, պարբերաբար հրատարակում էր կանոննամեներ և կանոններ, որոնք արտաքուստ իբր թե կանոնավորում էին ֆեոդալների և իրավազուրկ ռայաթների հողային, հարկային և իրավական հարաբերությունները, բայց իրականում էլ ավելի էին ուժեղացնում նրանց անխնա շահագործումն ու կեղեքումը:

Հայտնի է, որ ժամանակակից թուրք պատմագրությունը փորձում է իդեալականացնել օսմանյան ռազմա-ֆեոդալական պետությունը, այն պատկերացնելով իբրև «օրինականության», «արդարության» և «կուլտուրականության» տիպար՝ բովանդակ աշխարհի և մարդկության համար:

Մինչդեռ կանոննամեները օգնում են հերքելու թուրք պատմագրության կողմից պատմական փաստերն ու իրողությունները կեղծելու ապարդյուն փորձերը:

1. ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻՍՅԵԹԻ ԿԱՆՈՒՆԱՄԵՆ

Գործողության մեջ գտնվող շարիաթական և սովորույթային հարկերի օրենքների օսմանյան դաֆթարի մանրամասնությունն այս է.

1. Բայբուրտի և Էրզրումի սանջակները գրանցելիս [բնակիչները] կայսերական հրամանի համաձայն հին դաֆթարում նախապես արձանագրվել էին: Ռայաթները, առևտրականները և օսմանյան երկրի մյուս բնակիչները չկարողացան տոկալ Հասան փադիշահի կանոնի համաձայն կիրառվող օրենքներին և դիմելով բարձր արքայական գահին, խնդրեցին, որ Ռումի օրենքը [գործադրվի] նաև նրանց նկատմամբ: Արդարադատ և գթառատ նորին վսեմություն [սուլթանը] համաձայնվեց և հրամայեց, որ Ռումի կանոննամեն գործադրվի նաև հիշյալ վիլայեթի բնակիչներին նկատմամբ:

Նորին մեծության հրամանով [այդ բոլորը] նոր դաֆթարում արձանագրվեց, այդ ժամանակից ի վեր Ռումի օրենքն է գործադրվում: Այժմ Էրզրումի և Բասենի սանջակները նորից գրանցվեցին և Էրզրումի բնակչությունը ցանկացավ ունենալ նախկին բարձր հրամանի համաձայն գործադրվող կանոննամեն: Եվ որովհետև Բասենի սանջակը գտնվում է սահմանագլխին, նրա ռայաթների մեծ մասը ցրվել է: Նրանց հավաքելու և նորից [այդ շրջանը] շենացնելու նպատակով փադիշահական բաժր դուան դիմում կատարվեց, որ Ռումի օրենքը գործադրվի նաև նրանց նկատմամբ: Այժմ գրի առնված նոր դաֆթարի համաձայն, նորին կայսերական մեծության ներկայությամբ, սրանց նկատմամբ ևս Ռումի օրենքի [գործադրության] ֆերման տրվեց, նոր դաֆթարում արձանագրվեց և մանրամասնություններով գրանցվեց:*

* Կանոննամեների ժողովածուն կազմող Օ. Լ. Բարկանի ծանոթագրության համաձայն Էրզրումի կանոննամեի մի այլ օրինակում ուղարկության արժանի այս առաջաբանը շարադրված է այլ ձևով ու բովանդակությամբ, որից պարզվում է, որ փադիշահական հասուկ հրամանով կանոնի որոշ հոդվածները վերացվել են և որոշ հոդվածներն էլ թեթևացվել:

2. Չիֆթի հարկի մասին. լրիվ չիֆթ արձանագրված ու-
յաթներից հիտուն ալչե, իսկ կես չիֆթից՝ քսանհինգ ալչե և որոշ
չափով [հող] զբաղեցնող էֆինլու բեննաֆից՝ տասն և ութ ալչե և
բեննաֆ արձանագրված անձերից, հնագույն օրենքի համաձայն,
տասներկու ալչե է գանձվում, քանի որ աղքատ ույաթների հովա-
նավորումը գովելի գործ է:

3. Եթե կայսերական դաֆթարում չիֆթ կամ կես [չիֆթ] և կամ
էֆինլու բեննաֆ արձանագրված ույաթը մահանա և մի քանի որդի
թողնի, հողը պետք է ամուրի որդու [անունով] արձանագրվի.
ամուսնացածները պետք է բեննաֆ արձանագրվեն և բեննաֆի հարկի
հետ միասին հողի հարկի իրենց բաժինը վճարեն ու հողը համատեղ
մշակեն, որովհետև բեննաֆ լինելը ույաթին հողից չի զրկում,
իրականում այն ժառանգական մյուսի նման է. այս տեսակետից
էլ նրանք պետք է համատեղ արձանագրվեն: Նման դրույթյան հա-
րատուության պատճառով այդպիսի կարգ է հաստատվել ույաթ-
ների համար:

Փաղիշահական արդարության համաձայն շնորհ տրվեց և նոր
արքայական դաֆթարում [այդ բոլորը նույն ձևով] արձանագրվեց:

4. Եթե ույաթը մահանա և անչափահաս որդի և չիֆթիք
թողնի, և եթե անչափահասը չկարողանա չիֆթիքը մշակել, սի-
փահին՝ «քո հոր չիֆթիքն է»՝ ասելով, նրանից չիֆթիքի հարկ չպետք
է պահանջի: Մինչև չափահաս դառնալը [չիֆթիքը] որպես ավանդ,
մեկ ուրիշի պետք է տալ, [որովհետև] հողը մշակելն ու ծառայու-
թյուն մատուցելը փաղիշահական օրենքն է: Երբ որբը մեծանա ու
հողը մշակելու կարող դառնա և եթե հորից մնացած ու իբրև ավանդ
տրված հողը [ետ] պահանջի, ապա [հողը] նրան պիտի վերադարձ-
վի: Սիփահին նրանից քափու (tapu) չպիտի վերցնի:

5. Եթե ույաթը մահանա և շատ որդիներ թողնի, նրա հողը
համաձայնության ու համագործակցության կարգով [որդիները]
պիտի մշակեն: Եթե որդիներից մեկը մահանա և եթե [մահացողը]
որդի ունենա, [մահացողի բաժինը] որդուն պիտի փոխանցվի, իսկ
եթե եղբայրն ուրիշների չափով տրված ալչեն տա, պահպանի մա-
հացողի բաժինը, ապա [հողը] եղբորը պիտի տրվի և ոչ թե օտարին:
Եղբոր բաժինը [մյուս] եղբորը հանձնելիս սիփահին իրավասու
մարդկանց (ehli hibre) միջոցով որոշված հասույթից պիտի վերցնի
և խարդախությամբ ավելի ոչինչ չպիտի վերցնի: Իսկ եթե եղբայրը
չհամաձայնվի, այդ դեպքում թիմարի տերը ում որ ցանկանա՝ նրան
պիտի տա [հողը]:

6. Դաֆթարում լրիվ չիֆթ կամ կես չիֆթ գրված ույաթը, եթե

որդի և թոռ ունենա և եթե այդ ույաթի որդին մահանա և հետո
ինքը մահանա, իսկ թոռը մնա, ինչպես որ եղբոր հողը եղբորը չի
փոխանցվում, այնպես էլ պապի հողը թոռանը չի փոխանցվի: Սա-
կայն հատուկ որոշումով քափուն տալուց հետո, եթե նա՝ [թոռը],
պահանջի, [այդ հողը], օտարին չպիտի տրվի:

7. Անհավատները (kefere) պապերից փոխանցված հողերը
նույնպես համագործակցության կարգով պիտի մշակեն, իսկ մին-
չև որբերը հողագործությանը զբաղվելու կարող դառնան, հոր
հողը ավանդ պիտի մնա: Եղբոր հողը՝ եղբորը, իսկ պապի հողը՝
թոռանն է փոխանցվում:

8. Վերոհիշյալ լիվայի անհավատներն իրենց խարաջները վճա-
րելուց հետո, իրենց սիփահիններին, հնագույն օրենքի համաձայն,
ամեն մի հարկատու շնչի դիմաց, չիֆթի հարկի փոխարեն, 25 ալչե
խապենջ (ispenc) պետք է վճարեն: [Իսպենջը] վճարելուց հետո
նրանք իրենց հողի համար չիֆթի հարկ, դեռնյումի հարկ չպիտի
վճարեն:

9. Որոշ սիփահիններ, սիփահինների որդիներ, նյոքարներ և
նյոքարների որդիներ, եթե հնուց հյուսիս (hüccet) չիֆթիք ու
հող ունեն, արձանագրված են խումս (num) տալու հիման վրա:
Նյոքար ու նյոքարի որդի բառերը արևելցիների մոտ նշանա-
կում են սիփահի և սիփահու որդի:

10. Հին դաֆթարում տասանորդ (öşür) արձանագրված անձերից
տասանորդն ու սալարիեն (salâriye) վերցնելուց հետո ավելի ոչինչ
չպիտի վերցվի: Տասանորդ տվողները սալարիեն չեն տալիս: Անհա-
վատներից ոմանք քաղաքում և գյուղում ժառանգաբար անկախ են
դարձել և գնել են մյուսը՝ այգիներ, պարտեզներ ու հողեր: Հին արե-
վելյան էմիրների պարտավորությունների, շարիաթական վավերա-
թղթերի ու աշխարհի ապավեն փաղիշահի հրամանի համաձայն
նրանց այգիներն ու հողերը տասանորդ և սալարիեն տալու հիման
վրա են արձանագրված: Սալարիեն, տասից մեկ տասանորդ վեր-
ցրնելուց հետո, [յուրաքանչյուր] քառասուն քիլից մեկ քիլի պիտի
վերցվի: Խումս տվողները սալարիեն չպիտի տան:

11. Եթե կինը իր ունեցած հողը ամայի չի թողնում և մշակում
է, բահրան ու հարկերը վճարում է, հողը [նրա] ձեռքից վերցնելը
օրենքին հակառակ է:

12. Կրկնակի տասանորդ այն ույաթից պիտի վերցվի, որը՝ իր
սիփահու մշակելու չիֆթիքը թողնելով՝ ուրիշ տեղում հողագործու-
թյամբ է զբաղվում. նրանից [երկու] տասանորդ վերցնելը ընդուն-
ված օրենք է: Սակայն, եթե սիփահու թիմարում մշակության հա-

մար պիտանի հող չլինի, և կամ եթե [նայաթը] իր սիփահու հողում իրեն հատկացված հողը լրիվ ցանելուց հետո, գնա և ուրիշի հողը ցանի, այդ դեպքում ուրիշ տեղում ցանած հողի համար կրկնակի տասանորդ վերցնելը որոշակի անհրավաթյունն է. իր ուժը ներածին շափ [նայաթը] որտեղ էլ որ ցանի, արգելք չկա:

13. Եթե նայաթը իր ձեռքում հող ունենալով հանդերձ, փախչի, սիփահին օրենքով իրավունք ունի նրան իր տեղը վերադարձնելու: Սակայն տաս տարուց ավելի մի տեղում բնակվողին ետ բերելն արգելվում է: Ռայաթի որդին [տվյալ սիփահու] նայաթն է, քանի դեռ ուրիշի մոտ չի արձանագրված: Ուրիշի մոտ արձանագրվելուց հետո կրնդունվի ըստ արձանագրության: Եթե նայաթը մի քաղաքում տասնհինգ տարի ապրի և նամանավանդ եթե նայաթների դաֆթարում արձանագրված չլինի, քաղաքին պիտի կցվի:

14. Օտար (haric) նայաթից քափուի իրավունքով մշակված հողը վերցնելն ու տեղացի (dahil) նայաթին տալն արգելվում է: Օտարի նկատմամբ տեղացի նայաթին նախապատվություն տալն արգելվում է:

15. Գաֆթարում արձանագրված մուսուլման ամուրիներից ոչինչ չի վերցվում: Իսկ եթե ամուրին ամուսնանա, նրանից բեննաֆի հարկ պիտի գանձվի, և եթե բեննաքը հողագործ լինի, [նրանից] ցանֆի հարկ (ekinlu resmi) պիտի վերցվի: Եթե չիֆթ չարձանագրված նայաթները չիֆթիքի տեր դառնան, ապա նրանք պետք է չիֆթի հարկ տան, այդ դեպքում պետք է հաշվի առնվի չիֆթիքի շափը: Իսկ եթե չիֆթիքից ավելի հող ունենան, հարկը պետք է վճարեն ավելի եղածի համաձայն՝ օտար նայաթի նման: Ավել մշակված հողի համար հարկ պիտի տան:

16. Սիփահու մոտ չիֆթիք ունեցող նայաթներից ովքեր լրիվ չիֆթ [են մշակում] լրիվ չիֆթի հարկ պիտի վերցվի, կես չիֆթիք մշակողներից կես չիֆթի հարկ, իսկ կեսից պակաս լինելու դեպքում՝ էֆիլու բեննաֆի հարկը պիտի վերցվի: Սա վերաբերում է տեղացի նայաթներին: Իսկ օտար նայաթը դեռնյալի իրավունք (dönm hakki) պիտի տա. եթե հողը լավն է, ամեն տարի ցանելու դեպքում երկու դեոնյումին՝ մեկ ալչե, իսկ եթե վատ է, ապա երեք դեոնյումին՝ մեկ ալչե գանձելը համապատասխան է հնագույն օրենքին, որովհետև լավ հողի ութսուն դեոնյումը և միջակ հողի հարյուր դեոնյումը մեկ չիֆթիք է համարվում: Դեոնյումը սովորական քայլով՝ ըստ երկարության և լայնության քառասունական քայլ է:

17. Չիֆթի հարկը մարտ ամսին պիտի գանձվի:

18. Ռայաթի ուրիշ գյուղում մշակած բերքից սիփահին կալի իրավունք (harman hakkı) է պահանջել: Քանի որ դա [սիփահու] վրա որպես եկամուտ չի արձանագրված, ապա վերացվում է. ոչինչ չպիտի գանձվի:

19. Մշակման համար պիտանի հողերը եթե նայաթը առանց արդարացի պատճառի երեք տարի շարունակ անմշակ թողնի, թիմարին հասցված վնասը հատուցելու համար թույլատրվում է [հողը] նրանից վերցնել ու քափուով ուրիշի տալ: Սակայն, եթե [հողը] լեռնոտ և բլրոտ վայրում լինի, կամ տեղում ջուր չլինի և [հողը] ամեն տարի մշակելու համար պիտանի չլինի ու անմշակ մնա, [այդ դեպքում] նայաթից վերցնելն ու ուրիշին տալը արգելվում է: Սակայն նայաթի [կողմից] անասունների կալի համար չիֆթիքի մի քանի դեոնյում հողն անմշակ թողնելն ու արոտատեղիի վերածելը չի արգելվում:

20. Քաղաքացու և գյուղացու անասունների համար որպես արոտավայր հատկացված տեղերը ցանելն ու ցանկապատելը հնագույն ժամանակներից արգելված է:

21. Այգուց և պարտեզից բահրա վերցնելը համապատասխանում է շարիաթին և օրենքին: Սակայն [նկատի առնելով] նայաթների տասանորդը վճարելու դժվարությունը, այն վերացնելու համար պետք է [բերքի] տասանորդի քանակը որոշել և խարազ (harac) համարել:

22. Ռայաթները ամրոցների մարդկանց և սիփահիներին [հասանելիք] տասանորդը օրենքով պարտավոր են տանել մոտակա շուկան, իսկ դրսից եկած և մշակությամբ զբաղվողները՝ գյուղերի շտեմարանները:

23. Բերքահավաքի ժամանակ նայաթների հացահատիկը չափելուց հետո սալաք առնողները, առանց հապաղելու, անմիջապես պատրաստ եղած բերքը պիտի չափեն և նայաթներին չձանձրացնեն և չձնշեն. եթե նայաթները, աշխատանքի շատության և կամ անհոգության պատճառով [բերքահավաքը] տաս օր հետաձգելով, վնասի պատճառ դառնան, ապա գյուղի իմամը և քեթխուդան բերքը պիտի չափեն, բահրան առանձնացնեն և երբ տերերը գան, հանձնեն նրանց:

24. Եթե մի որակյալ չիֆթիքում այգի է տնկվում, եկամտի քառորդը պատկանում է թիմարի տիրոջը:

25. [Մինչև այժմ] նայաթի բերքի մեկ հինգերորդից (hums) և դաֆթարում արձանագրված հարկերից բացի, թիմարի տերերը

չիֆթ գրված անձանց տարին մի օր պարհակային ծառայության են պարտադրել և կալի հարկ (harman resmi) անվան տակ մեկական քրիե գարի, մեկ գեր հավ, մեկական... խոտ և հարդի համար տասանորդ են վերցրել:

Այս պարագաները սովորական ապօրինություն լինելու և դաֆթարում (թիմարի տիրոջ) եկամուտ արձանագրված չլինելու պատճառով, փաղիշահական արդարություն համաձայն, վերացվում են:

26. Զրաղացի հարկը (resm-i asiyâb) երկրի մեծ մասում կալի ժամանակ վերցնելը օրենք է դարձել: [Զրաղացի հարկը] հուլիս ամսի իններորդ օրը, որը տաք օրերի (eyyâmî bahur) սկիզբն է, պիտի վերցնի նա ում որ հանձնարարված է: Զրաղացի հարկը պիտի վերցնել դաֆթարում արձանագրվածի չափով, ոչ ավելի:

27. Էրզրումի և Բասենի սանջակներում յալլաղի հարկ (resmi yaylak) անվան տակ զգլբաշները հարյուր ոչխարին մեկ ոչխար և չոբան-բեկի իրավունք (çobanbegi hakkı) անվան տակ, երեք հարյուր ոչխարին մեկ ոչխար են վերցրել և չքավորներին ավելորդ նեղություն պատճառել: Հիշյալ սանջակներում յալլաղ գնացողներին մեծ մասը, Դիարբեքի սովորության համաձայն, չոբան-բեկին և զլլաղի հարկը (resm-i kişlak) Բերրեյեում պիտի տան:

Յալլաղ բարձրանալիս յուրաքանչյուր սանջակի ռայաթներից առանձին յալլաղի հարկ պահանջելու հետևանքով, ռայաթներից ոմանք խիստ տուժել են և թողել հեռացել են երկրից: Նախկինում երբ Դիարբեքի վիլայեթը գրանցվեց և վերոհիշյալ ազգի՝ [զղբ-բաշներին] գործադրած բռնության մասին հայտնվեց նորին վսեմության բարձրագույն գահին, ապա կայսերական էմիրներին, սանջակի բեյերին և սուբաշիներին կայսերական ֆերման տրվեց, որ զլլաղից վերագործողներից և յալլաղ գնացողներից, Մուրադ գետի եզերքին, յուրաքանչյուր երեք հարյուր ոչխարից մեկ ոչխար յալլաղի հարկ վերցվի և բացի դրանից, այդ մարդկանցից, յալլաղի հարկ անվան տակ ոչինչ չառնվի: Երբ վերոհիշյալ մարդկանց ձեռքը ընդարձակ կանոննամե և կայսերական որոշում տալու համար դիմում տրվեց, կայսերական ֆերմանի ոգով առաջնորդվելով, հիշյալ սանջակներում յալլաղի հարկն արձանագրվեց. Բերրեյեում ձմեռողներից, Մուրադ գետի եզերքին, երեք հարյուր ոչխարից մեկ ոչխար պիտի վերցվի, իսկ այնտեղ չձմեռող և ուրիշ վիլայեթից եկած մարդկանցից էլ, օրենքի համաձայն, երեք հարյուր ոչխարից մեկ ոչխար յալլաղի հարկը, ըստ Դիարբեքի սովորության, էմիրները պիտի հավաքեն. այստեղ ձմեռողները, ում հողում որ ձմեռեն, վերևում հիշվածի:

համաձայն՝ զլլաղի հարկը հողի տիրոջը պիտի տան: Դրանից բացի, էմիրները և սանջակի սուբաշիները ուրիշ յալլաղի, զլլաղի հարկ չպիտի պահանջեն: Ժամանակի իշխողները պետք է արգելեն և թույլ չտան [օրենքի խախտումներ]:

28. Հ ա տ վ ա ծ. Ղլլաղ. Եթե որևէ մեկը սիփահու թիմարում ձմեռի և եթե ամուսնացած լինի, որպես զլլաղի հարկ [նրանից] վեց ակչե պիտի վերցվի, և եթե ամուրի լինի, բայց ծուխ (tütün) ունենա, որպես ծխի հարկ (resm-i düd) [նրանից] երեք ակչե պիտի վերցվի: Եվ եթե ձմեռողը ձմեռած վայրում երկրագործությամբ զբաղվի, հողի հարկ (resm-i zemin) պիտի տա, բայց զլլաղի հարկ չպիտի տա: Զմեռող անձը երեք տարի զլլաղի հարկ պիտի տա, իսկ եթե երեք տարուց ավելի ձմեռի՝ [նրանից] բեճնաքի հարկ պիտի վերցվի:

29. Քանի որ հիշյալ վիլայեթը սահմանի վրա է գտնվում, ռայաթների մեծամասնությունը ցրվել է, երբ սիփահուները նրանց [նորից] հավաքեն, պետք է որ [հավաքվածները] ուրիշ տեղում ռայաթ արձանագրված չլինեն: «Դաֆթարից դուրս է» ասելով, դրսի էմիրները և միջնորդները չպիտի միջամտեն: Ըստ օրենքի [նրանցից] երեք տարի ծխի հարկ, իսկ երեք տարուց հետո՝ բեճնաքի հարկ պիտի գանձվի:

30. Հ ա տ վ ա ծ. Աղնամ (ağnâm), տեղացիների մոտ ոչխարի հարկը (resm-i ağnâm) երկու ոչխարին մեկ ակչե է. և ոչխարի հետ միասին գառն էլ հաշվելը օրենք է դարձել: Եթե Հայմանա և Յուզ-դեջիները* ոչխարը կոտորվի և ոչինչ չմնա, և կամ եթե ոչխարի հարկը բեճնաքի հարկի քանակի չափով լինի, այդպիսիներից բեճնաքի հարկ պիտի վերցնել, ոչ ավելի: [Սրանից առաջ] Յուզդեջիների յուրաքանչյուր հարյուր ոչխարից քառասուն ակչե է վերցվել: Այդ կապակցությամբ ներկայումս Բարձրագույն Գահին դիմում եղավ, ուստի և հրամայվեց, որ նրանցից ևս մյուս ռայաթների նման երկու ոչխարից մեկ ակչե վերցվի: Եվ որոշված է ոչխարի հարկը ապրիլ ամսին վերցնել:

31. Հ ա տ վ ա ծ. Աղբլի հարկը (ağıl resmi). [ոչխարը] ձմեռելու զեպքում յուրաքանչյուր հոտից յաթաղի հարկ (resmi yatak) անուճով մի միջակ ոչխար [առնելը] օրենքով որոշված է. դրա հիման վրա արձանագրվեց կայսերական նոր դաֆթարում:

* Գողթրական ցեղեր են:

32. Հատված. փեթակի տասանորդ (küvvare öşrü). մեղրի փոխարեն լավագույն փեթակից երկու ակչե և վատից՝ մեկ ակչե պիտի գանձեն:

33. Երբ մի թիմարում նախապես փեթակ ու ոչխար, այգի ու պարտեզ և ջրաղաց գոյություն չեն ունեցել և հետո են երևան եկել, [դրանց] տասանորդն ու հարկերը թիմարի տիրոջը պիտի պատկանեն:

34. Փեթակի հարկը (resmi kovan) և ջրաղացի հարկի նման հուլիսի 9-րդ օրը, այսինքն՝ տաք օրերի առաջին օրը պիտի վերցվի:

35. Հատված. Ամուսնության հարկերը (rüsümü 'arusane). կայսերական և միրելիվայի խասերում և զեամեթներում և այլ ազատ թիմարներում կույս աղջիկներից վաթսուս ակչե է՝ յոթի կանանցից՝ երեսուն ակչե պիտի գանձվի: Այլ թիմարներում ամուսնական հարկի կեսը [թիմարի] տերերը պիտի վերցնեն և [մյուս] կեսը՝ սանջակում արձանագրված սանջակի պետերը (zabit): Զեամեթում արձանագրվածները [ամուսնության հարկերը] զեամեթի պետերին պիտի տան, իսկ կույս աղջկա հայրը ամուսնության հարկը, աղջիկը ուր էլ որ գնա, պիտի տա նրան՝ որի ուսյաթն է ինքը: Այրի կինը ամուսնության հարկը պիտի տա այն հողի տիրոջը, որտեղ ապրում է. սա օրենքին համապատասխան է: Յուրուք և Յուզդեջինները որոշակի տեղ չունենալու և իրենց ծնողներին ենթարկվելու պատճառով, կույսն ու այրին [նրանց մոտ] միատեսակ են համարվում: Զեամեթի և թիմարի տերերի աղջիկները, եթե արձանագրված են սանջակում, իրենց ամուսնության հարկը պետք է սանջակին տան, իսկ եթե արձանագրված են կայսերական խասերում, ապա [այդ հարկը] կայսերական խասին [պիտի տան]:

36. Վերոհիշյալ լիվայում գտնված և բռնված ստրուկներն (abdi 'abik) ու ստրուկուհիները (kenizek) և անասունները, ով էլ որ [նրանց] բռնի, պետք է բերի և հանձնի կայսերական խասի էմիններին և օրենքի համաձայն ստանա իր վարձատրությունը: Եթե [նրանց] տերերը չգտնվեն, ընդունված ժամկետը լրանալուց հետո վիլայեթի դատավորի միջոցով աճուրդով պիտի վաճառվեն և արժեքը պիտի գանձվի հօգուտ պետության: [Գտնված կամ բռնված] ստրուկներ և ստրուկուհիներ պահելու սովորական ժամկետը երեք ամիս է: Հագուստ, կերպաս, կարպետ, և այլ իրեր գտնողն իր գրտածը պետք է հանձնի վերոհիշյալ էմիններին, չպիտի թաքցնի, իսկ եթե թաքցնի, պիտի պատժվի:

37. Հատված. Անասունների տուգանքները: Եթե ուսյաթի ձին կամ եզը և այլ անասունը [մի ուրիշի ցանքին] վնաս պատճառի, ցանքի տիրոջ վնասը հատուցելուց հետո անասունի տիրոջը հինգ

գավազանի հարված պիտի խփվի և յուրաքանչյուր անասունի համար հինգ ակչե տուգանք պիտի վերցվի: Իսկ սիփահին որպես դեշտբանի (deştbanî) ուսյաթների յուրաքանչյուր տանը հինգ ակչե չպիտի նշանակի և ոչինչ չպիտի վերցնի:

38. Հատված. Վերոհիշյալ լիվայում կադինները (դատավորները) իրենց կազայում ապրող անհավատների սխալ ծիսակատարությունները կատարված ամուսնության համար անչափահաս տղաներից և աղջիկներից և խնամակալը կորցրածներից ոչինչ չպիտի պահանջեն, և նրանց հետ վարվեն եղած նվիրական որոշումների համաձայն: Նվիրական հրամանին հակառակ ամուսնության փող (nikâh akçesi), ժառանգության բաժին (resmi kismet) անվան տակ ոչինչ չպիտի վերցնել: Այս լիվայում որոշ հոգևորականներ, որոնք հայտնի են սևագլուխներ (karabaşlar) անունով, իրենց իրավասության տակ վանքեր ունեն. այդ վանքերի համար նրանց վրա առաջնորդական հարկ (marhasiye akçesi) անվան տակ որոշ քանակությամբ ակչե է արձանագրված. [հարկերը] դաֆթարի համաձայն վճարելուց հետո, նրանք իսպենջ չեն տալիս: Իրենց սխալ ծիսակատարության համաձայն նրանք գոյություն ունեցող ամուսնության հարկերը և բեյրաւմալները (beytülmaî) պիտի տնօրինեն եղած նվիրական որոշումների համաձայն և ըստ իրենց հայեցողության. ոչ ոք արգելք չպիտի լինի: Եթե անհավատներից մեկը գա և վերոհիշյալ վանքերից մեկում ծառայության մտնի և կամ իրենց սխալ ծիսակատարության համաձայն սովորի, ապա հին սիփահուն իսպենջը վճարելու դեպքում, վանքի սիփահին նրանից իսպենջ չպիտի պահանջի: Հիշյալ վանքերը ցանած ու հնձած արտերի համար բահրա պիտի տան: Այս վանքերի, ջրաղացներից, այգիներից, պարտեզներից և արտերից նոր դաֆթարում արձանագրվածից ավելի ոչինչ չպիտի վերցնել: Եթե սիփահինները հակառակ օրենքի պահանջներ ներկայացնեն, ժամանակի իշխողները թույլ չպիտի տան:

39. Հացահատիկի [վաճառքի] բաշը: Եթե ցորեն ու գարի են բերում քաղաք ու վաճառում, ապա ամեն մեկ մյուզդից (müdd) կես քիլո [բաշ պետք է] վերցնել. մյուս հացահատիկներից՝ նույն ձևով: Եթե ալյուր է բերվում, ապա ամեն մի վեց քիլո [ալյուրի] համար վաճառողից երկու ակչե պիտի վերցնել: Ստամբուլի քսան քիլոն հավասար է մեկ մյուզդի:

40. Հաշվառուները (muhtesib) քաղաքում և քաղաքից դուրս գյուղերում ման գալով՝ բանջարանոցների կանաչեղենից, սեխից

ու ձմերուկից և այլ բազմատեսակ մրգերից, ինչպես նաև յուրաքանչյուր գյուղի համար [դաֆթարում] արձանագրված եկամտի ամեն մի հազար ակչից մեկ ակչե, ամեն մի ջրաղացից՝ երկու ակչե և ամեն մի ձիթհանից 20 ակչե ինքիսարիյե (ihitisabiye) անվան տակ օրենքին հակառակ հարկ են պահանջել: Դրանք հայտնի ապօրինություն լինելով, Նորին Վսեմություն բարձր հրամանով վերացվում են:

41. Հատված. Գիշերապահության ('asesiye) համար քաղաքի առևտրական խանութներից ամեն ամիս երկու ակչե և արհեստավորների խանութներից՝ մեկ ակչե պիտի գանձվի: Սակայն հիշյալ առևտրական և արհեստավորական խանութներից ասեսիյե գանձելիս, նկատի պիտի առնել ունևորին, միջակին և շունևորին, [այնպես որ] ընդհանուր հաշվով ամեն մի առևտրական խանութից երկուական ակչե, արհեստավորական խանութից մեկական ակչեի հաշվով պիտի գանձել և ոչ ավելին: Շուկայում գտնվող խանութներից, որոնց գիշերապահ չի հսկում, ասեսիյե չպիտի գանձել:

42. Հատված. Ջրելու իրավունք (hakki şarb). վերոհիշյալ լիվայում ջրի մի քանի առու կա, որոնցով գյուղերի ցանքսերն են ջրում: Սրանից առաջ վերոհիշյալ վիլայեթը գրանցող էմիրը կայսերական դաֆթարում արձանագրել էր, որ առուների ջուրը բավարար է գյուղերի ցանքսերի համար: Սակայն հուլիս ամսին ջուրը քչանալու պատճառով չի բավարարում. հերթի սպասող և իրենց հողերը ջրելու իրավունք ունեցող անձանց հիշյալ ջուրը չտալով. մոտակա գյուղերի բնակիչներին ջուրն ըստ ցանկության ավելի գնով վաճառելով, [ջրի տերերը] ուսյաթներին նեղություն և բռնություն են պատճառել: Հիշյալ ջուրը՝ ջրելու իրավունք ունեցողներին է և ոչ ոքի սեփականությունը չէ. ջուրը վաճառելը օրենքին հակառակ է: [Հետևաբար] ժամանակի իշխողները [ջրի վաճառքը] պիտի արգելեն: Որոշ առուների հոսող ջրերը որոշ մարդկանց մյուլք և վակֆ են արձանագրվել ու իբրև կալվածք (malikâne) սեփականացվել են: Այնուհետև այս վիլայեթը կրկին անգամ գրանցելու ժամանակ առուների գրությունը մանրակրկիտ ուսումնասիրվեց, պարզվեց, որ հիշյալ լիվայի գյուղերի մի մասը քայքայվել, իսկ որոշ գյուղեր ծաղկել են: Մյուլքի կամ վակֆի [իրավունքով] առուները սեփականացնողները ջուրը վաճառել են հարուստներին՝ ըստ նրանց ցանկության ոմանց գիշերային և ոմանց ցերեկային հերթը: Որոշ գյուղերի ուսյաթների արտերը մնացել են առանց ջրի, ցանքերը չորացել և փչացել են, [որովհետև նրանք] ավելորդ գումար վճարելու կարողություն չեն ունեցել: Դրանով ուսյաթներին խիստ նեղություն է պատ-

ճառվել. երբ [այս մասին] Բարձրագույն Աստանին դիմում եղավ, որոշվեց՝ աղքատներին ջրից չզրկելու համար մյուլքն ու վակֆը սահմանված հերթով նորից իրենց տերերի վրա արձանագրվեն, որպեսզի ջրից օգտվող ուսյաթները նախկին ձևով հաշվի առնվեն: Բարձրագույն հրամանի համաձայն այս ամենը կայսերական նոր դաֆթարում արձանագրվեց ի գործադրություն:

43. Հատված. վերոհիշյալ լիվայի բերդերի, սանջակի՝ բեյերի նվազախմբերի (mehter) [նվազողները] տարին մի քանի անգամ ուսյաթների մեջ ման գալով՝ «տղա ամուսնացրիք և աղջիկ մարդու տվիք, ձեր բոլոր հավաքություններից մենք հնգական ակչե [առնելով] սովորություն ունենք» ասելով, օրենքին հակառակ, բռնի կերպով նրանցից փող են վերցնում, իսկ գյուղի նվազողներն էլ՝ «մեր շնորհիվ գյուղերում ամեն օր նվազում եք» ասելով [նրանցից] տուգանք են վերցնում: Այս պարագան ևս ակնհայտ ապօրինություն լինելով, վերացվում է: Այսուհետև դա չպիտի արվի: Ժամանակի իշխողները պետք է արգելեն [այդպիսի ապօրինությունները]:

44. Երկրի կարգ ու կանոնի պաշտպանության համար մարդասպաններին, գողերին և ավազակներին ըստ արժանավույն պատժելը սանջակի ձիավոր բեյին է [վերաբերում]: Սակայն օրենքով և շարիաթով եթե [հանցագործները] ներվեն, «պատժի փոխարեն» (bedeli siyaset) անվան տակ ակչե գանձելը հին օրենքին հակառակ է: Մահապատժի դատապարտվածից տուգանք չպիտի գանձվի, սակայն ներման արժանանալու դեպքում, տուգանքը ուսյաթի տիրոջը պիտի պատկանի:

45. Բռնաբարոդից, եթե ամուսնացած լինի, գանձվող տուգանքը հարստից չորս հարյուր, միջակից՝ երկու հարյուր և աղքատից՝ հարյուր ակչե է:

46. Բռնաբարոդից, եթե ամուսնացած լինի, գանձվող տուգանքն է՝ բարեկեցիկից երեք հարյուր, միջակից երկու հարյուր, իսկ աղքատից հարյուր ակչե: Եթե բռնաբարոդը չափահաս ամուլի լինի, համապատասխան կարգով երկու հարյուր հիսուն ակչե պիտի գանձվի:

47. Աչք հանող և ձեռք կտրող անձից... տուգանքը (?)*:

48. Եթե մեկը գլուխ ձեղքի և ոսկրը երևան փա, կամ ատամը ջարդի, սրի, փայտի և պատերազմական այլ զենքով մեկին վիրավորի և վիրավորվածը անկողին ընկնի, [նրանից] հարյուր ակչե

* Բնագրում հոդվածը թերի է:

խուզանք^ք պիտի գանձվի, իսկ դրանից թեթև հանցագործության համար, որը նկատողության և կշտամբանքի արժանի լինի՝ երեսու՜ ակշի: Հարվածողից, [եթե հետք թողնի], տաս ակշի տուգանք գանձելն ընդունված սովորությունն է:

49. Սանջակի բեյերի, սուբաշիների և նրանց մարդկանց կողմից տուգանված անձերից առանց քննության և հանցագործությունը բացահայտելու, դրամ վերցնելով ազատելն արգելվում է: Այդպես վարվող անձինք հանցավոր են և կշտամբանքի արժանի:

50. Նախքան վիլայեթի դատավորի մոտ և քննիչների ներկայությամբ հանցագործությունն բացահայտելն ու ապացուցելը և [հանցագործին] առանց համապատասխան մարդկանց հանձնելու տուգանելն ու պատժելը շարիաթին ու օրենքին հակառակ է: Սակայն եթե մեղադրյալը և հանցագործը կամակորոնություն անեն և հրաժարվեն դատարան ներկայանալ, այդ դեպքում [նրանց] բռնի կերպով դատարան բերելը չի արգելվում:

51. * * * *

52. Էրզրումի լիվայում քրդերի մուկաբաան միրիմիրանին եկամուտ է գրված, դրսի քրդերը դաֆթարից դուրս մնացած քրդերն են: Որոշ գյուղերում արձանագրված քրդերից լրիվ ոչխարի հարկը, ամուսնուրյան հարկը, բաղիհեվան միրիմիրանի կողմից [նշանակված] հիշված մուկաբաայի պաշտոնյաները պիտի վերցնեն. բեննաֆի հարկը՝ հող մշակելու դեպքում որոշված չափով, [չիֆրի հարկը] և ղշլաղի հարկը՝ հողատիրոջը պիտի վճարվեն: Եթե հիշյալ ցեղից գրանցված մարդիկ ցանկանան գնալ ուրիշ տեղ, սիփահին համաձայն դաֆթարի արգելելու [իրավունք ունի]:

53. Գրանցման ժամանակ յուրաքանչյուր գյուղում կայսերական դաֆթարում շարձանագրված և դուրս մնացած ուսյաթների հարկերը դարձյալ գյուղի վրա պիտի հաշվվեն և «դրսից» է ասելով՝ միջամտություն չպիտի լինի: Գյուղում բնակվողների հարկերը նույնպես գյուղի վրա պիտի հաշվվեն. «դրսից է» ասելով միջամտություն չպիտի լինի: Գյուղերում բնակվող... թուրքմեններից (Terakeme) ուսյաթների նման ամուսնուրյան հարկը և բաղիհեվայի կեսը բնակված գյուղի վրա պիտի հաշվվեն: Օտար [ուսյաթի], (դաֆթարից դուրս մնացածի) հարկերը, առանձին գրված լինելով, յուրաքանչյուր գյուղի սիփահին պիտի ստանան:

54. Ըստ արևելյան սովորության՝ հին դաֆթարում նյութար արձանագրվածի որդին նոր դաֆթարում նյութարի որդի պիտի արձա-

նագրվի: Հիշյալ դասակարգից [նոր դաֆթարում] շարձանագրված անձինք, հին դաֆթարի և կայսերական 940 թվականի* և միրիմիրանի ավելի հին բերաթի հիման վրա, եթե նրանց սիփահին լինելը վկայությամբ ապացուցվի, դաֆթարում սիփահին որդի պետք է արձանագրվեն: Արձանագրված անձինք, եթե իրոք սիփահին որդի են, բնակված տեղում հարկերն ու բահրան վճարելուց հետո եթե ցանկանան ուրիշ տեղ գնալ, սիփահին արգելք չպիտի հանդիսանա:

55. Այս լիվայում բերդապահները մեծ մասամբ թիմարի տեր են եղել: Եկամտի տեսակետից բերդապահները հայտնեցին, որ «եթե մեր եկամուտը սիփահին [եկամտի] նման լինի, մեր ծառայության նկատմամբ մեծ անարդարություն կլինի»: Այդ պատճառով ընդունվեց, որ բերդապահների տարեկան եկամուտը, իրենց ծառայած ամիսների և օրերի համաձայն բաժանվի և բերքահավաք (hasad) չհամարվի:

56. Մենաստաններում (zaviye) ապրողները և նրանց ժառանգները, որոնք իրենց ձեռքում կայսերական բերաթ ունենալով, հին և նոր դաֆթարներում ոչ ոքի (ոչ մի սիփահին) իբրև ուսյաթ չեն գրանցված, իրենց բնակավայրի և ձեռքում ունեցած հողի հարկերն ու բահրան և դեշտաբանին՝ հողատիրոջը պիտի վճարեն, իսկ ամուսնուրյան հարկը և բաղիհեվան միրիմիրանին պիտի պատկանի:

57. Հիշյալ քսաներեք գյուղերի ուսյաթները, վերոհիշյալ կազայում եղած պաղլեղի (şab) շորս հանքերում աշխատելու համար շիզիցից, իսպենջից, բահրայից և այլ հարկերից, ինչպես և աջեմի օղլանից, ավարիզից, ֆյուրեֆչիից և սովորուրայից հարկերից (tekâlif-i öriye) ազատված են եղել: Հնուց ի վեր նրանք շաբխանաներում (պաղլեղի հանքերում) աշխատել են որպես գործավոր: Դրա համար էլ վերոհիշյալ գյուղերի անհավատների խաբաջն ու իսպենջը, բահրան ավարիզը և այլ հարկերը պետության հաշվին բրոնագրավելու համար ֆերման էր տրված: Ավելի քան երկու տարի հիշյալ հանքերը աշխատեցնելուց հետո, Էրզրումի մուկաթաաի վերահսկիչներ Մեֆեր բեյը և Մեհմեդ բեյը և խաս կալվածների տեսուչ Էրզրումի կադի Մեվլանա-Մուսլեհեդդինը, դիմելով Բարձրագույն Ատյանին՝ հայտնեցին, որ շաբխանի գյուղերի հողերը քարքարոտ են, մշակության համար պիտանի հողը քիչ է և գյուղացիների ապրուստը մեծ դժվարությունների հետ է կապված. չքավորներից ոմանք խաբաջն ու իսպենջը և այլ հարկերը վճարելու կարողություն

* 940 թ. հիշրի=1533/34 թթ.

* 51-րդ հոդվածն աղավաղված և անհասկանալի է:

չունենալով՝ լքել են հայրենիքը և սմանք էլ ցրվելու վրա են: Հին ժամանակներից ի վեր հիշյալ գյուղերի անհավատների սպասարկած շորս հանքից բացի, Չորաք և Հին Քիլիջե գյուղերի մոտերքում ևս երկու շաբի հանք է հայտնաբերվել: Ամառ և ձմեռ, առանց կանգ առնելու, ամեն մի հանքավայրում քսանչորս հնոց վառելով, քսանչորսական շաբի հորեր արտադրություն են տալիս: Այս կերպով արտադրված շաբի կեսից ամեն մի մենի համար, որպես ռանչպարի բաժին (hisse-i rençberân) երեք ալիշ է տրվում: Ըստ հին որոշման [հարկերից] ազատելով աշխատեցնելը պետական գանձարանին շահավետ համարելով, վերոհիշյալ ստրուկների (bende) մասին 976 թվականի* ռամազան ամսի 20-րդ օրը Բարձրագույն հրաման տրվեց, որպեսզի ստուգվի, թե նոր հայտնաբերված երկու հանքերով միասին բոլոր վեց հանքերում շահագործման հանձնված 124 հորերում արտադրված շաբը՝ շտեմարաններում պահելով, հնարավոր է վաճառել և դրամի վերածել թե՞ ոչ. թե՞ պետության համար շահավետ է գործնականապես եղածի համաձայն, շաբի հանքերը վարձու աշխատանքով աշխատեցնելը և վերոհիշյալ գյուղերի անհավատներին խարաջից և իսպենջից և այլ հարկերից՝ ավարիզից, քյուրեֆչի և աջեմի-օղլանից ազատելը: Պետության համար որ ձևը իրապես շահավետ համարվի, դա էլ նոր դաֆթարում պետք է արձանագրվի: Այս իմաստով ֆերման տրվեց: Երբ գործին ծանոթ մարդիկ մանրակրկիտ կերպով քննեցին վերոհիշյալ գյուղերի ուսյաթների վիճակը, պարզվեց, որ երկու տարուց ի վեր հարյուր ութսուն ընտանիք լքել են հայրենիքը և նրանց ուր գնալը հայտնի չէ. նրանց խարաջից, իսպենջից և այլ հարկերից ոչ մի եկամուտ չի ստացվել: Երբ պարզվեց, որ հիշյալ հանքերում ըստ հին կարգի, հարկերից ազատված հանքափորեր չլինելու և մյուս գործավորների ցրվելու հետևանքով հանքերում գործավորների խիստ մեծ կարիք է զգացվել և որ հանքերում աշխատելու գործին անձանոթ անհավատների այդտեղ աշխատելը պետական գանձարանին անտարակույս մեծ վնաս պիտի պատճառի, որոշվեց, որ վերոհիշյալի համաձայն գյուղերի հանքափոր ուսյաթները, հնուց հայտնի շորս հանքերից բացի նոր հայտնաբերված երկու հանքերում էլ տարեկան քսանչորսական հնոցներում շաբի պաշար արտադրեն և կուտակեն: Ամեն տասնհինգ օր մի հորի շաբ տալը կապահովի հիշյալ հանքերի ուժեղացումը և կնպաստի պետության եկամտին: Հանքափոր ուսյաթ-

* 976 թ. հիշրի=1569 թթ.

ների, վերև հիշված ձևով հարյուր քառասունչորս հոր շաբի արտադրություն մեջ ընդունելով և նախկին որոշման համաձայն նրանց [գործավորներին] հարկերից ազատ լինելը դաֆթարում արձանագրվեց:

Ստամբուլ, Բաշվեթալեթի արխիվ,
Դաֆթար № 700
Թվականը՝ 1540 (947)

2. ԵՐՋՆԿԱՅԻ ԿԱՆՈՒՆԸ

Երզնկայի վիլայեթի մանրամասնությունները և եկամուտների դաֆթարը

1. Երզնկայի վիլայեթի գյուղերի եկամտանքների ընդարձակ կա-
նունամեն՝ ըստ օսմանյան օրենքի, և բաշի բամդան (bâc-i tamğa)
ըստ Հասան փաղիշահի կանունի:

2. Չիֆթ ունեցող ու մեկ չիֆթլիքի սահմանում հող մշակելու
կարողութուն ունեցող և այս վիլայեթում բնակվող մուսուլման ու-
յաթներից հիսունական օսմանյան աղչե չիֆթի հարկ է գանձվում:
Նրանցից, ովքեր չիֆթ չունեն և երկրորդ անգամ են ամուսնանում,
տասներկուական աղչե բեննաֆի հարկ է գանձվում: Նրանցից, ով-
քեր ամուրի լինելով իրենց ծնողներին չեն ծառայում և առանձին,
իրենց հատուկ աշխատանքով են զբաղվում, այդպիսիներից վեցա-
կան աղչե շաբա բեննաֆի հարկ (resm-i caba bennak) է գանձվում:
Անհավատներից վերոհիշյալ հարկերը չեն վերցվում, սակայն
ամեն մեկ հարկատուից քսանհինգական աղչե իսպենջ է գանձվում:

Չիֆթ չունեցող բեննաք կոչված մուսուլմաններից, եթե որոշ
քանակությամբ հող ունենան, ըստ մշակած հողի քանակի ամեն
երկու դեոնյումից մեկ օսմանյան աղչե է գանձվում:

Վերոհիշյալ հարկերը թե՛ անհավատներից և թե՛ մուսուլման-
ներից գանձելու ժամանակը գարնան սկիզբն է՝ մարտ ամիսը: Այդ
ժամանակ պիտի վերցնել, դրանից առաջ չի կարելի:

3. Արձանագրված է, որ մուսուլմանների և թե՛ անհավատների
ցանքսերից [հարկը] հինգից մեկի (hums) հիման վրա պիտի վերց-
նել:

Սակայն, արձանագրված է, որ մուսուլմանների այգիներից,
բամբակից, պտուղներից և բանջարանոցներից յոթից մեկը պիտի
վերցնել:

4. Քաղաքի բնակիչ մուսուլմաններից բեննաֆի հարկ չի գանձ-
վում. արձանագրված չէ: Նրանց հացահատիկներից և այն բոլորից
ինչ որ ունեն, հարկը տասանորդի (öşür) հիման վրա պիտի վերց-
նել. այդպես է արձանագրված:

5. Ամուսնության հարկը (resm-i 'arusiye), աղջկանից վաթսուն
և այրի կնոջից՝ երեսուն աղչե ամուսնության հարկ է գանձվում:
Աղջիկը ուր որ էլ հարս գնա [ամուսնության հարկը] հոր սիփահին
պիտի վերցնի: Այրի կինը որտեղ որ ամուսնանում է, այնտեղ էլ
պիտի ամուսնության հարկը գանձեն:

6. Մեղրի հարկը (resm-i 'asel) ստացված մեղրի տասանորդի
հիման վրա պետք է վերցնել:

7. Ջրաղացի հարկը (resm-i 'asiyâb) յուրաքանչյուր ջրաղա-
ցից ամսական հինգական աղչեի հաշվով պիտի գանձել, որը տարե-
կան անում է վաթսուն աղչե:

8. Ոչխարի հարկը ('adet-i agnâm). յուրաքանչյուր երկու ոչ-
խարից մեկ աղչե պիտի գանձել:

9. Յայլաղի հարկը. յուրաքանչյուր յայլաղ գնացողից, որը
չորքոտանիներ, ունի, մեկ նուկի յուղ պիտի վերցնել, որ հավասար
է երկու հարյուր դիրհեմի:

10. Տուգանքներ անասունների պատճառով վնասների համար
(cerayim-i hayvanat): Եթե ձին, կովն ու եղը ցանքս մտնեն և վնաս
պատճառեն, ամեն մեկ անասունի համար հինգ աղչե տուգանք է
գանձվում: Ցանքի տիրոջ վնասը անասունի տերը պիտի հատուցի:
Ամեն մի անասունի [պատճառով վնասի] համար, իբրև պատիժ,
տիրոջը հինգ գավազանի հարված պիտի տան: Սակայն նման
գեպքում յուրաքանչյուր տնից որոշ գումարի աղչե չպիտի գանձել:

11. Հացահատիկների գինը ևս Ստամբուլի քիլեով պիտի հաշ-
վել, որը հավասար է քսան վալիեյի: Յորենի քիլեն՝ ութ աղչե,
գարու և կորեկի քիլեն՝ վեց աղչե, շիրայի բաթմանը՝ հինգ աղչե,
պտուղների բաթմանը՝ երկու աղչե հաշվելով եկամուտ է գրված:
Սակայն թիմարի տերը բահրան նույնությամբ պիտի վերցնի և ինքը
վաճառի, ավելի կամ պակաս... (?) և վնասը իրենն է, ռայաթից
աղչե չպիտի պահանջի, օրենք չէ:

12. Երզնկայի վիլայեթի վալի Եղած գյուղերից, հնուց ի վեր
[բերքի] տասից երեքն է վերցվել, երկուսը դիվանի (divanı), մեկը՝
մալիֆանե (malikâne): Դարձյալ առաջվա նման տասից երկուսը
դիվանի և մեկը՝ վալիֆի համար արձանագրվեց. դիվանին [հատկա-
ցվեց] թիմարին, իսկ վալիֆին՝ մզկիթների և մեղրեսների կարիք-
ներին. [այդ բոլորը] տեղն ու տեղը արձանագրվեց:

Հասան փաղիչանի օրենքի համաձայն Երզնկայի մեծ բաշի (bac-i büzürk) և սև քամդայի (tamğa-i siyah) մանրամասնությունը:

13. Տաս բաթման մաքուր մետաքսի բեռից երկուսը թողնելով, ութ բաթմանը հաշվվում և բաշ է վերցվում: Բաթմանը տասներկու նուկի, յուրաքանչյուր նուկին 160 դիրհեմ, մեկ բաթմանը 1920 դիրհեմ են հաշվում: Հիշված բաթմանը Հասան փաղիչանի բաթմանն է: Մետաքսի բեռի յուրաքանչյուր բաթմանից՝ 81 սև աղչե (karaca akçe) բաշ են վերցրել, 10 սև աղչեն՝ որպես Կամախի և երեք սև աղչեն՝ որպես Երզնկայի բաշ: Երեք սև աղչեն հավասար է մեկ օսմանյան աղչեի: Ամեն մեկ բաթմանից չորս սև աղչեն, որպես սև քամդայի իրավունք, մեկ սև աղչեն՝ որպես գրագրության իրավունք (hak-ül-kalem) և մեկ սև աղչեն՝ որպես ստացականի հարկ (resm-i kabizane) են գանձում: Վերոհիշյալ [գումարները] գանձում են առևտրականներից: Որպես ռեհդարլիք (rehdarlık) ամեն մեկ բեռից վեց սև աղչե են գանձում: Թուրքմեններից ևս ամեն մեկ բաթմանից հիսունհինգ սև աղչե են գանձում. տաս աղչեն որպես Կամախի բաշ, քառասունհինգ աղչեն՝ որպես Երզնկայի բաշ, մեկ սև աղչեն՝ որպես գրագրության իրավունք, մեկ սև աղչեն՝ ստացականի իրավունք և վեց սև աղչեն՝ որպես դիհդարլիք (dihdarlık): Եվ موزو كشان (?) [կոշված] մետաքսյա կերպասից և նման [ապրանքների յուրաքանչյուր] բաթմանից հարյուր վաթսուն սև աղչե բաշ են վերցնում. քսան աղչեն իբրև Կամախի բաշ և հարյուր քսան աղչեն՝ Երզնկայի բաշ. [բացի այդ] յուրաքանչյուր բաթմանից ութ սև աղչե՝ որպես սև քամդայի, երկու սև աղչե՝ գրագրության իրավունք և երկու սև աղչե՝ որպես ստացականի իրավունք են գանձում: [Այս ապրանքների] անցման ճանապարհին մեծ բաշ են [առնում], եթե [ապրանք] քաղաքում ծախվի սև քամդա (tamğa-i siyah) են վերցնում և վերևի կողմից [ճանապարհից] եկած ցինկի յուրաքանչյուր բեռից երեք հարյուր սև աղչե, խորասանի [ցեմենտի] բեռից՝ հարյուր հիսուն աղչե, լյոք (löğ) կոշված ներկի բեռից՝ վեց հարյուր սև աղչե, կուրթ-կուլաղի (kurt kulagi) բեռից՝ երեք հարյուր սև աղչե, աղյուսի բեռից՝ երկու հարյուր աղչե են գանձում... եթե [ապրանքը տրանզիտ] անցնի, յուրաքանչյուր քիլից երեք հարյուր սև աղչե բաշ են վերցնում: Սպիտակ ծամոնի բեռից ութսուն, կասնիթ* բեռից՝ հարյուր հիսուն սև աղչե են վերցնում: Սրանք ևս եկող և անցնող բեռներին են վերաբերում: Պողպատի բեռից երեք հարյուր սև աղչե են վերցնում: Յուրաքանչ-

* Կասնի (թուրք.), բժշկության մեջ գործածվող թույն է:

չյուր գերուց հարյուր հիսուն սև աղչե են գանձում, սրանք էլ անցնողների բաշին են վերաբերում: Եթե գերին վաճառվի, ամեն մեկ շնչից հարյուր հիսուն սև աղչե բաշ են վերցնում: Մարգարիտի և մուշկի քառասուն մսխալից մեկն են վերցնում:

Վերևի կողմից եկող մսխալի (miskali), միլի (mili) և այլ տեսակի կերպասները, եթե քաղաքում վաճառվեն, պետք է դրոշմել: Ռումի (Սվաղ) վիլայեթի կերպասեղենից, ինչ տեսակի էլ որ լինի՝ սոֆ, տաֆտա, վալե, չուխա և այլ նման ապրանքներից հարյուրից հինգն են վերցնում: Կարված խալաթից (քաֆթան) և կարված չուխայից, գործածված մետաքսից ոչինչ չի գանձվում:

Տրապիզոնից բերված վուշե գործվածքեղենը, եթե քաղաքում վաճառվի, [վաճառողը] ինչ ազգից էլ որ լինի, յուրաքանչյուր թուփից տասը սև աղչե պիտի վճարի: Տրապիզոնից բերված վուշե հագուստներից հարյուր հիսուն սև աղչե են վերցնում: Ռումից բերված պղինձը, շաքարը, գորգը, կաշվեղենը, բուլգարին*, դանակը և այլ մանր ապրանքներ եթե Երզնկայում վաճառվեն, հարյուրից հինգը քամդա են վերցնում: Շաքարի բեռից հինգ հարյուր սև աղչե են վերցնում, իսկ գորգի, սոֆի (կերպասեղեն) բեռից ևս երեք հարյուր սև աղչե: Կաշվի բեռից չորս հարյուր սև աղչե են վերցնում, բուլգարի բեռից՝ երկու հարյուր, իսկ դանակի բեռից՝ երեք հարյուր, պղինձի բեռից՝ հարյուր իննսունութ, որից իննսուն աղչեն որպես մեծ բաշ, ութսունչորս աղչեն՝ սև քամդայի և տասնութ սև աղչեն՝ Թերջանի Վարթիկ բերդի բաշն է: Մյուրդեսենկի (mürdesenk) եկող բեռից վաթսուն սև աղչե են վերցնում: Եթե երզնկացիները մետաքս բերեն, բաթմանից հիսուն սև աղչե են վերցնում, իսկ եթե Ռումի կերպաս բերեն, քսանհինգ աղչե: Վերոհիշյալ կերպասներից և բրնձից, օճառից, հինայից (hina) և նման ապրանքներից եթե քաղաքում վաճառվեն, հարյուր սև աղչեից հինգ սև աղչե են վերցնում:

Եթե ձիու շուկայում ձի վաճառվի, գնողից՝ տասնութ աղչե և վաճառողից՝ տասներկու սև աղչե են գանձում: Եթե ջորի [վաճառվի], նույնպես է, իսկ ավանակ՝ դրանց կեսը:

Եթե սպանդանոցում ոչխար վաճառվի, ամեն մեկ ոչխարի համար չորս սև աղչե, եթե գոմեշ [վաճառվի], երեսուն, եթե եզ [վաճառվի] տասնհինգ սև աղչե են վերցնում:

Հյուսիսային [ճանապարհի] մուտքում բամբակի ընդհանուր բերքից յոթանասուն բաթման բամբակ են վերցնում, իսկ արևելյան ճանապարհում՝ بر اصیلع (Յիրասիլ ?) վայրից մինչև այստեղ, որքան

* Բուլգարի՝ մի տեսակ ճտավոր կոշիկ:

չուհակի հոր կա, յուրաքանչյուր հորից վեց սև աղչե են գանձում: Քսան արշին կտավից շորս, քսան արշին ալաջայից վեց սև աղչե են վերցնում: Բուն Երզնկայում եթե բամբակի, կտավի և գինու բեռ անցնի ու գնա [տրանզիտ], երեսունվեց սև աղչե են վերցնում: Եթե քաղաքացիները կտավ պատրաստեն և կամ գինի այլ տեղ տանեն, բեռից վեց սև աղչե, իսկ եթե քաղաք բերեն՝ երեսունվեց սև աղչե են վերցնում:

Եթե Ռումից թուրքները կերպասեղեն բերեն, բաթմանից քսանութ սև աղչե, մեծ բաշ են վերցնում և շորս սև աղչե էլ՝ իբրև սև թամղա, մեկ սև աղչե իբրև գրասենյակային իրավունք, և մեկ սև աղչե էլ իբրև ստացականի իրավունք:

Ստամբուլ, Բաշվեբալեթի արխիվ,
Դաֆթար № 7
Թվականը՝ 1516 (922)

3. ԲԱԲԵՐԴԻ ԿԱՆՈՒՆԸ

Բաբերդի մեծ բաշի և սև թամղայի ընդարձակ կանուննամեն՝
ըստ Հասան փառիշահի կանունի

Բաբերդի վիլայեթի եկամուտների մանրամասնությունների
դաֆթարը

Առաջներում բաթմանը տասներկու նուկի էր, մեկ նուկին՝ երկու հարյուր դիրհեմ, որով մեկ բաթմանը երկու հազար շորս հարյուր դիրհեմ կլինի: Սա Հասան փառիշահի կանունն է: Օրինակ, վուշի գործվածքեղենը եթե վաճառվի, ամեն մի կտորից երկու օսմանյան աղչե և անցնող ու գնացող ամեն մի բեռից՝ երեսուն աղչե, որպես սև թամղա փող են գանձում. լեղակի ամեն մի մենից կես նուկի են վերցնում, որը հավասար է հարյուր դիրհեմի: Նույնքան են գանձում երկաթից, պողպատից և լյոք (lök) ներկից: Մշակված պղնձի բեռից վաթսուն աղչե, շմշակվածից՝ հիսուն աղչե են վերցնում: Բամբակի բեռի մենից երկու հարյուր դիրհեմ, օճառի բեռից ևս երկու հարյուր դիրհեմ են վերցնում: Բուլգարիի բեռից հիսուն աղչե, ալաջայի բեռից քառասուն աղչե են վերցնում: Մեղրի և յուղի մեկ մենից երկու հարյուր դիրհեմ են վերցնում: Չիրից նույնպես երկու հարյուր դիրհեմ են վերցնում: Ծածկոցի բեռից քառասուն աղչե, թաղիքի բեռից քսան, իսկ դանակի բեռից քառասուն աղչե են վերցնում: Բրդի յուրաքանչյուր մենից հարյուր դիրհեմ են վերցնում: Սոֆի* բեռից հարյուր քսան աղչե, իսկ եթե վաճառվի՝ հարյուր ութսուն աղչե են վերցնում: Չկան և խավիարի բեռից քսան աղչե են վերցնում: Կաշվի բեռից քառասուն աղչե, ապուխտի (բաստուրմա) մեկ մենից երկու հարյուր դիրհեմ են վերցնում: Բրնձի մեկ մենից երկու

* Սոֆի՝ Անկարայի բրդից պատրաստված գործվածք:

հարյուր դիրհեմ, պաղլեղից, կարմիր ներկից, մոմից նույն չափով են վերցնում, իսկ անցնող ու գնացող բեռի մեկ մենից հարյուր դիրհեմ: Բուն քաղաքում և նահիլեում (գավառակ)...(?) գինու բեռից տասն ակչե են վերցնում: Գետնին փռելու համար օգտագործվող գանան մորթու մեկ բեռից քառասուն ակչե, շմշակված կաշվի բեռից՝ երեսուն ակչե, բարակ կաշվի (sahtıyan) բեռից՝ քառասուն ակչե, մշակված կաշվի (mesin) բեռից՝ քսան ակչե են վերցնում, իսկ բարակ քաթիստի (dülbend) բեռից՝ երկու հարյուր ակչե: Մշակված ու պատրաստի կաշվից չորս ակչե են վերցնում: Անցնող ու գնացող նավթի բեռից վաթսուն ակչե և ցինկի բեռից՝ երկու հարյուր ակչե են վերցնում: Կուրթ-կուլաղի բեռից հարյուր ակչե, մուշկի, մարգարիտի քառասուն մսխալից մեկ մսխալ են վերցնում: Կասնիի և սպիտակ ծամոնի բեռից հիսուն ակչե են վերցնում, իսկ կղմինդրի բեռից՝ վաթսուն ակչե: Սպանդանոցում գոմեշից ութ ակչե, եզից վեց ու կովից՝ չորս, իսկ երկու ոչխարից մեկ ակչե են վերցնում: Շաքարի բեռի մեկ մենից հարյուր դիրհեմ են վերցնում: Ամեն մեկ ձիու գնից՝ հարյուրից չորս ակչե են վերցնում: Անցնող բեռներից իբրև մեծ բաշ (bac-i büzürg) երկու ակչե են գանձում:

Հասան փաղիշահի կանունի մեծ բաշի մանրամասնությունը

Գեպի Ռում (Սվազ) գնացող մետաքսի բեռից հարյուր յոթասնասուն ակչե են գանձում. թուրքմեն ցեղից հարյուր հիսուն ակչե են վերցնում, եթե նրանց բեռը բացվում է, մեկ մենից ութ ակչե են վերցնում: Անցնող աջեմի (պարսկական) մետաքսյա կերպասեղենի մեկ մենից, եթե անցնի և գնա, հարյուր երեսուն ակչե են վերցնում: Անցնող ու գնացող չուխայի, ֆրանգի (եվրոպական) և Ռումի կերպասի մեկ բեռից երեք հարյուր ակչե է գանձվում:

Քիսայի (kisai), սերենդազի (serendaz), իզնիկի (iznikî), մետաքսի և կարմիրի (?) բեռից հարյուր քսան ակչե են վերցնում:

Սերկուհի (serkûhî), նեշմեկի (necmekî) և թաֆսիլի (?) (tafsile) բեռից նույնպես հարյուր քսան ակչե են վերցնում: Մուրաբայից (murabba'), սիթթե աշերիլից (sitte aşeri), մուհայյերից (muhayyer), սոֆ աթլասից և նման ապրանքների մի բեռից հարյուր տասնհինգ ակչե են վերցնում:

4. ԿԱՄԱԽԻ ԿԱՆՈՒՆԸ*

Կամախի վիլայեթի կանունների դաֆթարը

Թամալայի և բաշի բնդարձակ կանունամեն՝ ըստ Հասան փաղիշահի կանունի

1. Եթե վուշից պատրաստված կտորեղենի բեռը Տրապիզոնից գա և անցնի, ամեն մի բեռից հիսուն սև ակչե, իսկ եթե քաղաքում վաճառվի, ամեն մեկ թոփից երեք սև ակչե են վերցնում: Եթե Հիսնֆեյֆի և Հալեպի ապրանքները գան և անցնեն, նրանց ամեն մեկ բեռից ևս հիսուն սև ակչե են վերցնում: Եթե հագուստեղեն, գոտի, ալաշա և այլ ապրանքներ գան ու անցնեն, ամեն մեկ բեռից հիսուն սև ակչե են վերցնում, չրի ու չամչի յուրաքանչյուր բեռից և նման ապրանքներից, եթե գան ու անցնեն, վեց սև ակչե, իսկ եթե տեղում վաճառվեն հարյուրից հինգ սև ակչե են վերցնում: Անցնող ու գնացող ծածկոցների (kepenek) բեռից երեսուն սև ակչե, իսկ եթե տեղում վաճառվի հարյուրից հինգ սև ակչե է վերցվում: Մնդուսից (tafta), վելայից (vela ?)... և նման ապրանքներից, հարյուր սև ակչեից հինգ ակչե են վերցնում: Անագից ևս նույն հաշվով է վերցվում: Բամբակի անցնող ու գնացող բեռից տասնհինգ ակչե, իսկ եթե տեղում վաճառվի հարյուրից հինգ սև ակչե է վերցվում:

Անցնող ու գնացող և ուրիշ տեղից քաղաք բերվող գինու բեռից նոկտա բաշի (nokta başı) անվան տակ տասներկու սև ակչե է վերցվում:

* Թուրքերեն բնագրի հրատարակչի ծանոթագրությունից պարզվում է, որ այս կանունի, ինչպես նաև Բաբերդի կանունի սկզբի մասերը, Երզնկայի կանունի հետ նույնը լինելով՝ կրճատվել են: Կամախի մի այլ կանունը երգումի կանունի հետ նույնը լինելու պատճառով, չի տպագրվել: Մի այլ դաֆթարում Կամախի կանունի այն մասերը, որոնք երգումի կանուննամեծում չկան, գրված են այստեղ:

Եթե ոչխարի վաճառականի (celeb) հոտը գա և անցնի, երկու հարյուր ոչխարից մեկ գլուխ ոչխար, իսկ եթե սպանդանոցում վաճառվի, ամեն մեկ ոչխարից մեկ սև ակչե են վերցնում: Եթե եզ կամ կով վաճառվի, ամեն մեկ եզան կամ կովի համար վեց սև ակչե են վերցնում: Կտավի բեռից, եթե փոխադրվի, ամեն մեկ նուկիից տասնչորսական ակչե են վերցնում: Եթե ձի կամ ջորի վաճառվի, ամեն մեկի համար վերցնում են տասնութ սև ակչե, իսկ եթե ավանակ վաճառվի՝ դրա կեսը: Եթե լծկան [եզ] վաճառվի, ոչինչ չպիտի վերցնել, որովհետև օրենք չէ:

Եթե օճառի բեռ գա և անցնի, ամեն մեկ բեռից հիսուս սև ակչե, իսկ եթե վաճառվի, ամեն մեկ հարյուր ակչեից՝ հինգ ակչե են վերցնում:

Քաղաքի ամեն մեկ ջուլհակի հորից վեց սև ակչե են վերցնում: Թափառաշրջիկ կոշկակարից յուրաքանչյուր նոր վայրում վեցական սև ակչե են վերցնում:

Ամեն մեկ խաղախորդարանից վեց սև ակչե են վերցնում: Վերոհիշյալները, բոլորը սև քամդային են վերաբերում:

Մեկ բաթմանը տասներկու նուկի է, մեկ նուկին՝ հարյուր յոթանասուն դիրհեմ:

Կամախի 937 քվականի* կանունից

1. Կամախի և Երզնկայի կազաների սև քամդայի բաժինը

2. Յինկի բեռից հարյուր ակչե, խորասանի (ցեմենտի) բեռից՝ հիսու ակչե, լյոքի ներկի (lök) բեռից երկու հարյուր ակչե, կուրթ կուպաղիից՝ հարյուր, թրծված աղյուսի բեռից՝ վաթսունյոթ, լեղակի բեռից՝ չորս հարյուր, սպիտակ ծամոնի բեռից՝ քսան, բուսական սոսնձի բեռից՝ հիսուն, պողպատի բեռից՝ հարյուր, պղնձի բեռից՝ հարյուր, բուլգարիի բեռից՝ վաթսունյոթ, դանակի բեռից՝ հարյուր, մյուրդեսենեկի բեռից՝ քսան ակչե են վերցրել: Հիշյալ ապրանքները, եթե [տրանզիտ] են անցել մեծ բաշ (bac-i büzürg) կոչվող [հարկն] է գանձվել վերը հիշված հաշվով, իսկ եթե վաճառվել է, հարյուրից հինգ ակչե է գանձվել: Երբ այս բոլորի մասին Բարձրագույն Ատյանին դիմում տրվեց, որոշակի ապօրինություն լինելով՝ վերացվեցին: Այսուհետև վերոհիշյալ բոլոր տրանզիտ ապրանքների յուրաքանչյուր ձևան բեռի համար երկուական ակչե, ուղտի բեռի համար՝ չորսական ակչե, իսկ եթե տեղում վաճառվի ամեն մեկ հարյուր ակչեից երկուական ակչե պիտի գանձվի:

* 937 թ. հիշքի = 1530—1531 թթ.:

Եթե կերպասեղենը քաղաք բերեն ու վաճառեն, պետք է այն դրոշմել և հարյուրին երկու ակչե վերցնել:

Եթե Տրապիզոնից բերված վուշե գործվածքեղենը քաղաքում վաճառվի, մեկ թոփից նախկին երեք ակչեի փոխարեն մեկ ակչե պիտի վերցնել: Զիու շուկայում ձի վաճառելիս գնողից՝ վեց ակչե, իսկ վաճառողից՝ 4 ակչե են վերցրել: Այսուհետև թե՛ գնողից և թե՛ վաճառողից երկու ակչե պիտի վերցնել: Սպանդանոցում վաճառքի դեպքում երեք ոչխարին չորս ակչե են վերցրել: Այսուհետև երկու ոչխարին մեկ ակչե պիտի վերցնել: Վաճառվող գոմեշի համար տաս ակչե են վերցրել, այժմ չորս ակչե պիտի վերցնել: Եզի և կովի համար հինգ ակչե են վերցրել, այժմ երկու ակչե պիտի վերցնել:

Երզնկայի կազայի Կուզայ նահիյետում բամբակի մեկ հինգերորդը (humüs) վերցնելուց հետո նորից յոթանասուն բաթման են վերցրել: Ամեն մի երկաթագործի խանութից և ամեն մի ջուլհակի հորից տարեկան երկուական ակչե են վերցրել: Սրանք ևս հայտնի ապօրինություններ լինելով՝ հրովարտակի համաձայն վերացվեցին: Բամբակի և կտավի բեռը փոխադրելու դեպքում, տասներկու ակչե են վերցրել: Այսուհետև, փոխադրման դեպքում ձիու բեռից երկու ակչե և ուղտի բեռից՝ չորս ակչե պիտի գանձվի, իսկ վաճառելու դեպքում՝ ոչինչ: Սակայն ուրիշ վիլայեթից բեռով բերված և վաճառված ապրանքների հարյուր ակչեից երկու ակչե պիտի վերցնել:

Չամչից, թվից և այլ չոր մրգերի յուրաքանչյուր ձիու բեռից երկու ակչե, ուղտի բեռից՝ չորս, ավանակի բեռից՝ մեկ ակչե պիտի վերցնել, իսկ եթե վաճառվի, ոչինչ չպիտի վերցնել: Թարմ մրգերի երկու բեռից մեկ ակչե են վերցնում: Այս կազայում բամբակը մեծ մասամբ բեռով չեն բերում, այլ թափթփած վիճակում, [այստեղ] հավաքում, բեռ են կապում ու տանում: Այդպիսի դեպքում նրանցից որպես դուրս տանելու բաշ (çıkar bacı) ձիու բեռից երկու ակչե, ուղտի բեռից՝ չորս ակչե պիտի վերցնել, ավելին ոչինչ, իսկ ձիու կես բեռից մեկ ակչե, ուղտի կես բեռից՝ երկու ակչե պիտի վերցնել, ոչ ավելին:

Բացի բուն Կամախից և Երզնկայից, այլ տեղերում շուկա չլինելու պատճառով հիշյալ լիվայում ուսյաթների միջև ծախվող ջորու, ուղտի, եզան ու կովի համար, ըստ քաղաքի սովորության, թամդայի պաշտոնյաները ստուգելով և սովորութային երզումով (vemini örfiye) էին թամդա վերցնում: Երբ այս պարագաները հայտնի դարձան բարձրագույն ատյանին, ապա ապօրինություն համարելով բարձրագույն հրամանով վերացվեցին:

3. Գինու սաբուրը (sabor) ինչքանով որ գնվի, թանկ թե էժան,

գինետանը կրկնապատիկ գնով պիտի վաճառվի: Օրինակի համար, մեկ սաբուրը եթե տաս ակչեով գնվի, քսան ակչեով պիտի վաճառվի, եթե տասնհինգ ակչեով գնվի՝ երեսուն ակչեով, եթե քսան ակչեով գնվի՝ քառասուն ակչեով: Եթե մեկը առանց գինետան ամիլի (meyhane 'amili) թույլտվության ուրիշ տեղից գինի բերի, բերածը պիտի բռնագրավվի և [բերողը] պիտի տուգանվի՝ գինետան մեկ օրվա եկամտի չափով: Եթե քաղաքի բնակիչը գնա և գյուղում գինի խմի, ոչինչ չպիտի վերցնել, իսկ եթե գինին իր հետ քաղաք բերի, ապա օրենքի համաձայն պիտի բռնել ու տուգանել: Քաղաքի անհավատներից մեկը եթե հարսանիք կամ որևէ հավաքույթ կազմակերպի, գինետան ամիլի թույլտվությունը ունենալու դեպքում ինչքան ուզենա գինի և շիրա կարող է գնել, իսկ եթե թույլտվություն չի ունի, ապա տարած գինին պիտի բռնագրավել և տուգանել: Գյուղի անհավատներից մեկն իր այգու շիրայից գինետան համար բավարար քանակությամբ գինի վաճառելուց հետո, եթե ավելորդը ուրիշին վաճառի, ապա գնորդը քաղաքի գինետան ամիլին յուրաքանչյուր բեռի համար երկուսական ակչե արտոնաթյան գին տալով, պետք է գինին կնքել տա և ապա միայն վերցնի ու տանի: Այժմ ռայաթը այդպիսի հնարավորություն չունի: Երբ այս խնդրի վերաբերյալ դիմում արվեց բարձրագույն ատյանին, ապա վերևից կարգադրվեց՝ վերցնել բեռան մեկ երրորդը, իսկ երկու երրորդը թողնել: Այսպիսով, մեկ բեռից ութ ակչե պիտի վերցնել, ոչ ավելին:

4. Հիշյալ վիլայեթում մարխասիե (marhasiye) ակչեի մասին: Հին դաֆթարը գրվելու ժամանակ Կամախի կազային տասնմեկ հազար ակչե և Երզնկայի կազային՝ ութ հազար երկու հարյուր հիսուն ակչե է արձանագրվել. հինգ հազար հիսուն ակչե ևս որպես ակեմդարլիկ ('alemdarlık) վանքերի վրա գրելով՝ ամեն մեկ տանից տասական, տասնհինգական ակչե է գանձվել: «Սա մեզ համար մի ավելորդ խաբաջ եղավ, նորին վսեմություն մեր փառիշահը օսմանյան երկրի այլ մասերում երկուսական ակչե է վերցնում» ասելով՝ հիշյալ լիվայի ժողովուրդի խնդրանքը երբ բարձրագույն ատյանին ներկայացվեց, ապա ամեն մեկ տնից գանձվող հարկը թեթևացնելու մասին հրաման տրվեց և բարձրագույն հրամանի համաձայն նոր դաֆթարում արձանագրվեց՝ Կամախի կազայից վեց հազար ակչե գանձել հօգուտ պետության, իսկ Երզնկայի կազայից երկու հազար ակչե՝ վակֆի համար. ավելի ոչինչ չպիտի գանձել:

Ստամբուլ, Բաշվեբալեթի արխիվ,
Դաֆթար № 7
Թվականը՝ 1516 (922)

5. ԲԻԹԼԻՍԻ ՎԻՎԱՅԵԹԻ ԿԱՆՈՒՆԸ

1. Այս վիլայեթում մինչև այժմ հարկերը գանձվում են քրդերի սովորության համաձայն, [այսպես]՝ տան հարկ (resm-i hane) անվան տակ յուրաքանչյուր տնից շորս և կես ակչե են վերցնում, ջուլհակի հարկ (resm-i cullah) անվան տակ յուրաքանչյուր շնչից նույնքան, որպես կեֆի հարկ (resm-i 'alef) յուրաքանչյուր շնչից երկու ակչե: Տոնական հարկ (resm-i îdiye) անվան տակ յուրաքանչյուր գյուղից երկու ութսուր են վերցնում, որպես նեվրուզի հարկ (resm-i nevruziye) յուրաքանչյուր տնից յոթ ակչե, հողն անմշակ թողնելու հարկ (resm-i boz) անվան տակ յուրաքանչյուր գյուղից հիսուն ակչե, կեֆենդուզի հարկ (resm-i kefenduz) անվան տակ ամեն մի կոշկակարից քսանհինգ ակչե են վերցնում: Մուշի, Չուկուրի և Ահթյանի գավառներում ղշլաղի հարկ անվան տակ աշնանը ամեն մի չիֆթից վեց Ստամբուլի քիլե կորեկ, յուլի հարկ (resm-i rugan) անվան տակ յուրաքանչյուր չիֆթից 1200 դիրհեմ յուլ են վերցնում:

Հիշյալ գավառներում, ինչպես նաև Դատվանում և Խլաթում կաշի (?) հարկ (resm-i kaş) (?) անվան տակ աշնանը յուրաքանչյուր չիֆթից քառասունութ ակչե են վերցնում: Այս բռնություններից բացի, ժառանգությունից տասից երեքը վերցվում և յոթը ռայաթներին է տրվում: Այս կարգի բռնությունները վերջ չեն ունեցել. ներկայումս կայսերական հրամանով այդ բռնությունները վերացվել են և [այստեղ] Դիարբեքրի վիլայեթի օրենքն է հաստատվել:

Անհավատները ինչ որ ցանեն ու հնձեն, հինգից մեկը բաժին (kismet) պիտի տան. թե՛ կայսերական հատուկ պաշտոնյաները և թե՛ սանջակի բեյերի պաշտոնյաները բնատուրպ պետք է վերցնեն և ռայաթներից հացաֆախիլի գին (galle baha) անվան տակ ոչ մի ակչե չպիտի պահանջեն: Ամուսնացած անհավատներից քսանհինգական ակչե իսպենջ և վեց ակչե րգադիե (irgadîye) պետք է վերց-

վի, իսկ աշխատանքի կարող ամուրիներից՝ քսանհինգ ակչե իսպենջ: Ոչխար, փեթակ և ջրաղաց ունեցողներից հարկերը ըստ դաֆթարի պետք է գանձվեն: Քրդերը և ուրիշները բացարձակապես ոչ մի ակչե և ոչ մի հատիկ չպետք է վերցնեն:

2. Այս վիլայեթում Խոյթ (Hoyt), بوغيات و كزح, Ումուր (Umur) և Կեվաշ (Kevaş) նահիյեներում, որոնք խիստ անմատչելի և քարքարոտ են, հողամշակութունն շատ քիչ է և ուսյաթների մեծ մասն աղքատ են, դրա համար էլ նրանց յուրաքանչյուր անձին երեսունհինգ ակչե ջիզիե նշանակվեց: Յուրաքանչյուր հարուստից ու չքավորից հավասարապես երեսունհինգ ակչե է որոշված: Հիշյալներից բացի մյուս նահիյեներում [ջիզիեն] հիսունհինգ ակչե է որոշված. նրանցից ևս հարուստն ու չքավորը հաշվի առնելով, հարկը արդարացիորեն պիտի գանձվի: Ադիլջեվազի գավառը սահմանագլխում գտնվելու պատճառով, նրա բնակիչների ջիզիեն երեսունհինգ ակչե է որոշված, ավելի չպիտի գանձել:

3. Այս վիլայեթում ապրող մուսուլմանները, որոնք ցանում և հնձում են, արձանագրվեցին իբրև տասանորդ և սալարիե վճարողներ, դա կազմում է [բերքի] ութից մեկը: Այս վայրերն էլ մեծ մասամբ լեռնոտ լինելով, տեղի բնակիչները հազիվ իրենց անձնական կարիքի համար են հողը մշակում. այդ պատճառով նրանց վրա չիֆթի հարկ չի նշանակվում, այլ հողի հարկ (resm-i zemin) է արձանագրվում... Գրվածի համաձայն լավագույն տեղից երկու դեոնյումից մեկ ակչե, և վատ տեղից՝ երեք դեոնյումից մեկ ակչե հողի հարկ պիտի վերցվի, իսկ մշակութուն չունեցողներից... եթե հողի հարկը բեննաֆի հարկից պակաս լինի, տասներկու ակչե բեննաֆի հարկ և աշխատանքի ընդունակ ամուրիներից վեց ակչե ամուրիուքյան հարկ (resm-i mücerred) պիտի վերցվի. մուսուլմաններին ըրգադիե արձանագրված չէ և չպիտի պահանջվի: [Քանի որ] բուն Բիթլիսի, Խլաթի, Ադիլջեվազի մուսուլմաններին գլխի ակչե (baş akçesi) և ըրգադիե չի արձանագրված, հիշյալ հարկերը նրանցից չպիտի պահանջվի:

Մետաֆսից, կերպասեղենից, չուխայից և փաթանից [գանձվող րաջերի] բացառությամբ

4. Հալեպում մետաքսից պատրաստված կերպասեղենի փոխադրվող [յուրաքանչյուր] բեռից 156 ակչե է վերցվել. որոշվեց

նույնը: Դանակ, շաքար, օճառ, հինա, խալի, նիշադիր, իսֆիտաջ*, պղինձ, թիթեղ, կարմիր ներկ, լեղակ, հախճապակի և այլ ալյուրանյութեր փոխադրելիս յուրաքանչյուր բեռից քսանվեց ակչե է վերցվել, որոշվեց նույնը: Սակայն bekkam** և կարմիր հող փոխադրելիս ոչինչ չի վերցվել: Դարձյալ չպիտի վերցվի: Էմիններն իրենց համար յուրաքանչյուր բեռից հիսունական ակչե են վերցրել: Արգելված է, չպիտի վերցնել:

Անկարա, Թափուր և Կողաստրոյե
Ընդհանուր վարչութուն,
Դաֆթար № 109,
Թվական չունի

* Իսֆիտաջ—(պարսկերեն) սպիտակադեղ:

** بقم

6. ԽԱՐՔԵՐՈՒ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԸ

1. Օսմանյան կանոնի համաձայն Խարբերդի լիվայի կանոննամեի մանրամասնության, գյուղերի և քաղաքի բերքի և հիշյալ քաղաքում բաշի, թամղայի և այլնի մասին, որոնք նշանակված են համաձայն Հասան փաղիշահի կանոնի:

2. Նախ՝ գյուղերում ապրող ու չիֆթ ունեցող մուսուլման ռաջաթների ամեն մեկ չիֆթից չիֆթի հարկ անվան տակ հիսուն օսմանյան աղչե, իսկ չիֆթ չունեցողներից և նորից ամուսնացածներից տասներկու աղչե բեննաֆի հարկ պիտի վերցնել: Հողամշակությամբ զբաղվողներից, ըստ իրենց ցանքատարածության, յուրաքանչյուր էրկու դեոնյումից մեկ աղչե, իսկ այն ամուրիներից, որոնք իրենց հոր մոտ չեն ծառայում և իրենց առանձին աշխատանքն ունեն, վեց աղչե ջաբա-բեննաֆի հարկ (resmi caba bennak) պիտի վերցնել:

Հիշյալ հարկերը անհավատներից չպիտի գանձել, սակայն յուրաքանչյուր [անհավատ] հարկատուից քսանհինգ աղչե իսպենջ պիտի վերցնել:

Հիշված հարկերի գանձման ժամանակը գարնան՝ մարտ [ամսի] սկիզբն է. դրանից առաջ չպիտի վերցնել:

3. Թե՛ մուսուլմանների և թե՛ անհավատների հողամշակությունից հինգից մեկը (humüs) պիտի վերցնել, մուսուլմանների բամբակից, բանջարեղենից, այգիներից և պտուղներից յոթից մեկը, իսկ անհավատներից՝ հինգից մեկը:

4. Ամուսնության հարկը. ամեն ամուսնացողից վաթսուն աղչե պիտի վերցնել, աղջիկը ուր որ հարս գնա, [հարկը] պիտի գանձել հոր արձանագրված վայրում, իսկ այրի կինը, որտեղ որ ամուսնանա, [հարկը] այնտեղ պիտի վերցվի:

5. Մեղրի հարկը ստացված մեղրից տասանորդով պիտի վերցնել:

6. Ջրաղացի հարկը յուրաքանչյուր [ջրաղացից] ամսական վեց աղչե հաշվով պիտի վերցնել, որը տարեկան կազմում է վաթսուն աղչե:

7. Ոչխարի հարկը. երկու ոչխարից մեկ աղչե պիտի վերցնել: Յայլաղի հարկը. յուրաքանչյուր յայլաղ գնացող, որն չորքոտանի ունենա...*

8. Անասունների պատճառած վնասների համար. եթե ձին կամ եզը ցանքս մտնեն և վնաս պատճառեն, յուրաքանչյուր եզի կամ ձիու համար հնգական աղչե տուգանք պիտի վերցնել և վնաս պատճառող անասունի տիրոջը հինգ հարված պիտի խփել և [նրանից] վնասի փոխհատուցում պահանջել, սակայն այդ բանի համար մակթու (maktu') աղչե չպիտի վերցնել:

9. Թամղայի (tamğa) մասին. համաձայն հնագույն կանոնի, եթե մետաքս է բերվել, բաթմանով են կշռել և Խարբերդի յուրաքանչյուր մեկից, որը ութ հարյուր դիրհեմի է հավասար, իննսուն սև աղչե բաջ են վերցրել. այդ երեսուներեք օսմանյան աղչե է անում: Բաթմանի համար որպես սև թամղա չորսական աղչե են գանձել:

10. Ռումի երկրից թոփով եկած չուխան կշռելով՝ յուրաքանչյուր մեկից որպես բաջ քառասուն և հինգ սև աղչե են վերցրել, որը կազմում է տասնհինգ օսմանյան աղչե:

11. Քաղաք բերված և վաճառված ամեն տեսակի ապրանքներից հարյուրին հինգ սև թամղա կոչված հարկ են վերցրել: Իսկ եթե անցնի [տրանզիտ] ու գնա, վուշի բեռից մեկ շամի-էշրեֆի (sami eşrefi) են վերցրել, որը քառասուն օսմանյան աղչեի է հավասար: Եթե հինա կամ օճառ, երկաթ և սրանց նման ապրանքներ են եկել ու անցել, ամեն մեկ բեռից կես բաթմանի արժեքի չափով են բաջ վերցրել:

12. Քաղաք բերված և մորթված ոչխարից հինգ սև աղչե են վերցրել, այս հաշվով կազմում է մեկ և կես օսմանյան աղչե. եթե եզ կամ կով է մորթվել, տասներկու սև աղչե են վերցրել, որը չորս օսմանյան աղչե է անում:

13. Բացօթյա վայրում վաճառված հացահատիկի Խարբերդի մյուղից, որը Ստամբուլի ութ քիլեին է հավասար, մեկ քառորդ Ստամբուլի [քիլե] են վերցրել: Գիտորի (mazu) բեռից քսանից երկուսն են վերցրել, մեկը բացօթյա վայրում պաշտոնյան է վերցրել:

14. Խաղախորդարանի (tabakhane) համար ևս ամեն մեկ մորթուց մի փոքր բան են վերցրել:

15. Կարի արհեստանոցի (kirishane) համար քաղաքում մորթված ոչխարի և այծերի աղիքներից վերցնում լար են պատրաս-

* Բնագրում բաց է թողնված:

տում, սակայն [արհեստանոցի] վարձը եթե վակֆ լինի, այդ [դեպքում լարերը] վակֆին են արձանագրվում:

16. Էբու-Թահիրից* եկող թարմ խաղողի բեռից երկու սև ակչե թամղա են վերցնում: Եթե հարբերդ քաղաքի խաղողը վաճառվի, ոչինչ չեն վերցնում: Բանջարեղենից նույնպես որոշ քանակությամբ [հարկ] են վերցրել. պիտի պահպանել գանձվածի չափը:

17. Եթե բամբակ և թել է շուկա բերվում վաճառվում, յուրաքանչյուր նուկիից քառորդ սև ակչե թամղա են վերցնում: Վեց նուկին հավասար է մեկ օսմանյան բաթմանի: Շուկա բերված կտավի մեկ թուփը, որը քսան արշին է, դրոշմելով մեկ Հասան-բեյի [բաջ] են վերցնում, որը հավասար է երկու օսմանյան ակչեի: Եթե Տրապիզոնի վուշ է բերվում և վաճառվում, պիտի վերցնել ոչ թե հարյուրից հինգը, այլ՝ ամեն մեկ թուփից երկու և կես օսմանյան ակչե: Բուն քաղաքում գործված մետաքսյա (çiharkezi) գոտին նույնպես դրոշմելով, քառորդ սև ակչե թամղա են վերցնում: Մոմի արհեստանոցից (mumhane) ամիլը՝ [ապօրինի կարգով] հում մոմ առնելով ու վերամշակելով կրկնակի գնով է վաճառում:

18. [Վաճառվող ապրանքների] հաշվառման (ihtisab) մասին մեղրի, յուղի, շամիչի և այլ նման մթերքների բեռից երկու նուկի են վերցրել: Նպարավաճառի խանութներից ևս ամսական մեկ ակչե են վերցրել: Հացագործից և խոհարարից նույնպես, ըստ վիճակի, ամսական երեք-չորսական ակչե են վերցնում: Բացի այդ [կշեռքում] եթե պակաս գտնեն, մեկ դիրհեմից մեկ ակչե տուգանք պիտի պահանջի:

Ստամբուլ, Բաշվեբալեթի արխիվ,
Դաֆթար № 840,
Թվականը՝ 1518 (924)

* Էբու-Թահիրը՝ Ջերմիկ լիվայի նահիյեներից (գավառ) է:

7. ՌՈՒՄԻ ՎԻՍՅԵԹԻ ՍԻՓԱՀՈՒ ԿԱՆՈՒՆԸ

1. Թոշակի անցած (müteka'id) սիփահինների մասին բարձրագույն հրամանն այսպես է. եթե մի սիփահի հեռացված լինի և յոթ տարի թիմարը չվերցնի, [ներանից] այլ ուսյաթների նման շարիաթական իրավունքներ և սովորութային հարկեր պիտի գանձվեն:

Այն սիփահի-գաղեն (սիփահու որդին), որի հայրը թիմարի տեր լինի, ինքն էլ պատերազմելու ընդունակ լինելով յոթ տարի կայսերական արշավանքներին մասնակցի և հետո գա ու թիմար պահանջի... (?)* նրա դրուժյունն էլ նույնպես է:

Այն սիփահի-գաղենները, որոնց հայրերը թիմար չեն ունեցել, սակայն նրանց պապերը անցյալում որոշ ժամանակ թիմար են ունեցել, նրանցից այլ ուսյաթների նման շարիաթական իրավունքներ, սովորութային հարկեր և պետական ավարիզ պիտի վերցվի:

2. Ամբողջ Ռումում զեամեթներից, սերասկերի թիմարներից և դիզդարի թիմարներից բացի մնացած թիմարները ազատ (serbest) չեն: Դաֆթարներում ևս այդպես է արձանագրված:

3. Ամբողջ Ռումում բարձրագույն հրամանն այսպես է, թիմարին մի այլ կազայից որևէ գյուղ կամ հողաբաժին չպիտի միացվի. դաֆթարներում էլ այդպես է բաժանված: Ներկայումս նոր դաֆթարում արձանագրված բոլոր թիմարներից որևէ գյուղ կամ հողաբաժին մի այլ թիմարի չպիտի միացվի, իսկ եթե միացվի, մեղքը դաֆթարդարներինը կլինի, անգիտություն չպիտի ցուցաբերել:

4. Հիշյալ վիլայեթում վակֆ եղած և շարձանագրված թիմարները ժամանակին դաֆթարդարը՝ դաֆթարի էմիրը պետք է գրանցի և յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ պատճենը վիլայեթի կադիներին և հատկապես մայրաքաղաք (Ստամբուլ) պիտի ուղարկի:

Սրանից առաջ Ռումի վիլայեթում այնպես է պատահել, որ [սիփահիները] ուսյաթների բերքից դաֆթարում արձանագրված

* Բնագրում միտքն աղավաղված է, բառեր են բաց թողնված:

հարկերից ավելի սալարլըք (salarlik) և եմլիք (yemlik) են վերցրել, իսկ չիֆթ գրվածները ամեն տարի մեկ օր թիմարի տիրոջը ծառայության են պարտադրել, տարեկան կալի աուրֆ անվան տակ նրանցից մեկ քիլե գարի և մեկ հավ, իսկ բերդապահներն էլ ամեն տարի չիֆթերից մեկ բեռ հարդ և մեկ բեռ փայտ են վերցրել: Այս բոլորը ապօրինություն լինելով և դաֆթարում [թիմարի տերերի վրա] եկամուտ արձանագրված չլինելով՝ փաղիշահական արդարադատությամբ վերացվում է և արգելված լինելու պատճառով դաֆթարում եկամուտ չի արձանագրվում:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արևիվ,
Դաֆթար № 169,
Թվականը՝ 1519 (926)

8. ԴԻՎՐԻԿԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԱՄԵՆ

1. Հիշյալ լիվայում գտնվող գյուղերի մշակելի տարածությունների և հողակտորների մեծ մասից մալիֆանե (mālīkāne) և դիվանի (divanī) բաժին անվան տակ, երկրագործության միջոցով ստացված հացահատիկի հինգից մեկը ասելով, կրկնակի տասանորդ վերցնելը ժողովրդի մեջ հին սովորություն է եղել: Օրինակ, լրիվ մշակված հողում տնտեսությունը մալիֆանե է կոչվում, որը նվիրական շարիաթի համաձայն մյուսքի և վակֆի հողի տնտեսությունն է: դիվանի անունով հիշված հողը մուսուլմանական բեյթումալին (beyt-ül-māl) պատկանող հողն է...

Սանջակի բեյերը և սիփահիները, ուսյաթներին մի քանի օր խոտհնձի տանելով, խանգարել են նրանց աշխատանքը: Ապօրինություն լինելու պատճառով սա վերացվում է: [Սանջակի բեյերն] իրենց դրամով ունչպար պետք է վարձեն և արտերը հնձել տան. ուսյաթներին չպիտի նեղացնել:

2. Հիշյալ սանջակում ուսյաթից տարին մեկ անգամ յուղ, թաղիք, փայտ, գարի, խոտ, հարդ և ածուխ վերցնելով, չնչին գումար են վճարել: Ապօրինություն լինելու պատճառով սա վերացվում է: Ինչի կարիք որ լինի, օրվա գնով շուկայից պետք է գնել և ուսյաթին նեղություն չպիտի տալ:

3. Սանջակի սուբաշիները ուսյաթների մոտ իջևանելով, ուտելիք և կեր են վերցրել: Սա ապօրինություն լինելու պատճառով վերացվում է: Բռնությամբ ոչ ոքի տունը չպիտի մտնել ու կեր և ուտելիք չպիտի պահանջել, ինչ էլ որ վերցնեն, արժեքը պետք է վճարել. ուսյաթից նրա կամքին հակառակ ոչինչ չպիտի վերցնել:

4. Սանջակի բեյերը, սուբաշիները և այլ սիփահիները, որսի գնալ ցանկանալով ուսյաթներին բազմիցս քշել տարել են, աշխատանքից կտրել և օրերով ստիպել են հսկել իրենց ձիերին. ապօրինություն լինելու պատճառով վերացվում է: Եթե որսի գնալ ցանկա-

նան, թող ժողովրդին դիմեն, և իրենց կամքով գնացողները՝ գնան. բռնութեամբ ոչ ոքի որսի չպիտի տանել և ձի պահել տալ:

5. Ռայաթները հիշյալ վիլայեթում գտնվող աղահանքերից իրենց տան համար աղ են տարել, տեղական ամիրը «աղ տարար» ասելով ռայաթից բաջ է վերցրել: Ռայաթը իր այգուց և բանջարանոցից ստացած մրգերը բեռով ուրիշ տեղ վաճառելու տանելիս, ամիրինքը նրանից բաջ են վերցրել: Քանի որ հնուց ի վեր բաջ չի վերցվել՝ վերացնել [նման գանձումները]: Այսպիսով, եթե ռայաթները իրենց տան համար աղ տանեն և իրենց մրգերը ուրիշ տեղ տանեն վաճառելու, նրանցից բաջ չպիտի վերցնել:

6. Հիշյալ արգելումների մեծ մասը հին դաֆթարում ևս արձանագրված է եղել՝ «արգելված է», բռնություն լինելով՝ դարձյալ «արգելված է» արձանագրվեց: Իրոք, [արգելումները] արդարադատության մարդկանց միջոցով պիտի գործածվեն, հակառակը չպետք է թուլատրվի...

Թափուի և կադաստրոյի ընդհանուր վարչություն,
Դաֆթար № 153,
Թվականը՝ չկա.

9. ԲՈՂՈՔԻ ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆ

Բոզոֆի կազայի կանոննամեի հիշատակումն ու բացատրությունը. ճանապարհ կտրողների և գողերի մասին որոշումներ

1. Ով որ ճանապարհ կտրի և ավազակություն անի, խիստ կերպով պատժել՝ կախաղան հանելով:

2. Ով որ ձի կամ ջորի գողանա, եթե ձեռք չկտրեն, տասնութ ոսկի, եթե եզ կամ կով գողանա, տասներկու ոսկի, եթե ոչխար գողանա, չորս ոսկի պիտի վերցնել: Եթե վերոհիշյալ [գողությունները] ընկերովի լինեն, երկու կամ երեք մարդ մասնակցեն, յուրաքանչյուրին պիտի տուգանել:

3. Եթե մեկ մարդ երկու ձի, երկու ուղտ, երկու կով և եզ, երկու ոչխար, կամ երկուսից ավելին մի անգամ կամ երկու անգամ գողանա, յուրաքանչյուր գլուխ անասունի համար [նրանից] լրիվ տուգանք պիտի գանձվի, իսկ եթե երեքից ավելին գողանա, մեկ անգամվա [գողության] համար երեք անասունի տուգանք պիտի վերցվի:

4. Եթե մեկ փեթակ, խոփի երկաթ, կարպետ, ոտնակապ շղթա, թամբ, ասպանդակ և սրանց նման բաներ գողանա, տաս ակչե [արժողության] համար չորս ոսկի պիտի վերցնել:

5. Եթե տուն կողոպտողի ձեռքը չկտրեն, ապա քսան ոսկի պիտի վերցնել, իսկ դուռ կոտրողից՝ չորս ոսկի: Գիշերով շղարշ ու պատմուձան (կաֆտան) գողացողից կամ ցերեկով շուկայից կամ տնից որևէ բան գողացողից տաս ակչե իրերի համար տաս ոսկի պիտի վերցնել:

6. [Ձեռքը] կտրված գողի կողոպտածը հայտնաբերվելու դեպքում տիրոջն է տրվում, հակառակ դեպքում [գողը] պետք է փոխհատուցի:

7. Եթե մեկը գողին գողություն անելու ժամանակ խփի և սպա-

նի, հանցավոր չպիտի ճանաչվի, եթե գողանալուց հետո ետևից հասնի և խփի ու սպանի, դարձյալ հանցավոր չպիտի ճանաչվի:

8. Եթե մեկը ամբաստանված է գողության մեջ և շարունակ գողություն է անում, [բռնվելիս] պիտի հատուցի ըստ սովորության:

9. Եթե մեկը [հակառակ] ընդունված սովորության գիշերով մի տուն մտնի և տան տերը խփի և սպանի, հանցավոր չպիտի ճանաչվի:

Պոռնկության և նրա վերաբերյալ հարցերի մասին վճիռներ

10. Պոռնկության մեղադրանքը շարիաթական կարգով պետք է ապացուցվի, եթե [մեղադրվողը] չափահաս և ամուրի է (ergen) տասնհինգ ոսկի պետք է վճարի, իսկ եթե ամուսնացած է և չի քարկոծվում (recm)՝ տասնհինգ ոսկի:

11. Եթե մեկը իր նշանածի մոտ գնա և նրա հետ հարաբերություն ունենա, պոռնկություն է թույլ տվել, բայց եթե գնա ու հարաբերություն չունենա՝ հինգ ոսկի պիտի վճարի:

12. Եթե մեկը պոռնկության նպատակով մի տուն մտնի, հավի և կամ համբուրի և եթե համբուրվողի համաձայնությունը չլինի, նա պոռնկության տուգանք պիտի վճարի. իսկ եթե համաձայնությամբ է վիճում, մտնողից և հավվողից հինգ ոսկի են վերցնում: Եթե աղջկա հետ հարաբերություն ունենա և աղջիկը նրան չտան, նրանից պոռնկության տուգանք են վերցնում: Իսկ եթե հարաբերությունը աղջկա համաձայնությամբ է լինում, [աղջկա] հորից կամ եղբորից տասներկու ոսկի են վերցնում: Իսկ եթե [աղջիկը] բռնությամբ է ենթարկվել, աղջկա հորից [տուգանք] չեն վերցնում, այլ տղամարդուց են երկու կողմի տուգանք վերցնում: Եթե մի քանի մարդ միատեղ աղջիկ առևանգեն, ամեն մեկից ութական ոսկի են վերցնում:

13. Եթե մի անձնավորություն իր մահրեմին տեսնի որևէ նամահրեմի հետ զվարճանալիս և զբաղվելիս ու նրանց սպանի, շարիաթի համաձայն արենապարտ [ոճրագործ] պիտի լինի, սակայն ըստ ավանդական սովորության (örfen) հանցավոր չի համարվում: Իսկ եթե մեկ ուրիշի ասելով սպանի, հանցավոր և արենապարտ [ոճրագործ] պիտի լինի, եթե շարիաթական վկա չլինի:

14. Եթե կավատության գործը (pizevenklik) մեկի մշտական զբաղմունքը լինի, երեսին սև [մուր] քսելով մարդկանց մեջ պիտի խայտառակել, իսկ եթե [մշտական զբաղմունքը] չէ, տաս ոսկի պիտի վերցնել:

15. Եթե տղաներին տանեն և ներքինացնեն, անպայման քսանչորս ոսկի պիտի վճարեն: Եթե [տղամարդը] իգանում է (muhanes), երկու կողմին պոռնկության սաստը թող տան, իսկ եթե չտան, ամեն մեկը պոռնկության տուգանք պիտի վճարի:

16. Եթե աղջիկը բռնությամբ տանելուց հետո ամուսնացնեն, այդ ամուսնությունը ապօրինի է, պիտի քանդել: Իսկ եթե խնամակալը այդ գործը թույլատրելի համարի, ամուսնությունը տեղի պիտի ունենա, իսկ եթե խնամակալը չթույլատրի, բայց կողմերի համաձայնությամբ ամուսնությունը տեղի ունենա, նմանը նախատեսված չլինելով, ամուսնալուծումը թույլատրելի է:

17. Եթե մանչ ծառաների (oglan usacıklar) փոխանակություն կատարվի, թեթև կարգապահական պատժից հետո տուգանք չպիտի վերցնել:

Արյան և նրա վերաբերյալ հարցերի մասին վճիռներ

18. Եթե արյուն թափողը մահապատժի արժանի լինի, համապատասխան կերպով պիտի պատժվի. եթե կողմերը հաշտվեն և կամ արյան գինը հատուցելու արժանի լինի, արյան գնի հատուցումից հետո, երեսուն ոսկի տուգանք են վերցնում:

Եթե մեկը [հղի] կնոջ ծեծի կամ վախեցնի և վիժման պատճառ դառնա ութ ոսկի պիտի վճարի:

19. Եթե մեկը [կուվելիս] ատամ ջարդի և այլ կուվների պատճառ լինի, շարիաթի համաձայն նրանից պահանջված արյան գնի կեսը և ատամ ջարդելու համար ութ ոսկի են վերցնում:

20. Եթե մեկը քարով կամ փայտով և կամ կարծր իրով [դիմացինի] մատը ջարդի կամ գլուխը պատռի, չորս ոսկի պիտի վճարի:

21. Եթե ձեռքով խփեն, արյուն հոսեցնեն, կամ եղունգով երեսը ճանկոեն, կամ օձիքը պատռեն, մազ կամ մորուք փետեն, երեսուն ակչե պիտի վճարեն:

22. Եթե քարով, փայտով և սրանց նման իրերով գլխի վրա սև բծեր և քերծվածքներ առաջացնեն, դրանք ճեղքվածքի համազոր են: Եթե դրանք ձեռքով կամ եղունգով առաջանան, քիթը արնելու համազոր են:

23. Եթե ոտք կամ ձեռք կտրվի և կամ մարմնի մի այլ մասը կտրվի և [տուժողը] անկողին ընկնի, քանի օր որ շահույթից հետ մնա, այդ չափով ըրգաղիև և տասնչորս ոսկի տուգանք են վերցնում: Իսկ եթե սխալմամբ լինի, հինգ ոսկի են վերցնում:

24. Աչք հանողը արշան գինը [վնասվողին] պիտի տա, եթե դիտավորյալ կերպով է եղել, տասնչորս ոսկի, իսկ եթե դիտավորյալ չի պատահել, հինգ ոսկի պիտի վճարի:

25. Եթե քարով կամ փայտով խփելով ականջ խլացնեն կամ վիզը քերծեն, աչքին համազոր համարելով, շարիաթական օրենքով արշան գինը առնելուց հետո, եթե դիտավորյալ է եղել՝ տասնչորս ոսկի, իսկ եթե սխալմամբ է եղել՝ հինգ ոսկի են վերցնում:

26. Եթե կարծր առարկայով խփեն և սև բծեր առաջացնեն, մեկ ոսկի պիտի տան: Իսկ եթե սրով, դանակով և նետով խփեն, բայց չպատռեն, պատռվածին համազոր է:

27. Եթե սպանելու և կամ վիրավորելու դիտավորությամբ [մեկին] հետապնդեն, չազատվի (?), դառնա նրան (հետապնդողին) վիրավորի, թևը կամ ոտքը կոտրի, [պատիժ, տուգանք] ոչինչ չկա:

28. Եթե խփելու դիտավորությամբ կամ առանց դիտավորության սուր կամ դանակ և նետ հանեն, երկու հարյուր ակչե են տալիս, իսկ եթե սրով, դանակով կամ նետով խփեն և [խփվողը] անկողին ընկնի, տասներկու ոսկի են տալիս: Իսկ եթե խփեն, բայց չկտրեն, համազոր է կտրելուն, տաս ոսկի են տալիս: Եթե կովի պատճառ եղողը վիրավորվի, [հանցագործը] շարիաթական օրենքով արշան գնի կեսն է տալիս:

29. Եթե [ոչխար] համրողից ոչխար պահեն, յուրաքանչյուր ոչխարից մեկ ակչե են վերցնում: Եթե խմբով տան վրա հարձակվեն, հարձակվողներից ութական ոսկի են վերցնում: Եթե հարձակման ենթարկվողները գենքի դիմեն, հանցավոր չեն ճանաչվում, եթե մինչև անգամ վիրավորեն և սպանեն, դա հարձակվողներին վիրավորելու դիտավորություն չի համարվում: Տան վրա հարձակվողները ինչ որ անելու լինեն, ապա հարձակման ենթարկվածները նրանցից ավելին չպիտի անեն:

30. Բերքը չափողից հացահատիկ թաքցնողների նկատմամբ նույն կերպ պիտի վարվել:

31. [Ձիևվորական] ծառայության կանչված սիփահու վրա ուշաթը ձեռք չպիտի բարձրացնի, եթե բարձրացնի, ռուս ոսկի պիտի վճարի:

Անասունը հացահատիկի [ցանքը] մտնելու մասին

32. Եթե անասունները ցանքսը մտնեն [անասունի] տիրոջը հինգ փայտի հարված պիտի տան կամ յուրաքանչյուր հարվածի դիմաց մեկ ակչե տուգանք պիտի վերցնել, իսկ եթե արտ մտնող անասունը

ապանեն, արժեքը տիրոջը պիտի վճարել, սակայն տուգանք չպիտի վերցնել: հացահատիկի վնասը անասունի տերը պիտի հատուցի:

33. Եթե հավ և բանջարանոցի պտուղներ գողանան, արժեքը վճարել տալուց հետո, քսան ակչե տուգանք են վերցնում:

Սազ գողացողից երեսուն ակչե տուգանք են վերցնում:

Եթե մի կնոջ ու տղամարդու վրա զրպարտություն անեն, եթե թշնամանք չկա և [զրպարտողը] կրոնասեր մարդ է, նրա խոսքին պիտի հավատալ, իսկ եթե շարիաթով հաստատվի, որ սուտ է, հինգ ոսկի տուգանք պիտի վերցնել կամ լեզուն պիտի կտրել:

Փայտ գողացողից տասնհինգ ակչե են վերցնում:

34. Եթե արշինը պակաս լինի, հարյուր ակչե են վերցնում, եթե նուկին պակաս լինի, վաճառվածի ամեն մեկ դիրհեմից մեկ ակչե են վերցնում և սաստելով երկուսին էլ ամոթանքի են ենթարկում:

35. Եթե դիտավորյալ կերպով տուն կամ հյուղակ քանդեն և կամ նման վնասներ պատճառեն, վնասը հատուցվում է, բայց տուգանք չեն վերցնում:

Եթե նման հանցանքներ կնոջ կողմից կատարվեն, ամուսնուց առնվելիք տուգանքի կեսն են վերցնում:

Եթե փախած անասունը հայտարարելով [աճուրդով] վաճառեն, ուղտ լինի՝ վեց ոսկի, ձի լինի՝ չորս ոսկի, եզ կամ կով լինի՝ երկու ոսկի, ոչխար լինի՝ մեկ ոսկի են վերցնում, և արժեքը տիրոջն է տրվում: Իսկ եթե փախած լինելը չհայտարարվի և վաճառվի, ամեն մեկ անասունի գողություն տուգանքի կեսն են վերցնում և արժեքը անասունի տիրոջն են վճարում:

36. Սիփահին հանգիստ շրջագայելիս, եթե ուշաթին վիրավորանք պատճառի, և եթե այդ սիփահուն [ուշաթը] ծեծի, չպիտի տուգանվի:

37. Եթե [որևէ մեկի] միտումնավոր և սուտ վկայությունը երեվան գա, երեսին սև քսելով ցուցադրում են և կամ հինգ ոսկի են վերցնում: Իսկ եթե իր վկայությունից հրաժարվի, սուտ լինելը խոստովանի, այդ վկայության համար պատճառած վնասը պիտի հատուցի:

38. Եթե հայհոյեն՝ պիտի սաստեն, իսկ եթե չսաստեն, երեսուն ակչե պիտի վերցնեն. եթե գինի խմեն [հարբեն], ուշքը վրան գալուց հետո, ութսուն փայտի հարված պիտի խփեն, իսկ եթե չխփեն, ութսուն ակչե պիտի վերցնեն: Եթե մի [չաղբայրով] ծածկվածի մասին պոռնիկ է ասելով զրպարտեն, [զրպարտողին] ութսուն փայտի հարված պիտի խփել և ութսուն ակչե [տուգանք] պիտի վերցնել:

39. Եթե տղաները (oğlancık) շափահաս չլինեն, այսինքն տաս տարեկանից պակաս լինեն, հանցանքի դեպքում [այդպիսիներից] տուգանք չի վերցվում, սակայն պետք է սաստել, այսինքն ծեծել և անպատվել:

40. Եթե որևէ սիփահօի առանց հրամանագրի (buyruk) սուրհանդակ և կամ անասունի մորթի պահանջի, [դրա համար] եթե նրան ծեծեն, [ծեծողները] հանցավոր չեն ճանաչվում:

41. Ապօրինությունների վերացում: Առաջներում Զուլկադիրլիի ժամանակ, եթե ռայաթը տուգանվեր, կառավարության օգտին տուգանքը լրիվ գանձելուց հետո, առնում էին նաև տուգանքի տասանորդը (oşrû cerime) նայիրջելիֆ անունով, տուգանքի տասանորդի կեսը՝ դիվանբեյլիֆ (divanbeylik) անունով և տուգանքի տասանորդի կեսն էլ բուլուջըլբ անունով: Օրինակ, եթե մի ռայաթից հինգ հարյուր ակչե տուգանք էր գանձվում, ապա նրանից վերցնում էին նաև հիսուն ակչե իբրև նայիրջելիֆ, քսանհինգ ակչե՝ դիվանբեյլիֆ, քսանհինգ ակչե՝ բուլուջըլբ: Այս նայիրջելիֆը, դիվանբեյլիֆը և բուլուջըլբը վերացվում են:

42. Զուլկադիրլիի բեյերը «կաշրկ կուզուսու» (kaşık kuzusu) անվան տակ յուրաքանչյուր մակաղատեղից (eğil) մի գառ են վերցրել: Ներկայումս այդ նույնպես վերացվում է:

43. Բայրամի ժամանակ բայրամի ոչխար (bayramlik koyunu) անվան տակ ամեն մեկ հոտից մեկ ոչխար են վերցրել: Ներկայումս այդ նույնպես վերացվում է:

44. Եթե որևէ նահիեյում Զուլկադիրլի որդիներից մեկը բեյ նշանակվեր, յուրաքանչյուր հոտից սելամլբ անունով մեկ ոչխար էին վերցնում: Ներկայումս այդ նույնպես վերացվում է:

45. Արանից առաջ ամեն մեկ ռայաթի ցանքսից, դեռևս կալից առաջ, ավելի հաշվելուց բացի, հեզիր ակչեսի (hezir akçesi) անվան տակ որոշ քանակով փող վերցնելուց հետո մեկ հինգերորդի հաշվով էլ տուրք են գանձել: Բարձրագույն հրաման ստացվեց, որ ռայաթների հացահատիկի դեզը առանց շափելու, հեզիր ակչեսի և կամ այլ անվան տակ ոչինչ չպիտի վերցնել: Ներկայումս հացահատիկի դեզը շափելով՝ մեկ հինգերորդը պիտի վերցնել, իսկ հեզիր ակչեսի չպիտի գանձել:

46. Յուրաքանչյուր չիֆթից տասներկու ակչե չիֆթի հարկ է վերցվել: Օսմանյան երկրում Յուրուք ցեղից չիֆթի հարկ չի վերցվում, դրա համար հիշյալների չիֆթի հարկը վերացվում է:

47. Կար ժամանակ, երբ եթե Զուլկադիրլիի բեյերի ուղտերը

սատկում էին, ուղտ գնելու համար ռայաթներին, ըստ իրենց վիճակի, հինգական-տասական ակչե էին վերցնում: Այդ ժամանակից ի վեր, իբրև որոշյալ օրենք, ուղտի սալգուն (salgun) անվան տակ սուլթանական սալգունի կեսի շափով [հարկ] էին վերցնում: Ներկայումս ուղտի սալգունը վերացվում է:

Ամուսնության հարկի (resm-ül'arus) մասին

48. Ռայաթի կույս աղջիկը հասակակից մարդու հետ ամուսնանալու դեպքում, եթե շարիաթի օրենքի համաձայն ամուսնություն կնքելուց հետո նրա բերաթում ամուսնության տուրք արձանագրվի, [ռայաթը] սիփահօուն հարյուր ակչե պիտի տա: Իսկ եթե [աղջիկը] ուրիշ ցեղի մարդու տրվի, ամուսնության ժամանակ [ռայաթը] սիփահօուն երկու հարյուր ակչե պիտի տա: Ավելի նեղություն և ոտընձգություն չպիտի լինի և ամուսնությունից առաջ ոչինչ չպիտի վերցնել:

49. Կայսերական արշավանքի գնացող մյուսեղլեմ (müsellem) դասի աղջիկը նմանապես ռայաթի աղջկան համազոր է. մյուսեղլեմը, ռայաթի նման ամուսնության հարկը տալիս է նրան, ում վրա որ արձանագրված է:

50. Այրի կինը կույս աղջկա նման է. միայն նրանից ամուսնության տուրքը կույս աղջկա հարկի կեսի շափով պիտի վերցվի:

51. Եթե կայսերական հրամանով փաղիշահական արշավանք լինի, պատերազմի շահացող մյուսեղլեմից երկու հարյուր հիսուն ակչե եկամտի հարկ պիտի վերցնել:

52. Եթե մյուսեղլեմը մեռնի և բազմաթիվ որդիներ թողնի, կուլի և պատերազմի կարող տղան նրա փոխարեն մյուսեղլեմ պիտի լինի և արշավանքի պիտի գնա, իսկ կուլի և պատերազմի անկարողը, այլ ռայաթներին նման պիտի դառնա:

Ոչխարի հարկը (resm-ul-ğanem)

53. Մայիսին, ոչխարը գառը ծնելուց հետո, համաձայն օսմանյան օրենքի՝ ոչխարն ու գառը համբելով, երկուսից մեկ ակչե են վերցնում. շուրուֆ ակչեսի (çubuk akçesi) անվան տակ լրացուցիչ ոչինչ չպիտի վերցնել:

54. Որոշ սիփահօների թիմարներին [որպես եկամուտ] բադիհավայի-հուրդե (badihevâ-i hurde) է գրված և նրանց բերաթներում արձանագրված: Բադիհավայի-հուրդեն այն է, երբ [ռայաթներին տուգանելու դեպքում] դիմում են օսմանյան օրենքին, պատիժ տալու կարիք չի լինում:

55. Թիմարի տեր շեղող սիփահու որդիները, որոնք դաֆթարում սիփահի-զադե են արձանագրված, Ջուլիադերլիի հին օրենքի համաձայն, ոչխարի հարկ և սալգուն չպիտի տան:

56. Ջրաղացի հարկը. լրիվ տարին աշխատող ջրաղացից ամեն ամիս հինգական ակչեի հաշվով վաթսուն ակչե, վեց ամիս աշխատող ջրաղացից երեսուն ակչե են վերցնում, ավելի նեղութուն չպիտի տալ:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 735:
Քվականը չկա:

10. ԴԻԱՐՔԵՔԻՐԻ ՎԻԱՅԵԹԻ ԿԱՆՈՒՆԸ

Ռայաթի դրույթյան մասին

1. Սրանից առաջ ուայաթի հացահատիկը չափելու ժամանակ սիփահիները իրենց բաժինը բնատուրբով չեն վերցրել, այլ կանխիկ դրամով, այն էլ ընդունված չափից ավելի, այսպիսով անհրավութուն է տեղի ունեցել և ուայաթի նկատմամբ բռնութուն է գործադրվել. այդ պատճառով ուայաթների որոշ մասը երկիրը լքել է, իսկ որոշ մասն էլ նյութապես քայքայված և կարիքավոր լինելով, հողը չի մշակել: Այժմ, երբ այդ անհրավության ու բռնության մասին բարձրագույն ատյանին դիմում տրվեց, ուայաթներից կանխիկ ակչե գանձելը վերացվեց, ցորենից ցորեն, գարուց՝ գարի, և այլ հացահատիկներից միայն հացահատիկներով վերցնելու մասին հրաման տրվեց, և այս հրամանը նոր դաֆթարում արձանագրվեց: Սրանից հետո, փաղիշահական հրովարտակի համաձայն, հացահատիկի գին (galia baha) անվան տակ ոչ մի ակչե և ոչ մի հատիկ չպիտի վերցնել, ցորենից ցորեն, գարուց՝ գարի և այլ հացահատիկներից միայն բնամթերքով պիտի առնել, շտեմարանում պահել, երբ ժամանակը գա, օրվա գնով վաճառել, ուայաթին նեղութուն չտալ. աշխարհի ապավեն փաղիշահի պետության մեջ [ուայաթները] հանգիստ պիտի ապրեն և իրենց ուժը ներածին չափ հողամշակութուն անեն:

2. Բահրայի մասին. որոշվեց երկու ձևով բահրա առնել. կողմերը որ ձևի հետ համաձայնվեն, այդպես էլ պետք է լինի: Մեկ [ձևն] այն է, երբ ուայաթը բերքն ամբողջությամբ բերում է և գյուղի մոտ մի տեղում կալսում, նրա բերքը պիտի չափվի և բահրան ըստ դաֆթարի՝ հինգից կամ յոթից մեկը, [ինչպես որ որոշված է], պիտի գանձվի՝ ցորենից ցորեն, գարուց՝ գարի և շտեմարան տարվի: Մյուս ձևն այն է, երբ ուայաթը չի կարողանում [բերքը] գյուղի մոտ բերել և կալսել, նրա բերքը դաֆթարում արձանագրվածի համա-

ձայն վեց կամ յոթ բաժին է արվում, թիմարի տերը բաժիններից մեկը պիտի ընտրի, որից հետո ռայաթը այդ բահրան պիտի տանի գյուղի մոտ կալսի և աղաներին հանձնի:

3. Ամեն մի գյուղի բահրայի համար ռայաթների կողմից իրենց գյուղերում պահելու տեղ կամ շտեմարան առանձնացնելը և հավաքված բահրան մոտակա շուկա տանելն ընդունված կանոն է: Մոտակա շուկան ևս ամենաշատը մի օրվա ճանապարհ պիտի լինի, ավելի հեռու տանելը ռայաթի պարտականությունը չէ, չպիտի պահանջել:

Բահրայի մասին

4. Ռայաթի հացահատիկի [բահրան] հինգից թե վեցից մեկն է, ընդարձակ դաֆթարի առաջին բաժնում [այսպես] է որոշված. բանջարանոցների համար տասանորդ և մրգերի համար յոթից մեկը արձանագրվեց:

Չիֆթլիֆի մասին

5. Սովորական քայլով ըստ երկարության ու լայնության քառասուն քայլ տեղը մեկ դեռնյում է համարվում: Ջուր ունեցող և ամեն տարի ցանվող լավագույն հողերից ութսուն դեռնյում հողը մեկ չիֆթլիֆ է կոչվում: Միջակ հողերում հարյուր դեռնյում տեղը մեկ չիֆթլիֆ է կոչվում: Վերոհիշյալ կարգը դաշտավայր (հարթ) տեղերի համար է. լեռներում չիֆթլիֆ չլինելով [հողերը] դեռնյումով են չափում:

Չիֆթչիների մասին

6. Այն անձինք, որոնց վրա դաֆթարում չիֆթ է գրանցված, իրենց տեղերը թողնելով այլ տեղերում հողամշակութուն չպիտի անեն: Սակայն եթե իրենց վրա գրանցված տեղերը լրիվ մշակելուց հետո զնան և ուրիշ տեղում մշակութուն անեն, այսինքն ավելի աշխատել ցանկանան, այդպիսիներին աղաները արգելք չպիտի հանդիսանան, բայց իրենց վրա գրանցված տեղերը թողնելով, այլ տեղերում և այլ հողում մշակութուն անել ցանկացողներին աղաները պետք է արգելեն: «Քո տեղը թողնելով այլ հողում եթե հող մշակես, մեկ բահրա ևս կառնեմ» ասելով՝ պիտի զգուշացնեն: Այսպիսի զգուշացումից հետո, եթե [ռայաթները], իրենց վրա գրանց-

ված հողը [անմշակ] թողնելով, այլ գյուղում հող մշակեն, [այդպիսիներից] կրկնակի բահրա պիտի պահանջվի:

Չիֆթ քայքայողի (çift bozan) մասին

7. Եթե որևէ մեկը ի վիճակի լինելով հանդերձ, իրեն վրա գրանցված հողը շմշակի և հողն անմշակ մնա [և եթե] այդտեղից սիփահին բահրայի և հողի հարկի (resm-i zemin) եկամուտ ունենա, այդպիսի [ռայաթներից] չիֆթի հարկ և բոզ բահրա (boz behre) պիտի պահանջվի: Սակայն գրանցված հողի սիփահին, եթե [հողը] մեկ ուրիշին թափուով տա կամ մի ուրիշ [ռայաթ] այդ հողը մշակի և այդ հողից սիփահուն հողի հարկ և եկամուտ հասնի, այն ժամանակ հին տիրոջից բեննաֆի հարկ և ըրգադիե պիտի պահանջվի, իսկ չիֆթի հարկ և բոզ բահրա՝ ոչ: Ովքեր աղքատ և կարիքավոր լինելով և կամ երկնային աղետների ենթարկվելով՝ չկարողանան չիֆթը մշակել և դրանց չիֆթը քայքայվի, այդպիսիներից չիֆթի հարկ և բոզ բահրա չպիտի պահանջվի, այլ միայն բեննաֆի հարկ և ըրգադիե: Երեք տարին անցնելուց հետո, եթե ռայաթը դարձյալ մշակութուն անելու ընդունակ չլինի, թիմարի տերը հողը ում որ ցանկանա նրան պիտի հանձնի և մշակել տա:

Չիֆթի հարկի, բեննաֆի, ամուրիության, ըրգադիեյի և իսպենջի մասին

8. Լրիվ չիֆթ արձանագրված մուսուլմանից հիսուն ակչե չիֆթի հարկ է վերցվում. կես չիֆթ արձանագրվածից՝ քսանհինգ ակչե և բեննաֆի հարկը՝ տասներկու ակչե է վերցվում: Ամուրիության հարկը վեց ակչե է: Ամեն մի ծխին (hane) երեք օր ըրգադիե է գրանցված և ամեն օրը երկու ակչե է զնահատված, որով ամեն մեկ ծխից վեց ակչե է վերցվում: Ռայաթները սիփահուն կամ երեք օր բանվորութուն պիտի անեն և կամ թե [նրան] ակչե պիտի տան. եթե ռայաթները բանվորութուն անեն, ակչե չեն վճարի: Անհավատներին չիֆթի հարկ գրված չլինելով, ամեն մեկ, հարկատուի համար քսանհինգ ակչե իսպենջ և ամուսնացածներին՝ վեց ակչե ըրգադիե է արձանագրված. ամուրիներից ըրգադիե չպիտի պահանջվի:

9. Եթե որևէ մեկն իր վրա գրվածից ավելի հող ցանի, [որպես] հողի հարկ լավ տեղից՝ երկու դեռնյումին մեկ ակչե, վատ տեղից՝ երեք դեռնյումին մեկ ակչե պիտի վճարի: Դրսից եկող ու [հողը] մշակող [ռայաթը] նույն ձևով հողի հարկ պիտի տա:

10. Բեննաքներից և ամուրիներից շիֆթ վարելու և ցանկելու ընդունակ որևէ մեկը, եթե իր աղայից մեկ շիֆթլիք կամ կես շիֆթլիք հողը թափուով վերցնի և մշակի, օրենքի համաձայն հողի հարկը պիտի տա. միայն այդ դեպքում բեննաֆի հարկը չպիտի դանձեն: Սիփահուց թափուով հող չառնող և մերթ մեկի, մերթ մյուսի վրա գրանցված հողեր մշակողները բեննաֆի և ամուրիության հարկերը պիտի վճարեն, իսկ հողի հարկը չպիտի վճարեն: Եթե բեննաք գրանցվող բեննաֆի հարկից ազատվելու համար որոշ չափով հող մշակի և հողի հարկը բեննաֆի հարկից պակաս լինի՝ նրանից դարձյալ բեննաֆի հարկ պիտի վերցվի, բայց հողի հարկը ոչ, իսկ եթե հողի հարկը բեննաֆի հարկից ավելի լինի, այդ դեպքում հողի հարկն են վերցնում: Եթե ուսյաթը մի ուրիշ ուսյաթի վրա արձանագրված հողը մշակի, սիփահուց նրանից հողի հարկ չպիտի պահանջի, որովհետև այդ հողի նախկին ուսյաթը շիֆթի հարկ է վճարում:

11. Լրիվ շիֆթ և կես շիֆթ գրանցված մարդկանց՝ «գու երկու կամ երեք շիֆթ ես մշակում» ասելով [սիփահուցները] դարձյալ շիֆթի հարկ չպիտի պահանջեն, որովհետև շիֆթի հարկը տրվում է հողի համար և ոչ թե իրեն:

Դաֆթարից դուրս [ուսյաթների] մասին

12. Դիարբեքիլի վիլայեթում դաֆթարից դուրս լինողները առանձին են գրանցված. որոշ մարդիկ՝ իլթիզամ (iltizam) առնելով՝ գնացել են գյուղերը և՝ «ձեզ մոտ դաֆթարից դուրս մարդիկ կան» ասելով՝ ուսյաթներին բազմատեսակ նեղություններ են պատճառել, թիմարի տերերից ոմանք իրենց գյուղը և մշակելի հողերը շենացնելու համար դրսից մարդիկ են բերել, իսկ դրսի էմինները «գուք դաֆթարից դուրս եք» ասելով՝ մի քանի տարվա փող պահանջելով, դարձյալ ուսյաթների ցրվելու պատճառն են դարձել, ինչպես և ուսյաթներից դաֆթարի օրինակը պահանջելով, բազմաթիվ բռնություններ են կատարել: Ներկայումս, երբ այդ պարագաների մասին բարձրագույն ատյանին դիմում տրվեց, դաֆթարից դուրս լինողները լրիվ նոր դաֆթարում գրանցվեցին: Սրանից հետո կայսերական հրամանի համաձայն դաֆթարից դուրս լինողներին չպիտի միջամտեն: Թիմարի տերերը գյուղերն ու մշակելի հողերը շենացնելու համար դրսից ինչքան որ ուսյաթներ բերեն և բերված ուսյաթները ոչ ոքի վրա արձանագրված չլինեն, դրսի էմինները և ու-

րիշները ոչ մի կերպ չպիտի միջամտեն և չպիտի հակառակեն: Սիփահուցներն ըստ օրենքի [նման ուսյաթներից] մինչև երեք տարի ղշաղի հարկ վերցնելով, երեք տարուց հետո այլ ուսյաթների նման բեննաֆի հարկ պիտի վերցնեն:

13. Յուրաքանչյուր սանջակում դաֆթարից դուրս որոշ մշակելի տարածությունները որոշ քանակի եկամտով կայսերական խասերի վրա են արձանագրված: Սակայն եթե [տվյալ սանջակում] դաֆթարից դուրս մնացած որոշ մշակելի տարածություն հայտնաբերվի, որը գրանցման ժամանակ որպես եկամուտ հաշվառման ենթարկված չլինի, ապա երբ օրինական կարգով պարզվի, որ դա ջրովի հող է, նահիբի էմինը այդ հողը պիտի բռնագրավի պետությունն օգտին:

Մեղրի հարկի (resm-i zenburî) մասին

14. [Մեղրի հարկը] յուրաքանչյուր փեթակից երկու ակչե վերցնելու հիման վրա է արձանագրված: Եթե մի ուսյաթ իր փեթակը մի ուրիշ սիփահուց հողը տանի, հարկի կեսը հողի տերը և մյուս կեսը ուսյաթի տերը պիտի վերցնի:

Ամուսնության հարկի ('arusane) մասին

15. Եթե աղջիկը մարդու գնա, վաթսուն ակչե ամուսնական [հարկ] են վերցնում. [հարկի] կեսը թիմարի տիրոջը և մյուս կեսը՝ սանջակի բեյին է հատկացված: Իսկ այրի կնոջից երեսուն ակչե են վերցնում: Նրա կեսը ևս թիմարի տիրոջը, իսկ մյուս կեսը՝ սանջակի բեյին է [պատկանում]: Աղջիկը ուր որ էլ հարս գնա, հայրը ու ուսյաթը լինի, ամուսնական հարկը նրան է պատկանում: Այրի կինը ում հողում որ ամուսնանա [ամուսնական հարկը] այդ հողի [սիփահուցն] է պատկանում:

Ոչխարի հարկի (resm-i aġnâṁ) մասին

16. Երկու ոչխարի դիմաց ուսյաթի վրա մեկ ակչե ոչխարի հարկ է արձանագրված սակայն չոբանբեկի չպիտի վերցվի: Ռայաթից չոբանբեկի չպիտի վերցնել, քոչվոր ցեղերից պիտի վերցնել:

Ջրաղացի հարկի (resm-i asiyâb) մասին

17. Լրիվ տարին աշխատող ջրաղացից վաթսուն ակչե ջրաղացի հարկ են վերցնում և վեց ամիս աշխատողից երեսուն ակչե, մի խոսքով ամեն ամիս հինգ ակչեի հաշվով է արձանագրված:

Դեշտբանի (deştbanî) հարկի մասին

18. Եթե որևէ մեկի անասունը մի ուրիշի ցանքսը մտնի և վնաս պատճառի, վնասը հատուցելուց հետո անասունի տիրոջը հինգ փայտի [հարված] պիտի խփել և նրանից հինգ ակչե տուգանք պիտի գանձել: Եթե անասունը ցանքսը չմտնի և վնաս չպատճառի, դեշտբանի հարկ անվան տակ ռայաթից ոչ մի ակչե և ոչ մի հատիկ չպիտի վերցնել:

Յայլաղի հարկի (resm-i yaylak) մասին

19. Եթե երեք հարյուր ոչխարից բաղկացած հոտը յայլաղի հարկ գրանցած տեղերում յայլաղ բարձրանա, իբրև հարկ մեկ լավագույն ոչխար և ամեն տնից մեկ նուկի յուղ պիտի վերցնել, որը երկու հարյուր դիրհեմ է: Սակայն եթե հոտը գա և անցնի, նրանից յայլաղի հարկ չպիտի վերցնել, իսկ եթե մի տեղում [ոչխարները] երեք գիշեր մնան, այդպիսիներից [հարկ] պիտի վերցնել: Յայլաղի հարկ արձանագրված տեղերում տեղացիներից հարկ չպիտի վերցնել, իսկ դրսից եկածներից պիտի վերցնել:

Քոչվոր ցեղերի յայլաղի հարկը Մուրադ գետի եզերքումն են վերցնում: Նրանց կանոննամեում համապատասխան տեղում ընդարձակորեն գրված է: Այդպես էլ պիտի գործադրել:

Ղլաղի հարկի (resm-i kışlak) մասին

20. Բերրիներից բացի, Ղլաղի հարկ գրանցված տեղերում, եթե երեք հարյուր ոչխարից բաղկացած հոտը դրսից գա և ձմեռի, իբրև Ղլաղի հարկ մեկ լավագույն ոչխար պիտի վերցնել: Չմեռելու ժամանակը ձմռան սաստիկ ցուրտ օրերն են: Այդ օրերին [հոտը] ում հողում որ գտնվի՝ [հարկը] նա պիտի վերցնի: Տեղացիներից Ղլաղի հարկ չպիտի վերցնել, դրսից եկածներից պիտի վերցնել:

Չմեռողների մասին

21. Եթե որևէ մեկը սիփահու թիմարում է ձմեռում, վեց ակչե Ղլաղի հարկ է վճարում. դրան [այստեղ] ծխի հարկ (resm-i duhan) են ասում: Ամուրիներից երեք ակչե են վերցնում: Եթե ձմեռող անձը ձմեռած տեղում մշակությամբ զբաղվի, հողի հարկ պիտի տա, սակայն Ղլաղի հարկ չպիտի տա: Չմեռող անձը մինչև երեք

տարի Ղլաղի հարկ պիտի տա, իսկ եթե երեք տարուց ավելի այնտեղ մնա, այլ ռայաթների նման բեննափի հարկ էլ պիտի տա:

Հաշվառման (ihtisab) մասին

22. Դիարբեքիրի վիլայեթի քաղաքներում, գյուղաքաղաքներում հաշվառման տեսակետից բազմաթիվ ապօրինություններ (bid'at) են տեղի ունեցել: Հին դաֆթարում նախիջեների հաշվառում անունով մի հոդված է եղել, որտեղ յուրաքանչյուր նահիյեին որոշ չափի եկամուտ է գրանցված, որի հիման վրա [տեղական իշխանությունները] նահիյեի գյուղերի բնակիչներին զանազան պատրվակներով, բազմաթիվ բռնություններ և նեղություններ են պատճառել: Նախիջեների հաշվառումը ոչ մի այլ վիլայեթում գոյություն չի ունեցել, ուստի և բացահայտ ապօրինություն և բռնություն լինելու հետևանքով վերացվեց և նոր դաֆթարում ոչ ոքի եկամուտ չարձանագրվեց: Այսուհետև նախիջեների հաշվառում անունով ռայաթներից ոչ մի ակչե և ոչ մի հատիկ չպիտի վերցնել: Քաղաքներում ու գյուղաքաղաքներում հաշվառման ապօրինությունները նույնպես վերացվեցին և [որոշվեց] որ օսմանյան կանոնի համաձայն պիտի գործադրվի:

Դիրհեմով թանկարժեք ապրանք վաճառողներից թերակշռության համար յուրաքանչյուր դիրհեմին մեկ ակչե տուգանք պետք է գանձվի: Ամեն տարի դատավորի միջոցով քանի անգամ որ նարխ նշանակվի, որոշ քանակի նարխչլըք (narhçilik) պիտի վերցնել, սակայն ավելին ոչ: Դիրհեմով չվաճառվող և փոքր արժեք ունեցող [ապրանքներից] ըստ տեսակի որոշ չափի տուգանք պիտի գանձել: Ամանեղենը մաքուր չպահող հացագործներից և խոհարարներից, ըստ [մաքրության] դրության, որոշ չափի տուգանք պիտի գանձել:

Գիշերապահության հարկերի (rüşûm-i 'asesiye) մասին

23. Նոր դաֆթարում աեսիե ('asesiye) արձանագրված քաղաքների յուրաքանչյուր խանութից ամսական մեկ ակչե գիշերապահության հարկ են վերցնում: Բացի այդ, տներում աշխատող [չուլհակի] դազահներից ևս ամսական մեկական ակչե է վերցվել: Տներում աշխատող չուլհակների դազահներից գիշերապահության հարկի գանձումը վերացվում է և որոշվում է՝ միայն շուկաներում եղած խանութներից ամսական մեկական ակչե վերցնել: Գիշեր ժամանակ գիշերապահների բռնած հարբածներից և գողերից սու-

բաշինները ինչքան որ տուգանք գանձեն, գիշերապահն էլ [այդպիսիներից] տասանորդ է վերցնում: Սակայն ցերեկ ժամանակ բռնվող գողերի, հարբածների և այլ հանցագործների հետ գիշերապահը գործ չունի և տասանորդ չպիտի պահանջի:

Վակֆերի մասին

24. Վակֆ արձանագրված գյուղերի [եկամտի] քառորդը վակֆ արձանագրված լինելով, մնացածը՝ պետական եկամտին է արձանագրված. քառորդ ասվածը՝ հացահատիկի քառորդն է: Գյուղի վակֆի իսկական շարիաքական տասանորդը պետք է որ կեսը լինի: Քառորդ լինելու պատճառը այն է, որ այս վիլայեթի կավվածքները (emlâk) մեծ մասամբ փաղիշահների կողմից, իբրև անտեր ու ավերակ և առանց ուսյաթի համարելով, վաճառքի է հանվել և ծախվել: Հին ժամանակներում այսպիսի օրենք էլ է եղել, որ եթե որևէ տեղում որևէ մեկի ուսյաթը հող մշակեր, ստացված բահրայի կեսը հողատերը պիտի վերցնի, իսկ մյուս կեսը՝ ուսյաթի տերը: Կավվածքների տերերը գնել են միայն ավերակները, իսկ ուսյաթները՝ աշխարհի ապավեն նորին Վսեմուլթյան փաղիշահին են պատկանում: Այս պատճառով էլ շարիաքական տասանորդի կեսը պետություն և մյուս կեսը վակֆին է արձանագրված: Երբ հինգից մեկի օրենքն ընդունվեց, բերքի քառորդը վակֆին պատկանելը արձանագրվեց հին դաֆթարում:

Աշիրեթների դուրքյան մասին

25. Բոլոր աշիրեթների [բերքի հարկը] ուսյաթների նման հինգից մեկ չի արձանագրված: Հատուկ ուշադրություն արժանանալով, նրանցից ոմանք վեցից մեկ, ոմանք՝ յոթից մեկ արձանագրվեցին: Ըրգադիեից ևս [նրանք] ազատ են արձանագրված:

26. Աշիրեթների բեյերին և ջեբելուներին տրված գյուղն ու մշակելի տարածությունն ըստ դաֆթարի պիտի օգտագործվի: Կայսերական խաս արձանագրված գյուղերում էմինները ըստ դաֆթարի հարկեր և իրավունք պահանջելիս կոպիտ վերաբերմունք են ցույց տվել: Աշիրեթները, էմինների բռնություններին սովոր չլինելով, վշտացել և վիրավորվել են: Մարդինին և Ամիդին ենթակա կայսերական խաս արձանագրված աշիրեթների և գյուղերի մասին որոշվեց, որ ամեն մեկ աշիրեթի կայսերական խաս արձանագրված գյուղերի բնակիչները պիտի «ըստ որոշված գումարի» հարկը (ber

vech-i maktu') տալու համաձայնվեն և յուրաքանչյուր գյուղից այդ հարկը վերցնելուց հետո, դաֆթարում բաժին (kasim) գրված է ասելով, էմինները և ուրիշները չպիտի վիճեն: Սակայն եթե դաֆթարում արձանագրվածի համաձայն՝ «ըստ որոշված գումարի» տալուն չհամաձայնվեն, բաժնի պիտի վերածվի և քիչ-շատ ինչ որ լինի, պետություն օգտին պիտի բռնագրավվի:

27. Հիշյալ աշիրեթների շարիաքական իրավունքները (hukuk-i şeriye) և սովորութային հարկերը (rûsûm-i örfiye) Ալի-Չելեբիի դաֆթարում, մյուս ուսյաթների նման, յուրաքանչյուր տարվա համար որոշ եկամուտ արձանագրվեց և Մահմուդ-Չելեբիի* ընդարձակ և համառոտ դաֆթարներում ամեն տարվա համար որոշ եկամուտ արձանագրվեց: Սակայն կանոննամներում գրվածի համաձայն ջեբելուի ծառայության կանչելու ժամանակ նշանակված տանտուքը, ամուրիության տուրքը և մյուս եկամուտները պետք է հավաքվեն և ջեբելուին տրվեն: Կայսերական պատերազմի ծառայությունը [ջեբելունները] աշիրեթի բեյի հետ պիտի անեն, իսկ պատերազմ չլինելու դեպքում, աշիրեթներից, ուսյաթների նման, ամեն տարվա համար հարկ չպիտի վերցվի, պիտի ազատվեն. միայն պատերազմի ժամանակ հարկ հավաքելու մասին է արձանագրված: Պատճառն այն է, որ անցյալում աշիրեթների ջեբելունները բերաթ չեն ունեցել և որոշակի նշանակված ջեբելուններ էլ չեն եղել: Կայսերական արշավի (պատերազմի) ժամանակ, աշիրեթի բեյերը ում ցանկանան ջեբելու են նշանակում: Ջեբելու նշանակված անձից այդ տարվա չիֆթի եկամուտը չի վերցվում: Պատերազմը վերջանալուց հետո, դարձյալ թույլտվություն ստանալով, աշիրեթի բոլոր հողերը ցանում են. պատերազմ չլինելու ժամանակ, «ձեր բերաթներից դուրս դուք այսքան հող ի՞նչ հիմքով եք տնօրինում» հարցից պիտի խուսափել, որովհետև «խաղաղ ժամանակ հարկերը չպիտի վերցնել» ասելով՝ աշիրեթների բեյերը [դաֆթարում նախօրոք] գրել են տվել: Հետո Բարձրագույն Գահից հրամայվեց, որ ջեբելուններին բերաթ տրվի, ամեն մի աշիրեթում բոլոր ջեբելուններին ազատություն տրվի, և ջեբելուններն էլ ըստ իրենց բերաթների, դաֆթարում գրվածի համաձայն, յուրաքանչյուր տարվա համար իրենց շարիաքական իրավունքները և սովորութային հարկերը

* Կանոնների հրատարակիչ Օ. Լ. Բարկանը չի բացատրում թե ովքեր են վերոհիշյալ Ալի-Չելեբին և Մահմուդ Չելեբին և ինչ բովանդակություն ունեն նրանց դաֆթարները: Մեզ չհաջողվեց պարզել թե խոսքը ինչ դաֆթարի մասին է:

ստանան: Բարձրագույն ատյանից ջեբելուներին բերաթ տրվեց և նախկին արձանագրությունը շեղյալ համարվեց:

Ոչխարի գրոշմի (tamğa-i aġnam) մասին

28. Անցյալում յուրաքանչյուր ոչխարի համար վեց փուլ (pul) այսինքն քառորդ (rubu') են վերցրել, ոչխարի գլուխը, ոտները, մորթին, ճարպը բեյերին են նվիրել, միայն միսը մսավաճառին են տվել և այս կերպով [ոռյաթին] նեղութուն են պատճառել: Հին դաֆթարում* այդ բոլորը վերացվել է և դրա փոխարեն ոչխար գնող մսավաճառից մեկ ակչե և երկու փուլ, ոչխար ծախողից՝ վեց փուլ, որով մեկ ոչխարից ընդամենը երկու ակչե վերցնելու մասին արձանագրվեց: Իրենց սննդի համար քաղաքացու և սիփահու գնած ոչխարից ոչինչ չպիտի վերցնել, միայն վաճառողից երեք քառորդ պիտի վերցնել: Նոր դաֆթարում վերևում բացատրվածի համաձայն արձանագրվեց:

Բադիհավայի (bâd-i hâvâ) մասին

29. Ոճրագործության և հանցագործության մասին պետք է դիմել օսմանյան օրենքին, ավելի չպիտի վերցնել: Աշխարհի ապավեն փաղիշահի խասերի [ոռյաթները] բոլոր դեպքերում ազատ լինելը որոշված օրենք է: Խասերի ոռյաթների ոճիրների ու հանցագործությունների համար, փոքր կամ մեծ բադիհավաների համար բեյերբեյին և բեյերի սուբաշիները՝ «պատժելը մեզ կպատականի» ասելով՝ չպիտի միջամտեն: Եթե խասի ոռյաթներից մեկը ծանր հանցագործություն կատարի և եթե ձեռքերն ու ոտքերը կտրելու կամ կախելու անհրաժեշտություն լինի, սրբազան շարիաթի համաձայն ապացուցելուց և վճիռ կայացնելուց հետո էմիրները սուբաշիներին պետք է հանձնեն և դեպքի տեղում պատժեն: Պատժի փոխարեն (bedel-i siyaset) անունով ոչ մի ակչե և ոչ մի հատիկ անգամ չպիտի վերցնել: [Եթե վերցնեն] ժամանակի իշխողները պիտի արգելեն և օրենքի խախտումներ պիտի թույլ չտան:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 558,
Թվականը՝ 1540 (947)

* Տրամարանորեն պետք է լինի նոր (cedid) դաֆթար:

11. ԱՄԻԴԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆ*

Բաջի, կափանի և կշեռֆի հարկի մասին

30. Սրա կանոնը այս է, որ ակչեի [արժեքով] մետաքս վաճառելիս հինգ ակչե են վերցրել: Անցնող (տրանզիտ) յուրաքանչյուր բեռից (yük) երկու ակչե կափանի հարկ, իսկ տեղում վաճառելիս երկու բաթմանից մեկ ակչե կշեռֆի հարկ (resm-i mîzan) են վերցրել: Որոշվեց այդ կարգը պահպանել:

Ան քամդայի մասին, որը հայտնի է Երգանի բաջ և Սիվերեկի բաջ անուններով

31. Ասվի, բեհեզի (dülbend) և այլ կերպասների յուրաքանչյուր օսմանյան բաթմանից վեց ակչե են վերցրել: Քաթանի յուրաքանչյուր բեռից քսան ակչե են վերցրել, իսկ թաղիքի, շաքարի, սոֆի, հասարակ կտավի, պղնձի, անագի, անուշադրի և անուշահոտությունների մեկ բեռան համար՝ տասներկու ակչե: Մյուրդեսենգի, թելի և թիթեղի բեռից չորս ակչե են վերցրել, օճառի ուղտի բեռից վեց ակչե և երկու կտոր օճառ, ձիու բեռից՝ չորս ակչե և մեկ կտոր օճառ, էջի բեռից՝ երեք ակչե, իսկ շրի բեռից՝ մեկ և կես ակչե, թարմ պտուղից՝ երեք քառորդ, մեղրամոմի, արդար յուղի և բամբակի յուղի ամեն մեկ բաթմանից, որոնք էրգանիի և Սիվերեկի հողից են գալիս, քառորդ ակչե: Որոշվեց այդ կարգը պահպանել: Եվ այլ տեսակներից էլ նույն ձևով պիտի վերցնել:

Անցնող (տրանզիտ) [ապրանքների] և Կեսարայի բաջի մասին

32. Այս կանոնը հետևյալն է. ինչ տեսակի կերպասեղեն որ վաճառվել է, քսան ակչեին մեկ ակչե են վերցրել, իսկ եթե անցել

* Տրված է իբրև Դիարբեքիրի վիլայեթի կանոնի շարունակությունը:

է [գետից կամ լճից], օսմանյան բաթմանից հիսուն ակշե: Այդ ձե-
վով էլ որոշվեց: Իսկ եթե ասվի տանեն, մեկ օսմանյան բաթմանից
տասներեք օսմանյան ակշե, բեհեզի, գլխի ծածկոցի և շալկա-
վայի (?) (çalkava) մեկ օսմանյան մենից քսանչորս օսմանյան
ակշե և Հալեպի կերպասներ՝ կուտնի, ատլաս, Իսկենդերունի և
այլ մետաքսյա կտորների օսմանյան բաթմանից հիսուն ակշե պիտի
վերցնել, իսկ եթե ոչ թե մետաքսյա, այլ վարդագույն և դեմքակի
կտավ և սրանց նման ապրանքներ լինեն, մեկ բեռից հարյուր օս-
մանյան ակշե, կոշտ կտավից՝ հիսուն ակշե, դանակի և քաթանի բե-
ռից՝ երկու հարյուր ակշե, սպիտակ (սպիտակամորթ) ստրուկից
հիսուն ակշե, սևամորթ ստրուկից՝ քսանհինգ ակշե պիտի վերցնել:
Յուղի, մեղրի, կարմիր ներկի, պաղլեղի, ձյութի, սև ծամոնի, սպի-
տակ ծամոնի և ճրագի յուղի մեկ օսմանյան մենից կես օսմանյան
ակշե պիտի վերցնել և նարնջագույնի (terencebi) օսմանյան բաթ-
մանից տաս ակշե, իսկ զաֆրանից քսանին մեկ ակշե, կարպետի
և քեփենեկի (դուան և պատուհանի ծածկոց) բեռից՝ հարյուր ակշե,
անուշահոտեղենի մեկ օսմանյան մենից՝ կես, իսկ ապակու, պը-
ղընձի բեռից՝ քսանհինգ օսմանյան ակշե պիտի վերցնել: Ցինկի,
պողպատի, նավթի, բուլգարիի բեռից վեց օսմանյան [ակշե] պիտի
վերցնել:

Կրելու (մշակի), թամդայի, փոխադրության բաջի և դատարկ
[հողի վրա] կափանի մասին

33. Այս կանոնը հետևյալն է. չոր և թարմ պտուղի և դռաբի
յուրաքանչյուր բեռ [փոխադրելիս]՝ տանողից մեկ և կես ակշե՝ կրե-
լու թամդա (tamğ-a-i hamil) և վաճառելիս՝ գնողից քսան ակշեից մեկ
ակշե կափանի հարկ են վերցնում: Արդար յուղ, մեղր, կարմիր ներկ,
մեղրամոմ, ճրագի յուղ, նուշ, պաղլեղ և մյուրդեսենգ բերողից յու-
րաքանչյուր բաթմանի դիմաց իբրև կրելու թամդա քառորդ ակշե են
վերցնում, իսկ վաճառելիս՝ գնողից քսան ակշեին մեկ ակշե կափանի
հարկ են գանձում: Լեղակ, շաքար, անագ, գենջեֆիր, և անուշահո-
տեղենից կրելու թամդա չի վերցվել, սակայն փոխադրության բաջ
(bac-i 'ubur) ասելով՝ ամեն մենի համար գնողից չորս և կես
ակշե են գանձում: [Այս ապրանքները] եթե վաճառվեն, իբրև կա-
փանի հարկ քսան ակշեից մեկ ակշե են վերցնում: Եթե քաղաքում
բամբակ վաճառվի, ոչինչ չպիտի վերցնել, իսկ եթե փոխադրվի,
մեկ ուղտի բեռից տասներկու ակշե, ձիու բեռից՝ ութ ակշե են վերց-
նում: Վաճառվող երկաթի բեռից, պայտից, մյուրդեսենգից և նավ-

թի ապրանքներից քսան ակշեին մեկ ակշե են վերցնում: Աղի յու-
րաքանչյուր ուղտի բեռից մեկ և կես ակշե են վերցնում: Որոշվեց
պահպանել նույն ձևը:

Գինետան մասին (meyhane)

34. Եթե շրեի բաթմանը չորս [ակշեով] գնվի, ութով պիտի
վաճառել, եթե հինգով գնվի՝ տասով: Գումեշի հարկ անվան տակ
տարեկան հարկ էր վերցվում, վերացվեց: Գյուղի բնակիչ անհա-
վատների նկատմամբ «դու շիրան ամայի դաշտից վերցնում և խը-
մում ես» ասելով՝ բռնանում և ակշե են վերցնում. վերացվեց. այ-
սուհետև չպիտի վերցնել: Սակայն եթե մեկը դրսից գինի բերի քա-
ղաք, այդ գինին որ գուլում էլ գնված լինի՝ պետք է բռնագրավվի.
բերող անձն ըստ իր վիճակի պիտի պատժվի. տուգանքի առավելա-
գույնը գինետան մեկ օրվա վաստակի չափով պիտի լինի. ավելին
չպիտի վերցնել:

Ամիդի ֆիլեի հարկի մասին

35. Եթե քիլեով չափվող ապրանքները քաղաք են բերվում ու
վաճառվում, ձիու, շորու և գումեշի բեռից Ամիդի ֆիլեի քառորդը
իբրև ֆիլեի հարկ են առնում. էշի բեռից՝ նույնպես Ամիդի ֆիլեի
քառորդը: Իսկ եթե սիփահիներն ու քաղաքացիները իրենց ուտելիքի
համար ցորեն և այլ քիլեով չափվող [հացահատիկ] գնեն, ոչինչ
չպիտի վճարեն, իսկ եթե բերեն և վաճառեն, այլ ուսյաթների նման
ֆիլեի հարկը պիտի վճարեն:

Չորս գոնեբի (ebvâbi erba'a) հարկի մասին

36. Ամիդի ուսյաթներից բացի, եթե ուրիշները հացահատիկ են
բերում և վաճառում, ամեն բեռից քառորդ ակշե են վերցնում:
Մսագործի բերած ոչխարների երեք ոչխարին՝ երկու մանգըր (որը
մեկ քառորդ ակշեի է հավասար) են վերցնում: Քրդերի բերած ոչ-
խարից մեկ ոչխարին մեկ մանգըր (որը կես քառորդ ակշեի է հա-
վասար) են վերցնում: Դրսից բերված ու վաճառված եզից մեկ ակշե
են վերցնում: Մեկ բեռ շրեից մեկ yarie (?) գինի են վերցնում:
Մետաքսի և կերպասեղենի քաղաք բերված ու տարված բեռից օս-
մանյան քառորդ են վերցնում: Ամիդի նահիլենների ուսյաթների և
քաղաքացիների բերած սեխի և ձմերուկի բեռից մեկ սեխ և մեկ

ձմերուկ, վարունգի բեռից մեկ մանգրը են վերցնում: Սակայն եթե [ապրանքը] Մարդինից բերվի՝ յուրաքանչյուր բեռից քառորդ ակչե են վերցնում: Խոտի ամեն մի բեռից մի խուրձ խոտ են վերցնում, փայտի բեռից՝ մեկ փայտ, եղեգի բեռից՝ մեկ կապ եղեգ: Եթե Մարդինից և այլ վայրերից պտուղ բերվի, քառորդ ակչե են վերցնում: Եթե քաղաքացիներն իրենց այգիներից ուտելու համար պտուղներ բերեն, ոչինչ չպիտի տան, իսկ եթե շուկայում ծախելու համար բերեն, այլ ուսյաթների նման [հարկեր] պիտի տան:

Եթե Կեպեղի, Աշուշի և Ռեշի աշիրեթների մարդիկ ոչխար, պանիր և հացահատիկ բերեն, ոչինչ չպիտի տան, տարին մեկ անգամ Մարդինի դուռ [կոչված վայրում] ամեն տան համար մեկ նուկի յուղ են տալիս: Դարձյալ նույնը որոշվեց: Ածխի և բրդի բեռից երկու մանգրը են վերցնում: Եվ այլ հացահատիկներից ըստ նախորդ օրենքի որոշում տրվեց. դոնապանի հարկը տալուց հետո ասեսիյե անվան տակ ոչինչ չպիտի վերցնել:

12. ԱՐԱԲԿԻՐԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԸ

Արաբկիրի լիվայի օրենքների դաֆթարը

1. Արաբկիրի լիվայի կանուննամեի մանրամասնությունը ըստ հնագույն օրենքի:
2. Նախ գյուղում գտնվող ուսյաթներից նրանք, ովքեր չիֆթ ունեն և կարող են մեկ չիֆթ մշակել, մեկ չիֆթից քսանչորս օսմանյան ակչե չիֆթի հարկ են վերցրել, գանձման ժամկետը նեվրուզն է՝ գարնան սկիզբը: Դարձյալ նույնը որոշվեց:
3. Արաբկիրի ամեն մի մյուղից, որը Ստամբուլի շորս քիլեին է հավասար, շահենլիք անվան տակ մեկ քառորդ Արաբկիրի [մյուղ] են վերցրել, այդ հաշվով երեսուներկուսից մեկն է անում. սրա գանձման ժամկետը կալի ժամանակն է: Դարձյալ նույն ձևով արձանագրվեց:
4. Այն տեղերում, որտեղ Արաբկիրի երկու մյուղ հացահատիկ են վերցրել, գանձել են նաև մի մեծ պարկ հարդ: Դա վերացվում է:
5. Կալի ժամանակ հարուստ գյուղերից դուստուրջեֆ (düsturcek) անվան տակ երկու գուլթա ոչխար, իսկ շունետր գյուղերից՝ մեկ ոչխար են վերցնում:
6. Այգիներից այգու խարաջ (bağ haracı) անունով հինգից մեկի հաշվով կանխիկ դրամով [հարկ] են վերցնում: Սրա գանձման ժամկետը խաղողի և շիրայի ժամանակն է:
7. Ոչխարի հարկը. Յուրաքանչյուր ոչխարից մեկ օսմանյան ակչե են վերցնում: Դարձյալ հին ձևը որոշվեց: Սրա վերցնելու ժամանակը գարնան սկիզբը՝ նեվրուզն է. այդ ժամանակ պիտի վերցնել:
8. Ջրաղացի հարկը. Լրիվ տարին աշխատող ջրաղացից տասներվեց Արաբկիրի քիլեով հացահատիկ են վերցնում, որը Ստամբուլի ութ քիլեին է հավասար. կեսը ցորեն և կեսը գարի է:

9. Հայերից ևս մարդագլուխ երեքական օր քրգաղլիք (irgad-lik) են վերցնում և աշխատեցնում, սրա [աշխատեցնելու] պահը կեսը՝ զարնան ցանքսի ժամանակն է, մյուս կեսը՝ հունձքի:

10. Մեղաբեր վայրերում յուրաքանչյուր փեթակից մեկ Արաբկիրի նուկի մեղր են վերցնում:

11. Անասունների հարկը (resm-i mevasi). յուրաքանչյուր կովից երեք օսմանյան ակչե են վերցնում. սրա վերցնելու ժամանակը նեվրուզն է: Սակայն որոշ գյուղեր էլ կան, որոնք [այս հարկը] չեն տվել. դրանք ևս դաֆթարի համապատասխան մասում արձանագրված են:

12. Քաղաքում յուրաքանչյուր ջուհակից տարեկան քսանչորսական օսմանյան ակչե են վերցնում. սակայն գյուղերում չեն վերցնում: Սրա գանձման ժամանակը՝ նեվրուզն է:

13. Վերոհիշյալ հողվածները որոշվեց լրիվ կերպով [պահպանել] նախկինում եղածի պես:

14. Քաղաքում ապրող անհավատների տներից բայրամչեք (bayramcek) անունով մեկական...* էին վերցնում: Դա վերացվում է:

15. Վիլայեթում շորս-հինգ գյուղեր կան, որոնք իրենց հողամշակութայն [եկամտի] կեսն են տալիս, նրանցից չեֆթի հարկ չեն վերցնում: Սերմը և խոփի երկաթը բեյության կողմից է տրվում: Ոչխարի հարկը և այգու հարկը նույնպես չեն տալիս: Հիշյալ գյուղերի բնակիչների հողամշակությունը հինգից մեկի համաձայն է, հարկերը նրանց նման արձանագրվեցին**:

Ուրիշները ինչ որ տալիս են, սրանք էլ նույն ձևով պիտի տան: Նոր դաֆթարում այդպես արձանագրվեց: Կարպետից (?), անասունի կերի յոթից մեկն են վերցնում:

16. Բաջի քամղայի մասին. մետաքսի ամեն մեկ բեռից երկուական Շամի-էշրեֆի են վերցնում, որը քառասունական ակչեի հաշվով, ութսուն օսմանյան ակչե է անում: Վուշի և նման բեռերից քսան ակչե բաջ են վերցնում: Օճառի ու բամբակի բեռից, եթե անցնի ու գնա (տրանզիտ), երեք օսմանյան ակչե են վերցնում, իսկ եթե տեղում վաճառվի՝ երկու նուկի բամբակ և օճառ:

17. Եթե քաղաքում անասուն մորթվի, ամեն մեկ ոչխարից մեկ օսմանյան ակչե և ամեն մեկ եզից՝ երեք ակչե քամղայի հարկ են վերցնում:

18. Քաղաքի կոշկակարների կտրած և գործածած յուրաքանչյուր կաշվից մեկ հագնելիք կաշի են վերցնում, որն իր արժեքով երեք օսմանյան ակչեի է հավասար:

19. Քաղաքում եղած ճաշարանները ամիլի իշխանության տակն են եղել: Այդ կարգը վերացվում է:

20. Ամուսնության հարկ. ամեն մեկ ամուսնացողից մեկ ոչխար են վերցնում:

21. Այս պարտավորությունները, բացի վերոհիշյալ արգելումներից, ըստ նախկին կարգի հաստատվեցին ու նոր դաֆթարում եկամուտ արձանագրվեցին:

Ստամբուլ, Քաղաքալեթի արխիվ,
Դաֆթար № 840
Թվականը՝ 1518 (924)

* Բնագրում բաց է թողնված:

** Այսինքն՝ ըստ վերոհիշյալ ձևի արձանագրվեցին:

13. ՉՄՇԿԱԾԱԳԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԸ

1. Հին ժամանակներից գյուղերում ապրող և չիֆթ ունեցող մուսուլման ուսուցիչները, որոնք նոր դաֆթարում նորից լրիվ չիֆթ են արձանագրված, հիսուն ակչե չիֆթի հարկ և վեց ակչե ըրգադիեի հարկ (resm-i irgadiye) պիտի տան: Կես չիֆթ արձանագրվածները՝ քսանհինգ ակչե չիֆթի հարկ և վեց ակչե ըրգադիե պիտի տան: Սակայն այս վիլայեթի մեծ մասը լեռնոտ լինելով, հողերը լրիվ չիֆթի և կես չիֆթի չեն կարող բավարարել, [ուստի և] գյուղերին չիֆթի հարկ չի նշանակված, հողի հարկ է գրված: [Բայաթները] քանի դեռնյում հող մշակեն, երկու դեռնյումին մեկ ակչե հողի հարկ պիտի տան: Հողը չմշակողները կամ թե հողի հարկը բեննաքի հարկից պակաս վճարողները և չիֆթ ու ցանքս չունեցող ամուսնացածները՝ տասներկու ակչե բեննաքի հարկ և վեց ակչե ըրգադիեի հարկ պիտի տան: Աշխատանքի կարող ամուրի չափահասներից վեց ակչե ամուրիության հարկ (resm-i mücerred) են վերցնում, իսկ ըրգադիեի հարկ՝ ոչ:

Անհավատներից չիֆթի հարկ, բեննաքի հարկ և ամուրիության հարկ չեն առնում. ամեն մի հարկատու անհավատից քսանհինգ ակչե իսպենջ, իսկ ամուսնացածներից վեց ակչե ըրգադիե են վերցնում: Հիշյալ հարկերի գանձման ժամկետը մարտ ամսի նորալուսնի օրն է: Ավելի շուտ չպետք է վերցնել:

2. Մուսուլմանների և անհավատների հողամշակութունից հինգից մեկի (humus) հաշվով են վերցնում. ճանապարհի վրա գտնվող գյուղերից, եթե վեցից մեկ կամ ութից մեկ վերցնելու հիման վրա դաֆթարում գրված լինի, այդ չափով պիտի վերցնել և ոչ ավելի:

3. Մինչև այժմ հիշյալ վիլայեթում ըստ քրդական սովորության թաբիր (tabhir*), շահնեգի (şahnegi), նաիբեք (naibcek),

* تاجير

նիզաբ (hizircak)* և այլ անուններով ու [միջոցներով] առնված [հարկերը] ապօրինի լինելով, կայսերական հրամանով ամբողջովին վերացվեցին: Հին դաֆթարում վերացված լինելով, նորից այդ ձևը պահպանվեց: Նոր դաֆթարում արձանագրված շարիաթական իրավունքները և սովորույթային հարկերը որոշված չափով պիտի վերցնել և դաֆթարին հակառակ ոչ մեկ ակչե և ոչ մեկ հատիկ անգամ չպիտի վերցնել:

4. Եթե մի ուսյաթ մահանա և տղա ունենա, հոր չիֆթի ըրքը, որքան որ է, տղային պիտի անցնի: Սիփահին նրանցից հարկ չի կարող վերցնել: Եթե [մահացողը] որդի չունենա, այլ եղբայր, և եթե ուրիշների տված թափուն եղբայրը տա, սիփահին չիֆթի ըրք ուրիշին չի կարող տալ: Սակայն թշնամական վերաբերմունք ցույց տալով՝ ընդունված չափից ավելին չպիտի պահանջել: Եթե [մահացողից] տղա ու եղբայր չմնան, այլ աղջիկ, կին և կամ թե հորեղբայրներ մնան, այդ դեպքում սիփահինները լիազորված են նրա չիֆթի ըրքը տալ ում որ ցանկանան:

5. Հիշյալ վիլայեթում գործածվող չորս քիլեն մեկ Ստամբուլի քիլեի է հավասար: Դաֆթարում Ստամբուլի քիլեն է արձանագրված, ցորենի և այլ հացահատիկների, սիսեռի, ոսպի և նրանց նմանների համար Ստամբուլի քիլեն իննական ակչե, գարին՝ վեց ակչե և կորեկը՝ չորս ակչե է հաշվված:

6. Վիլայեթում թանկություն լինի, թե էժանություն, ուսյաթներից տասանորդի փոխարեն ակչե չպիտի վերցնել, այլ ցորենը, գարին և այլ հացահատիկները չափելով՝ բնամթերքով պիտի գանձել: Սանջակի բեյերը, զեամեթի տերերը և ուրիշները ուսյաթներից բունությամբ տասանորդի փոխարեն ակչե չպիտի պահանջեն: Եթե պահանջեն, ժամանակի իշխողները պիտի արգելեն:

7. Հիշյալ վիլայեթի այգիների յուրաքանչյուր հարյուր տունկի համար մուսուլմաններից հինգ ակչե և անհավատներից վեց ակչե պիտի վերցնել, ոչ ավելի:

8. Դաշտի պահպանության հարկը (resm-i destbâni): Եթե ձին կամ եզը ու կովը արտ մտնեն ու վնաս պատճառեն, ամեն մեկ անասունի համար տիրոջից հինգական ակչե տուգանք պիտի վերցնել և ցանքի տիրոջ վնասները ևս պիտի հատուցվեն: Եթե անասունը ցանքս մտնի, բայց վնաս չպատճառի, ոչ ոքից բացարձակապես ոչ մի հատիկ և ոչ մի ակչե չպիտի վերցնել:

9. Այս վիլայեթում անցյալում քրդերի բունությունների հետե-

* حضير جاك

վանքով շատ ու շատ ուսուցիչներ ցրվել և ուրիշ վիլայեթներ են գնացել: Այժմ եթե ուսուցիչները, լսելով օսմանյան օրենքի մասին, նորից իրենց տեղերը գան և վերաբնակվեն և եթե վիլայեթը գրանցվելու ժամանակ ուսուցիչներից ոմանք չգրվեն ու դուրս մնան, դրսի էմիանները չպիտի միջամտեն, այլ թիմարի տերերը պիտի տնօրինեն, որովհետև ուսուցիչի որդին ուսուցիչ է, եթե ուրիշ [թիմարի տիրոջ] գրված չլինի:

Անցյալում բռնություն պատճառով փախած և դափթարում արձանագրված աշիրեթներից եթե ուսուցիչներ գան և իրենց համայնքները մտնեն, նրանց [գործում] ևս դրսի էմիանները չպիտի միջամտեն, աշիրեթի տերերը, ովքեր էլ որ լինեն, իրենք պիտի տնօրինեն. նրանց ոչխարի հարկը և այլ հարկերը, աշիրեթների նման, պետություն օգտին պիտի բռնագրավվեն: Սակայն այն աշիրեթից, որը վիլայեթը գրանցելու ժամանակ չգա և չգրանցվի և ամբողջությամբ դուրս մնա և կամ վիլայեթը գրանցելուց հետո գա, նրանց նմաններից ևս տան հարկը (resm-i hane), բաղիմալաները և այլ սովորույթային հարկերը և ոչխարի հարկը պետություն համար պիտի գանձվեն: Ում հողում, որ հողամշակությունը զբաղվեն, բերքի հինգից մեկը հողատիրոջը պիտի տան:

Այս վիլայեթի ժողովուրդը դափթարի պայմաններին դեռևս լավ ծանոթ չլինելու հետևանքով, եթե որոշ քանակի վակֆ այգիներ, հողեր ունեցող մզկիթներ, մենաստաններ և թեքներ նոր դափթարում շարձանագրվեն ու դուրս մնան, վակֆերի գործերին ևս դրսի էմիանները չպիտի միջամտեն: Հնագույն ժամանակներից ոչ ոքի թիմար շարձանագրված ու վակֆի համար հատկացված տեղերը, նախկինի պես, նորից վակֆին պիտի պատկանեն: Վիլայեթը գրանցելու ժամանակ մի գյուղի մշակելի տարածությունը հանդիսացող ու նրա եկամուտ հաշվված հողին ևս էմիանները չպիտի միջամտեն: Սակայն որոշակի սահման չունեցող և անմշակ թողնված այն հողամասերը, որոնք վիլայեթը գրանցելու ժամանակ դափթարում որպես դատարկ ու անմշակ հողամասեր չեն արձանագրվել և միայն հետո են մշակվել ու բարեկարգվել, այդ դեպքում դրսի էմիանները այդ մշակված հողը [պետություն օգտին] պիտի բռնագրավեն:

10. Եթե ուսուցիչի ոչխարի հարկը ('adet-i ağnâm) ամբողջովին պետություն համար է արձանագրված, երկու ոչխարին մեկ ակչե են վերցնում, ոչ ավելի:

11. Յայլաղի հարկը ամեն երեք հարյուր ոչխարից մեկ ոչխար և կամ երեք հարյուր ոչխարի գնի դիմաց երեսուն ակչե են վերց-

նում: Ավելի կամ պակաս լինելու դեպքում այդ ձևով պետք է հաշվել:

12. Յուրաքանչյուր տնից մեկ նուկի յուղ են վերցնում, որը համար է երկու հարյուր դիրհեմի:

13. Ղշլաղի հարկը, որն այստեղ կումե (kume) է կոչվում, յուրաքանչյուր հարյուր տավարից մեկ տավար է՝ երեսուն ակչե արժեքով: Իսկ եթե ավելի կամ պակաս լինի, ըստ այնմ պիտի հաշվել:

14. Այլ տուգանքներ ու բաղիմալան ըստ օսմանյան օրենքի է գրված: Դրանցից շեղում չպիտի լինի:

15. Բուն Չմշկածագից բացի, այլ ուսուցիչներում (ibat) քամ-դան (tamğa) վերացված է: Այսուհետև բուն Չմշկածագից բացի այլ տեղերում ոչ մի ակչե և ոչ մի հատիկ քամդայի հարկ չպիտի վերցնել:

16. Այս վիլայեթում գտնվող գյուղերի բնակիչներից իրենց կամքով [բերքը] միանվագ հանձնելու (hazr) կարողություն ունեցողները՝ թող հանձնեն, անկարողներից՝ [բերքը] բունի կերպով միանվագ չպիտի պահանջել, այլ պիտի մաս-մաս վերցնել:

17. Հիշյալ վիլայեթում հանգուցյալ Փիր-Հյուսեյին բեյի որոշ աղաներն ու նյութարները, որոնք հին ժամանակվանից ուսուցիչներ չեն, այժմ էլ նոր կայսերական դափթարում ուսուցիչներ շարձանագրվեցին և որպես նյութար գլխի ակչեից (baş akçesi) և դիվանական ավարից ('avariz-i divaniye) ազատ արձանագրվեցին: Նրանց դափթարի պատճենը իրենց է տրված: Այսպիսով, նոր դափթարում նյութար գրվածներից և նրանց հարազատ տղաներից նրանց գրանցված վայրերում սիփահիները գլխի ակչե (baş akçesi), ինչպես նաև դիվանական ավարից չպիտի պահանջեն:

Քանի որ վերոհիշյալ վիլայեթը մինչև այսօր Քուրդստանի տիրապետության տակ է գտնվել, հիշյալ նյութարների մեծ մասի որդիները դափթարի պայմանների հետ ծանոթ չլինելով՝ նոր դափթարում չեն գրանցվել և դուրս են մնացել: Այդ պատճառով իսկական նյութար եղողները նոր դափթարում նյութար պիտի արձանագրվեն և իրենց ձեռքում դափթարի պատճենը պիտի ունենան. դափթարից դուրս մնացած նյութարների հարազատ զավակներից ևս գլխի ակչե չպիտի պահանջել:

18. Բաջը հնագույն օրենքով այսպես է որոշված. օրինակ, եթե մետաքսի բեռը գա և անցնի (տրանզիտ), յուրաքանչյուր բեռից հարյուր հիսուն ակչե բաջ և տասներկու ակչե նոկտա բաջի (nokta başı) են վերցնում: Եթե վուշի բեռ գա և անցնի, բեռից քսանհինգ ակչե են վերցնում:

Կտավի բեռից, եթե փոխադրվի, տասնութ ազնե են վերցնում: Եթե բամբակի բեռ դա և անցնի, յուրաքանչյուր բեռից տասներկու ազնե են վերցնում, իսկ օճառի բեռից՝ վեցական ազնե: Սակայն այս հիշվածները եթե տեղում վաճառվեն, վաճառողից յուրաքանչյուր քսան ազնեից մեկ ազնե բազ են վերցնում: Բացօթյա վայր բերված հացահատիկից երեսուն քիլեից մեկ քիլե են վերցնում: Այս բոլորը որոշվեց հնի համաձայն:

19. Բաղիհավայի, ոճրի և հանցագործության դեպքերում պետք է դիմել օսմանյան օրենքին: Շեղում չպիտի կատարվի:

Ստամբուլ, Բաշվերալեթի արխիվ,
Դաֆթար № 16
Թվականը՝ 1514 (948)

14. ԷՐԳԱՆԻԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԳԱՖԹԱՐԸ

1. Էրզանիի նահիյեի կանուննամեի մանրամասնությունը համաձայն Հասան փադիշահի կանունի:

2. Նախկինում մուսուլման ռայաթների հողամշակությունից հինգից մեկն էր վերցվում:

3. Յուրաքանչյուր տնից մեկ բեռ փայտի գին է վերցվում, որը հավասար է տաս սև ազնեի. բացի այդ, մեկ բեռ խոտ, մեկ բեռ հարդ է վերցվել, որով ամեն մի բեռի համար տասական սև ազնե է լինում: Այս երեք տեսակի բեռան գինը հավասար է տաս օսմանյան ազնեի: Սրանց գանձելու պահը, խոտի և հարդի համար՝ կալի ժամանակն է, իսկ փայտի համար՝ աշնան վերջին ամիսը: Այդ ժամանակ պիտի վերցնել:

4. Շահնեգիի հարկ (resm-i şahnegi) անունով երեսուն երկու քիլե բահրա վերցված հողից մեկ քիլե ևս շահնեգի է վերցվում:

5. Վալիջեֆ (valicek) անունով յուրաքանչյուր շիֆթից երկու Ամիդի քիլե ցորեն է վերցվում, որ հավասար է Ստամբուլի մեկ քիլեի:

6. Յուրաքանչյուր տնից տարեկան մեկական օր քրգադի է վերցվում:

7. Տոնական հարկը (resm-i iydiyye) յուրաքանչյուր գյուղից մեկ ուխար է վերցվում, հարուստ գյուղից լավ ուխար, իսկ շունևորից՝ սովորական ուխար:

8. Յուրաքանչյուր տնից քյուքյունջեֆ (tütüncek) անվան տակ վեցական թանգա (tenge) է վերցվել, որը հավասար է 12 օսմանյան ազնեի:

9. Թեմուրջեֆի հարկ (resm-i temürcek) անվան տակ մեկ թանգա է վերցվում, որը հավասար է երկու օսմանյան [ազնեի], ճախբեֆ (râibcek) անվան տակ յուրաքանչյուր տնից մեկ թանգա է վերցվում, որը հավասար է երկու օսմանյան [ազնեի]:

10. Իրվանջեմ անունով յուրաքանչյուր տնից նաև մեկ թանգա է վերցվում, որը հավասար է երկու օսմանի:

11. Սրանց առնելու ժամանակը գարնան՝ նեվրուզի սկիզբն է:

12. Այգիներ ունեցած տեղերից, յուրաքանչյուր հարյուր որթա-տնկից մեկ թանգա է վերցվում, որը հավասար է երկու օսմանյան ակչեի: Պետք է վերցնել խաղողի հասնելու ժամանակ:

13. Յուրաքանչյուր ամուսնացողից որպես ամուսնակաճ հարկ մեկ կոշիկի գին (cizme bahasi) է վերցվում, որն ամենաշատը հավասար է երեսուն ակչեի:

14. Յուրաքանչյուր ջրաղացից որպես ջրաղացի հարկ տարեկան տասնվեց Ամիդի քիլե հացահատիկ է վերցվում՝ կեսը ցորեն, կեսը գարի, որը տարեկան հիսունվեց օսմանյան ակչե է լինում:

15. Յուրաքանչյուր կովի և էջի համար, որպես անասունների հարկ յոթական սև ակչե է վերցվում, այն հաշվով, որ երկու և մեկ երրորդ օսմանի է լինում: Բրդից (?) տասնչորս սև ակչե է վերցվում, որը հավասար է չորս և կես օսմանյան ակչեի:

16. Յուրաքանչյուր ոչխարի համար, որպես արտավայրի հարկ (resm-i mera'i) երկու և կես սև ակչե է վերցվում, որը եթե լրիվ երեք լինի, հավասար է մեկ օսմանյան [ակչեի]: Այս հաշվով պիտի վերցնել:

17. Բացի այդ, յուրաքանչյուր հարյուր հիսուն գուխ անասունի համար մեկ լավագույն ոչխար կամ այծ են վերցնում, ինչպես և չորս նուկի յուղ, չորս նուկի մազ, և չորս նուկի մածոնի պանիր (keş): Իսկ Գեֆերիզ գյուղից, վերև հիշվածներից բացի, վերցնում են նաև չորս նուկի պանիր:

Վերև հիշված բոլոր տուրքերն վերցվում են մուսուլմաններից: Որոշվեց նույն ձևով:

Վերոհիշյալ արոտավայրի անասունների [հարկերի] վերցնելու ժամանակը գարնան (nevrüz) սկիզբն է: Այդ ժամանակ պիտի վերցնել, ոչ առաջ:

18. Էրզանի քաղաքի հասարակության հողամշակութային զբաղվող մուսուլմաններից [բերքի] հինգից մեկի հաշվով է վերցվում: Այգիներից ևս չորս հազար սև ակչե մակթու են տալիս, որ հավասար է հազար երեսուն օսմանյան ակչեի: [Բացի այս] վերցվում է նաև մեկական բեռ փայտ: Դրանցից այգու փողը վերցվում է խաղողի ժամանակ, իսկ փայտինը՝ աշնան վերջին ամսին, այսինքն՝ ձմռան սկզբին:

19. Քաղաքի հայերից ևս այգու խարաջ (bağ haracı) անունով

տասներկու հազար սև ակչե մակթու է վերցվել: Սակայն այդ ժամանակ [քաղաքի] բարեշինությունը լավ է եղել, իսկ ներկայումս նրանից պակաս լինելու համար, իննը հազար սև ակչե արձանագրվեց, որը հավասար է երեք հազար օսմանյան ակչեի:

20. Թյուքունջեմ (tütüncek) անունով դարձյալ յուրաքանչյուր տնից մեկ շահրուխի է վերցվում, որը վեց օսմանյան ակչե է անում:

Նախըջեմ անվան տակ նույնպես չորս հարյուր սև ակչե մակթու է վերցվում:

Բայրամջեմ անվան տակ նույնպես չորս հարյուր սև ակչե է վերցվում, երեքը՝ մեկ օսմանյան ակչեի հաշվով: Սրանց վերցնելու ժամանակը գարունն է, սակայն բայրամջեմի կեսը մեկ բայրամում, կեսն էլ մյուս բայրամում է վերցվում:

21. Յուրաքանչյուր շնչից տասներկուական ըրգադի է վերցվում, ամեն մի օրվա համար մեկ թանգայի հաշվով, որը օսմանյան քսանչորս ակչե է անում: Սակայն [սիփահիները ռայաթներին] աշխատեցնում են և նրանցից ավելի [ըրգադի է են վերցնում: Որոշվեց նույն ձևով: Վերցնելու ժամանակը, կեսը՝ գարնան սկզբին՝ ցանքսին, մյուս կեսը՝ հունձքին :

22. Յուրաքանչյուր տուն մեկական բեռ փայտ է տալիս. անասուն ունեցողները նրանց միջոցով, չունեցողները շալակով են այն փոխադրում և տանում, մեկ բեռի արժեքը մեկ օսմանյան ակչե է:

23. Ամուսնակաճ հարկի համար տաս շահրուխի է վերցվում, որը հավասար է վաթսուն օսմանյան ակչեի: Գյուղի հայերի հողամշակությունից հինգից մեկն է վերցվում, նրանց ըրգադիի հարկը մեկ շնչից տասներկու մուշակ* (موشակ) է, որի մեկ օրը վեց օսմանյան ակչեի հաշվով՝ քսանչորս ակչեի է հավասար: Վերցնում են երկու մասով՝ գարնան սկզբին ու հունձքի ժամանակ:

24. Յուրաքանչյուր տնից քյուքունջեմ (tütüncek) անվան տակ դարձյալ ութական թանգա է վերցվում, որը հավասար է տասնվեց օսմանյան ակչեի:

Վերցնում են գարնանը: Սա փայտի, խոտի և հարդի գնի համար է:

25. Ծահնեգիի հարկ (resm-i şahnegi) անվան տակ հացահատիկներից յուրաքանչյուր երեսուներկուսից մեկն են վերցնում: Սա վերցնում են կալի ժամանակ:

26. Վերոհիշյալները նույն ձևով հաստատվեցին:

* Մուշակ (موشակ) հավանաբար հայերեն մշակ բառն է:

27. Այս հարկերը վճարողները հիշյալ լիվայի տասնչորս հայկական գյուղերն են: Այդ հիշված հարկերը տալուց բացի, դարձյալ այդ գյուղերի ռայաթների վրա որոշ մակթունեք էլ կան, որոնք նրանց հնազույն հարկերից են և յուրաքանչյուր գյուղը ինչ քանակով որ տվել է, այստեղ հիշվում է՝

ա) Առաջին Բայուր գյուղը, որը հայկական գյուղ է չորս հազար տալիս է, որպես այգու խարաջ (bağ haracı), որի երեքը օսմանյան ակչեի հաշվով է, երեք հարյուր սև ակչե՝ քեմուրջեք, չորս հարյուր սև ակչե՝ նաիրջեք, երկու հարյուր սև ակչե՝ դիվանջեք, երկու հարյուր սև ակչե քայրամջեք, երկու հարյուր սև ակչե՝ շիրեջլըք և չորս հազար սև ակչե իբրև սև սալգուն (kara salgun):

բ) Նիֆե գյուղը ևս տալիս է չորս հազար սև ակչե՝ որպես այգու խարաջ, չորս հազար չորս հարյուր սև ակչե՝ սև մալ* (kara mal), երեք հարյուր սև ակչե՝ նաիրջեք, երկու հարյուր սև ակչե՝ դիվանջեք, երկու հարյուր սև ակչե՝ քայրամջեք, երկու հարյուր սև ակչե՝ շիրեջլըք, մեկ Ամիրդի մյուղ հացահատիկ՝ բեվվաբի (resm-i bevvabi) Այս հարկերը հիշված գյուղերի բնակիչներին հարկերն են. դարձյալ նույն կերպով որոշվեց... (տասնհինգ գյուղ առանձին-առանձին նույն ձևով արձանագրված են)**:

28. Բաջի մասին: Մետաքսի թամղան յուրաքանչյուր Ամիրդի մենի համար (որն հինգ հարյուր դիրհեմ է) տասներկու սև ակչե քաջ է վերցվում, որը չորս օսմանյան ակչե է լինում, Եզդի կերպասի յուրաքանչյուր մենից քսանչորս սև ակչե է վերցվում, որը հավասար է ութ օսմանյան ակչեի: Եթե Ռումի, Հալեպի, Շամի (Սիրիայի) և Եզիպտոսի կերպասներ են փոխադրվում, սրանցից ևս մետաքսի օրենքով, մեկ մենից տասներկու սև ակչե է վերցվում: Եթե Ռումի կողմից եվրոպական (ֆրենզի) կերպաս, շաթմա և սրանց նման կերպասներ են փոխադրվում, դրանք ևս կերպասի նման են հաշվում մեկ մենից քսանչորս սև ակչե է վերցվում, որը ութ օսմանյան [ակչե] է լինում: Եթե շաքարի, լեղակի և սրանց նման բուրբոմնավետ ապրանքներ են փոխադրվում, յուրաքանչյուր մենից մեկ և կես ակչե քաջ է վերցվում, որը հավասար է կես օսմանյան ակչեի: Եթե օձառ, հինա, բամբակ, պայտ և սրանց նման ապրանքներ են փոխադրվում, յուրաքանչյուր բեռից տասներկու սև ակչե քաջ է վերցվում, որը հավասար է չորս օսմանյան ակչեի: Եթե վուշի բեռ

* Սև մալ՝ սևատավար (կով, եզ, գոմեշ):

** Փակագծերի ծանոթությունը թուրքերեն բնագրի հրատարակիչ Օ. Լ. Բարկանին է:

է փոխադրվում, յուրաքանչյուր բեռից հարյուր սև ակչե քաջ է վերցվում, որը երեսուներեք օսմանյան ակչե է, իսկ եթե տեղում է վաճառվում, երկու հարյուր սև ակչե թամղա է վերցվում, որը հավասար է վաթսուներեք օսմանյան ակչեի: Եթե տեղում բամբակ, օձառ, հինա է վաճառվում, ամեն մեկ բեռից չորսական նուկի թամղա է վերցվում. մեկ նուկին հավասար է երկու հարյուր դիրհեմի: Եթե թարմ պտուղ է բերվում և տեղում վաճառվում, յուրաքանչյուր բեռից մեկ նուկի է վերցվում: Եթե գետորի բեռ է փոխադրվում յուրաքանչյուր բեռից մեկ շահրուխի քաջ է վերցվում, որը հավասար է վեց օսմանյան ակչեի: Եվ եթե էրգանիի ռայաթներն իրենց այգիների գինին վաճառելու տանեն, ձիու և ջորու բեռից երկու հասանքեկի և էշի բեռից մեկ հասանքեկի քաջ է վերցվում իսկ մեկ հասանքեկին հավասար է երկու օսմանյանի: Եթե ձի, ջորի և այլ սրանց նման անասուններ են վաճառվում մեկ էշոբֆիից մեկ հասանքեկի քաջ է վերցվում, որը հարյուրին չորսի հաշվով է:

Հիշյալ նահիեյում արտադրված բամբակի դիվանին վերցնելուց հետո, որոշ ռայաթների արտերից բամբակը մակթու ձևով վաճառում և իրենց միջև կտավի հաշվով՝ գնողից յուրաքանչյուր [թոփ] կտավի համար մեկ օսմանյան ակչե թամղա է վերցվում: Եթե կավածք՝ տուն, այգի, ջրաղաց և կամ որևէ այլ բան է գնվում, յուրաքանչյուր էշոբֆիից մեկ թանգա թամղա է վերցվում, որը հարյուրին չորս էշոբֆիի հաշվով է:

Չուվնակների մասին. քաղաքում գտնվող ամեն մեկ ջուհակի հորից ամսական չորս սև ակչե, իսկ գյուղում գտնվող ջուհակի հորից՝ տարեկան մեկ թանգա է վերցվում:

Խաղախորդարունի մասին. Եթե ոչխարի և այծի մորթի խաղախորդարան է բերվում, երկու մորթուց մեկ սև ակչե է վերցվում. կաշվից ևս կես շահրուխի է վերցվում, որը հավասար է երեք օսմանյանի:

Ուլխարի թամղայի մասին. Քաղաքում կամ գյուղում մորթված յուրաքանչյուր գլուխ ոչխարի համար իննը սև ակչե, իսկ կովի ու եզան համար տասնութ սև ակչե թամղա է վերցվում:

1. Էրգանիի լիվային ենթակա Չունգել և Հասարթեն նահիյեների կանուննամեի մանրամասնությունը՝ համաձայն Հասան փաղիշանի օրենքի:

2. Առաջին. գյուղում ապրող թե մուսուլմանների և թե անհավատների յուրաքանչյուր շիֆթիից որպես շիֆթի հարկ ութական թանգա է վերցվում, որը հավասար է տասնվեց օսմանյան ակչեի:

3. Անհավատներից մուշակի հարկ (resm-i muşak) մարդագուլի տաս թանգա է վերցվում, որը քսան օսմանյան ակչե է անում: Սակայն մուսուլմաններից չի վերցվում:

4. Մուսուլմանների հողամշակութունից յոթից մեկն է վերցվում, որը հավասար է երկու օսմանյան ակչեի:

5. Այգի ունեցող անհավատների յուրաքանչյուր տնից վեց բաժակ շիրե է վերցվում և մեկ բաժակի համար մեկական թանգա, որը տասներկու օսմանյան ակչե է անում:

6. Ռահկ (رحك) անունով մի զամբյուղ կա, որը ձիու բեռան մեկ հակն է (դենգ): Քաղաքացիներից, թե՛ մուսուլման և թե՛ անհավատ, որոնք այգի ունեն, մեկ զամբյուղ խաղող են վերցնում, սակայն գյուղացիներից չեն վերցնում: Երկու հայկական գյուղեր կան, նրանցից վերցնում են:

7. Մեդրի հարկը. մեկ փեթակից մեկ թանգա են վերցնում, որն երկու օսմանյան ակչե է անում:

8. Ոչխարի հարկը. երկու ոչխարից մեկ ակչե են վերցնում:

9. Անասունի հարկը. մեկ գլուխ ձիու, էջի, կովի և եզան համար մեկական թանգա են վերցնում, որը հավասար է երկու օսմանյան ակչեի:

10. Ամուսնություն հարկը. յուրաքանչյուր ամուսնացողից մեկական ոչխար են վերցնում:

11. Հիշված վեց գյուղից հողի վարձ (icare-i zemin) անվան տակ որոշ քանակությամբ մեղր և մակթու ոչխար է վերցվում հետևյալ կերպ՝

Էրբուդ գյուղ (اربود)	Հերհամենե գյուղ (هرهمنه)
մեղր ոչխար	մեղր ոչխար
8 100	3 2
Արմենե գյուղ (ارمنه)	Աուդ գյուղ (اود)
մեղր ոչխար	մեղր ոչխար
8 9	4 9
Կարաջա-կայա գյուղ (قرجه قيا)	Էյլուս գյուղ (ايلوس)
մեղր ոչխար	մեղր ոչխար
2 2	4 2

12. Այս կարգը, որ սկզբից ի վեր գոյութուն է ունեցել, որոշվեց [նույն ձևով] և նոր դաֆթարում արձանագրվեց: Սակայն այգի

ունեցող անհավատներից որպես շիրեջլըբ յուրաքանչյուր տնից դարձյալ մեկական թանգա են վերցրել: Դարձյալ ամեն տանից երկուական հավ են վերցրել: Այս կարգը բոլորովին վերացվում է, [սիփահինների համար] նոր դաֆթարում եկամուտ գրված չլինելով, ոչինչ չպիտի վերցնել: Իբրև տունական (հարկ) (idyiyye) յուրաքանչյուր տնից մեկ ոչխար են վերցրել: Այս ևս վերացվում է:

13. Քաղաքում եղած սպանդանոցի համար, քաղաքում մորթված և վաճառված ոչխարից մեկական թանգա է վերցվում: Իսկ կովի և եզան համար դրա կրկնակին:

14. Քաղաքում եղած ջուհակի խանութից իբրև հորի իրավունք (kuyu hakkı) տարեկան շորս թանգա է վերցվում, որը հավասար է ութ ակչեի:

Յուրաքանչյուր կոշկակարից տարեկան յոթ զույգ կոշիկ է վերցվում, ամեն մեկը (զույգը) վեցական ակչեի հաշվով քառասուներկու ակչե է անում: Այս նահիյեից, բացի սրանցից, բաշի թամդա և տուրֆեռ չեն վերցվում: Սակայն Հեսարանոք حصار انوك նահիյեում շիֆթի հարկի համար տասներկու թանգա է վերցվում, որը քսանչորս ակչե է անում: Եվ դունգեշի* իրավունք [անունով] մուշակ անհավատներից տաս թանգա է վերցվում: Սրանք դրա կեսն են տալիս, այսինքն հինգ թանգա, որը տաս օսմանյան է անում: Ցանքսերը, այգիները և այլ կանունները դունգեշի հաշվով են:

Ստամբուլ, Բաշվեբալեթի արխիվ
Դաֆթար № 840
Թվականը՝ 1518 (924)

* دونكش

15. ՄԱԼԱԹԻԱՅԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԸ

Սուրբանական նոր կանոննամի պատճենը, որը գրված է համաձայն բարձր հրամանի

1. Մալաթիայի կազայում բրինձ (çeltük) ցանողների յուրաքանչյուր շաբնեի (çabne) համար (որը քսանչորս քիլե է, իսկ մեկ քիլեն Ստամբուլի քիլեի կեսն է) երկու հարյուր ակչե է վերցվել, հարյուր ակչեն բերքահավաքի սկզբին: Դարձյալ այս ձևով պիտի վերցվի: Սակայն [հարկի] ամեն մեկ մասը երկու օսմանիի հաշվով պիտի վերցնել, ոչ ավելի: Երբեմն, հարկի մի մասը գանձվելուց հետո, եթե երկնային աղետի հետևանքով ոչ մի բերք չի ստացվել, հարկի մյուս մասն էլ բռնությամբ են վերցրել: Այն ժամանակ, երբ ուայաթը ոչ մի եկամուտ չի ստանում, հարկի վերջին մասը չպիտի վերցնել:

2. Որոշ սիփահիներին և վակֆի, մյուլքի տերերին եկամուտ արձանագրված գյուղերի և դաշտերի եզերքին [ուայաթները] բրինձ են ցանել և երեք տարի հողը մշակելով, սիփահիներին, վակֆի և մյուլքի տերերին ոչինչ չեն տվել: Չերքեզների (çerakise) ժամանակվանից մինչև օսմանյան փաղիշահոյության կողմից նվաճումը [այստեղ] գործադրվող օրենքն այն է հղել, որ երբ սիփահինի [հողում] վակֆի և մյուլքի սահաններում բրինձ են ցանել, դրանց հողատիրոջը տասից մեկն են տվել: Դարձյալ այդպես պետք է վարվել, բռնություն չպիտի կատարվի:

3. Որոշ գյուղերում ու դաշտերում տասանորդի որոշ մասը մուկաթա (mukata'a) է արձանագրված: Այդ մուկաթաան վերցնելուց հետո որոշ դատարկ տեղերում և ծառերի արանքում բանջարեղեն մշակելիս նրանցից տասանորդ են վերցրել: Եթե մշակվող տեղերում բանջարեղեն, սոխ և այլ նման բանջարեղեններ լինեն, այդպիսիներից ոչինչ չպիտի վերցնել:

4. Եթե հացահատիկներ մշակվեն, տասանորդը (öşür) երկու անգամ պիտի վերցվի:

5. Բաշ: Նվաճման սկզբից մինչև այսօր [տրանզիտ] անցնող մետաքսի բեռից տասնհինգ, շուխայի, քաթանի և այլ բեռերից՝ երկուական օսմանյան ակչե են վերցրել: Դարձյալ այս հաշվով պիտի վերցնել, ոչ ավելի: Մախված կաշվի, թաղիքի, ծածկոցի, պայտի, մեղրի, յուղի, կուպրի, գիտորի, ներկի, հինայի, բամբակի, մորթու [արժեքի] քառասուն ակչեից մեկ ակչե են վերցրել: Սակայն Չերքեզների ժամանակ հիշյալ ապրանքների նման այլ բեռների յուրաքանչյուր բեռից երկու օսմանյան ակչե են վերցրել: Երբ այս կարգի մասին դիմում ներկայացվեց պետության բարձր ատյանին, հրամայվեց, որ հին օրենքի համաձայն վերցնեն. ոչ ավելի:

Սև շուկայի բաշը (kara bazar bacı). յուրաքանչյուր ոչխարից մեկ օսմանյան ակչե վերցնելուց հետո՝ ոչխար, գառ, պանիր, մաժուն և նման ապրանքներ վաճառելիս հաշվառումները նորից բաշ են վերցրել: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Հիշվածի համաձայն, ամիլը բաշ վերցնելուց հետո հաշվառումները բացարձակապես չպիտի միջամտեն:

Փեթալը (kevvere). հին ժամանակից ի վեր յուրաքանչյուր փեթակից մեկական ակչե են վերցրել, կեսը՝ թիմարի տերը և մյուս կեսը՝ վակֆի և մյուլքի տերերը: [Նույնը] առաջվա նման պիտի վերցնել: Միրիլիվան և թիմարի տերերը ավելին չպիտի վերցնեն: Սանջակի բեյերը և այլ սիփահիները իրենց ուայաթների փեթակների ուրիշ սիփահոյ թիմարում կամ վակֆի, մյուլք գյուղերում և հողամասերում գտնվելու [դեպքում] «իմ ուայաթի փեթակն է» ասելով՝ փեթակի հարկի կեսն են վերցրել: Փեթակը որտեղ որ մեղր տա, հարկը այդտեղի սիփահուն, մյուլքի և վակֆի տերերին պիտի պատկանի: Ռայաթի սիփահոյ կողմից՝ «իմ ուայաթի փեթակն է» ասելով՝ հարկ պահանջելն անտեղի է. ուայաթի սիփահին չպիտի միջամտի:

7. Ջրաղացի հարկը (resm-i asiya) լրիվ տարին աշխատող ջրաղացից վաթսուն ակչե, վեց ամիս աշխատողից՝ երեսուն ակչե, երեք ամիս աշխատողից՝ տասնհինգ ակչե է արձանագրված: Այդ հաշվով էլ պիտի գանձվի, ոչ ավելի: Սակայն ինչ էլ որ վերցվի, մյուլքի տերը կամ վակֆի տերը թիմարի տերերի հետ միասին պիտի բաժանի:

8. Միրաբի հարկը (resm-i mirabi) հին դաֆթարում տաս ակչե է որոշված և միրիլիվային եկամուտ է արձանագրված: Այդ հարցի

ապօրինութեան կապակցութեամբ բարձրագույն ատյանին գանգատ ներկայացվեց, որի հետևանքով դրա վերացման մասին նվիրական հրաման շնորհվեց: Ներկայումս այդ նվիրական հրամանի հիման վրա, հիշյալ կարգի ապօրինություն լինելու մասին դարձյալ պետութեանը դիմում տրվեց՝ ամբողջովին վերացնելու համար: Բարձր հրամանի համաձայն փաղիշահական դաֆթարում [այն] եկամուտ չարձանագրվեց:

9. Սանջակի բեյերը, սուբաշիններն ամեն տարի իրենց խոտն ու բրնձի ցանքերը հնձելու և բրինձը կենդանիների միջոցով մաքրելու համար, քաղաքի և գյուղերի յուրաքանչյուր տնից մեկական մարդ քշել տարել ու մոտ տաս-տասնհինգ օր խոտ ու բրնձ հնձել և փոխադրել տալով, մուսուլմաններին իրենց աշխատանքից հետ են պահել, բունություններ են գործադրել: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Սանջակի բեյերը և սուբաշիններն իրենց խոտն ու բրնձի արտը հնձելու ու մաքրելու կարիքի դեպքում իրենց ակշենբրով պետք է մարդիկ վարձեն, բերքը հնձել, մաքրել և փոխադրել տան, ուստի ներդրություն չպիտի տան:

10. Ըստ հին օրենքի այգիներից որոշված գումարը առնելուց հետո սուբաշինություն (subaşılık) և գրագրություն (yazıcılık) անվան տակ երկուական ակշե, իսկ կալի ժամանակ, ցորեն ու գարին կալսելիս կալի ակշե (harman akçesi) անվան տակ երեքական ակշե են վերցրել: Սուբաշինները աշնանը գյուղից գյուղ շրջագայելով ուստիներից ձմեռային պաշար (kış yegüsü) անվան տակ որոշ չափի ցորեն ու գարի, մեկական տավար (եզ կամ կով), որոշ քանակի յուղ ու մեղր, թաղիք ունեցողներից՝ մեկական թաղիք, որոշ չափի հարդ ու խոտ վերցնելով՝ ուստիներին ներդրություն են պատճառել: Որոշ սուբաշիններ իրենց մարդկանցով գյուղից գյուղ շրջագայելով՝ ուստիների բնակարաններում մնալով բռնի կերպով սննդամթերք և անասունի կեր վերցնելով՝ մուսուլմաններին ներդրություն են պատճառել և ձմեռ ժամանակ ուստիների յուրաքանչյուր ծխից մեկական բեռ փայտ են վերցրել: Այդ բոլորը փաղիշահական բարձր հրամանին հակառակ ապօրինություններ լինելով՝ վերացվում են: Ըստ օրենքի իրենց հասանելիքներից բացի ոչ մի ակշե և ոչ մի հատիկ չպիտի վերցնել: Եթե սանջակի բեյերը և սուբաշինները ձմեռվա փայտի կարիք ունենան և եթե ուստիների կամքովն ու ցանկություններով նրանց բնակարաններում իջեանեն, [և ընդհանրապես] ինչի որ կարիք ունենան, ուստիներից օրվա [որոշված] գնով (narh-i ruzi) և իրենց ակշենբրով պետք է վերցնեն և ոչ մի կերպ հակա-

ռակ օրենքի ուստիների նկատմամբ բունություն չպիտի գործադրեն:

11. Ուստիներից որոշված տասանորդը բերքահավաքի ժամանակ չեն վերցնում, ժամանակն անցնելուց հետո իրենց ցանկացած գնով [փոխարենը] ակշենբր են վերցնում: Հացահատիկը չափող անձինք չափելու (ölçücülük), գրագրության (yazıcılık), շեմարանի (ambardarlık), ախոռապետության (emiriahurluk) անունների տակ յուրաքանչյուր շաբից (çab) մեկական ակշե են վերցնում: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Առաջվա նման տասանորդը երկու անգամ վերցնելուց հետո, ավելի ոչ մեկ ակշե և մի հատիկ չպիտի վերցնել: Տասանորդը ուստիների վրա թողնելով, ակշե չպիտի վերցնել: Որոշված տասանորդն անմիջապես շեմարանները պետք է տանել:

12. Ըստ օրենքի ուստիներից չիֆթի հարկ վերցնելուց հետո, սուբաշինները և այլ սփիահինները քանապարհի ակշե (yol akçesi) անվան տակ վեցական ակշե են վերցնում: Ոչխարը համրելիս, ըստ օրենքի, երկու ոչխարին մեկ ակշե հարկը գանձելուց հետո չուրուֆ ակշեսի (çubuk akçesi) անվան տակ յուրաքանչյուր հոտից կամ մեկական ոչխար և կամ որոշ չափի ակշե են վերցնում: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Օրենքի համաձայն, հարկերից հետո, ո՛չ մի ակշե և ո՛չ մի հատիկ ավելի չպիտի վերցնել:

13. Որե՛կ մեկին համայնֆի ֆեթխուդա (il kethüdası) նշանակելով, սուբաշինները՝ նրա միջոցով շեմանված ապօրինություններ թույլատրելով՝ մուսուլմաններին ներդրություն են պատճառում: Համայնֆի ֆեթխուդայությունը բարձրագույն ատյանի հրամանով վերացված լինելով, արգելվում է: Հրամանին հակառակ համայնքի քեթխուդա չպիտի նշանակել և մուսուլմաններին ներդրություն չպիտի պատճառել:

14. Կափանով եթե իրեր, հացահատիկ, օձառ, արմավ, թուզ և այլն են կշռել, մեկ բեռին երկուական ակշե վերցնելուց հետո, յուրաքանչյուր բեռից դարձյալ որոշ բան են պահանջել: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Միայն յուրաքանչյուր բեռի համար երկուական ակշե, հակից՝ մեկական ակշե և կես՝ հակից կես ակշե տալուց հետո իրերից մի հատիկ անգամ չպիտի վերցնել և [ուստիներին] ներդրություն չպիտի պատճառել:

15. Շուկա բերվող պտուղների բեռից, վաճառվի թե ոչ, երկու ակշե և որոշ քանակի պտուղ են վերցնում: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Սակայն եթե բեռը վաճառվի երկուական ակշե պիտի վերցնել, պակասից՝ ըստ հաշվի, ոչ ավելի:

16. Եթե մեկը քաղաքից ցորեն ու գարի գնի ու տանի, լրիվ բեռ լինի, թե ոչ, մինչև իսկ եթե երեք շորս քիլեի չափ լինի, երկու-ական ակչե քաջ են վերցնում: Լրիվ բեռ լինելու դեպքում միայն երկուական ակչե պիտի վերցվի: Պակասից՝ ըստ հաշվի, ոչ ավելի:

17. Սրանից հետո սովորութուններին ծանոթ անձինք (ehl-i örf) այս օրենքից չպիտի շեղվեն. խախտողներին ժամանակի իշխողները պիտի արգելեն: Արգելքը չհարգողներին մասին պետական դրան պիտի դիմել:

Ստամբուլ. Բաշվեքալեթի արխիվ.
Դաֆթար. № 584
Թվականը՝ 1528 (935):

16. ԲԵՀԻՍՆԻ ՎԻՎԱՅԵԹԻ ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆ

1. Փաղիշահական հրամանով դաֆթար կազմելու համար, երբ հիշյալ վիլայեթը գրանցվում էր, յուրաքանչյուր գյուղի և մշակելի տարածություն եկամուտների իրազեկ մարդկանցից և ուսյաթներից հարցնելիս պարզվեց, որ բեյերի բռնությունից ուսյաթները հանգիստ չեն ունեցել, դաղթի և վերադարձի հետևանքով, յուրաքանչյուր գյուղից և մշակելի տարածությունից թե ինչքան հացահատիկ կստացվի [իրազեկ մարդիկ և ուսյաթները] «չգիտենք» ասացին: Սակայն աշխարհի ապավեն վսեմ փաղիշահն այս վիլայեթը նվաճելիս, Բեհիսնի սանջակը (վիլայեթը) Ալի բեյին է տվել և օսմանյան օրենքի համաձայն, [վերջինս] որպես տասանորդ (öşür) բերքի ութից մեկը չափել և վերցրել է: Նա հայտնեց, որ ուսյաթները ցանկանում են [իրենց վիլայեթում] օսմանյան օրենքի գործադրումը: Այս հիման վրա [հարցը] քննարկվեց և [որոշվեց]՝ տաս քիլեից մեկ քիլե տասանորդ վերցնել, որից մեկ քառորդ քիլե՝ իբրև սալարիե (salâriye), որով ութից մեկ քիլե տասանորդ կլինի. այդ հիման վրա դաֆթարում եկամուտ արձանագրվեց:

Այգու հարկը (bağ resmi) ամեն մի հարյուր պտղատու ծառից երկու ակչե է վերցվել. դաֆթարում դարձյալ այս ձևով եկամուտ գրանցվեց: Որոշ գյուղերում այգեպաններ կան, որոնք այգիներում հացահատիկ ցանելով՝ տասանորդի փոխարեն խառաջ են տվել: Հին սովորության համաձայն դաֆթարում դարձյալ խառաջ արձանագրվեց: Սակայն, եթե չցանեն և անմշակ թողնեն, դարձյալ խառաջը պիտի տան: Փեթակի եկամտից տասանորդ արձանագրվեց. սակայն այս մասին արդարությունը պաշտպանելու համար որոշվեց՝ լավագույն [փեթակից] շատ, միջակից՝ միջակ և հասարակից՝ քիչ և քոլորից միատեսակ չվերցնել...

2. Նախկինում այս վիլայեթի սանջակի բեյերն [առհասարակ], իսկ մի տարի առաջ նրանց ուղարկած մարդիկ հիշյալ վիլայեթի

ժողովրդից հիսուն ոսկի վերցրել և [իրար մեջ] բաժանել են: Այնուհետև սանջակի բեյն անձամբ գալով խլաթ թափուսու (hilat tapusu) անվան տակ երկու հարյուր ոսկի է վերցրել: Հետո սանջակի բեյը յուրաքանչյուր գյուղի քեթխուդային խալաթ տալով, «ձեզ քեթխուդա նշանակեցի» ասելով, իբրև քեթխուդալըկ ակչեսի (kethüdalik akçesi), յուրաքանչյուր գյուղի բնակիչներից որոշ քանակի ակչես է վերցրել: Յայլաղի ժամանակ սար բարձրանալիս յայլաղի մոտակա գյուղից դեվրե (devre) է վերցրել: Բերքահավաքի ժամանակ սանջակի բեյի մարդիկ չիֆթ ունեցողից կաիմե (kaime) անվան տակ ութ քիլե գարի, չիֆթ չունեցողից՝ չորսական և հնգական ակչես են վերցրել բեյի համար: Սրանցից բացի, սանջակի բեյի խաս և սիփահու թիմար եղող գյուղերի յուրաքանչյուր ռայաթից, տասանորդը վերցնելուց հետո, տասանորդի քանակի համաձայն, յուրաքանչյուր ութ քիլեից մեկ քիլե շահնելիֆ (şahnelik), իսկ ամեն մեկ կալից՝ մեկ քիլե եմլիֆ (yemlik) են վերցրել: Հիշյալ ապօրինություններն, այսինքն սանջակի բեյի վերցրած խլաթ թափուսուն, քեթխուդալը արլըղը (kethüdalik ağırlığı), դեվրեն, կայիմեն և սանջակի բեյի մարդկանց գանձած խանե ակչեսին, շահնելիֆը և եմլիֆը ամբողջովին վերացվում են: Դրանց փոխարեն սալարիե և չիֆթի ակչես է նշանակվում: Սալարիեն հացահատիկներից՝ ցորենից, գարուց, խոտից, հաճարից, կորեկից, վուշից, և բանջարեղենից պետք է վերցվի: Սիսեռից, ոսպից և սև ոսպից, որին այս վիլայեթում քյուշնե (küşne) են ասում, քունջութից և բամբակից [սալարիե] վերցնելը օրենք չէ: Դաֆթարում ևս եկամուտ չի արձանագրված: Սակայն դաֆթարը հիշյալ վիլայեթում գործածվող Հալեպի ակչեսի հիման վրա է գրված, ռայաթներից գանձվելիքը հիշյալ ակչեսի համաձայն պիտի վերցնել, օսմանյան չպիտի պահանջել և չպիտի վերցնել:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 234
Թվականը՝ 1519 (925).

17. ԿԱՐԱՄԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԿԱՆՈՒՆԱՄԵՆ

Բաջի և դաշաի պահպանության (bâc ve deştânî) հարցի մասին

1. Մուսուլմանը կամ անհավատը եթե դրսից քուրձ (kebe) և քաթկոց, կաշի և նման այլ ապրանքներ է բերում ու ծախում, քառասուն ակչեսից մեկ ակչես են վերցնում: Կերպասեղենի բեռից, պղպեղի և դերձանի, ասվի, Դամասկոսի կերպասի (kemhâ), քաթանի, բամբակի, անագի, կապարի և այլ նման ապրանքների յուրաքանչյուր բեռից երկու ակչես են վերցնում: Թարմ պտուղի բեռից՝ բերքը սակավ լինելու ժամանակ, մեկ ակչես, առատ լինելու ժամանակ երկու երեք բեռից մեկ ակչես են վերցնում: Մարխի (çira) բեռի քառասուն ակչեսից մեկ ակչես են վերցնում: Բերդը մտնող յուրաքանչյուր փայտի բեռից դոնապահի համար մեկական փայտ են վերցնում: Կարամանում նման այլ բեռներից դռան տարֆ (kapu resmi) անվան տակ չորս բեռից մեկ ակչես է վերցվել. սրանից հետո ոչինչ չպիտի վերցնել: Շուկայում վաճառվող կովի և եզի համար երկու ակչես են վերցնում, մեկը՝ գնողից, մեկը՝ վաճառողից: Կափանով կշռվող ապրանքների մեկ կանթարի համար երկու ակչես են վերցնում, մեկը՝ գնողից, մեկը՝ վաճառողից: Դրսից ոչխար բերողից եթե մորթում ու վաճառում է կամ չի մորթում, երկու ոչխարին մեկ ակչես են վերցնում: Տեղական մսավաճառից, եթե [ոչխար] է մորթում ու վաճառում, չորս ոչխարին մեկ ակչես են վերցնում: Եթե նա եզ կամ կով է մորթում ու վաճառում, ապա յուրաքանչյուր անասունի համար մեկ ակչես են վերցնում: Կարամանում մի եզ կամ կով մորթելու դեպքում չորս ակչես բաջ են վերցնում: Տեղական մսավաճառից, եթե ոչխար է մորթում ու վաճառում, երկու ոչխարին մեկ ակչես են վերցնում: Այս ապօրինությունը, օրենքին հակառակ լինելով, վերացվում է: Վերևում հիշվածի համաձայն պիտի վերցնել: Մյուսը՝ այսինքն այգի, ջրաղաց, խանութ, տուն և այլն վաճառվե-

լիս բաջ չի վերցվում: Գյուղերում ինչ էլ որ վաճառվի բաջ չի վերցվում:

2. Եթե որևէ անձի ջորին կամ եզը ցանքսը մտնի, յուրաքանչյուր կենդանու համար [տիրոջը] հինգ գավազան պտի խփել և հինգ ակչե վերցնել: Եթե կովը մտնի՝ շորս գավազան պտի խփել և շորս ակչե վերցնել, իսկ եթե ոչխարը մտնի՝ երկու ոչխարի՝ համար մեկ գավազան պտի խփել և մեկ ակչե վերցնել: Եթե հորթը ցանքս մտնի, [տիրոջը] մեկ գավազան պտի խփել և մեկ ակչե վերցնել, իսկ եթե խոզը մտնի, յուրաքանչյուրի՝ համար՝ երկու գավազան պտի խփել և երկու ակչե վերցնել: [Անասունը ցանքս մտնելու փաստը] նախապես պետք է ապացուցել, որից հետո [եթե պարզվի], որ անասունները հացահատիկի արտերին և ինչքերին վնաս են պատճառել, վերոհիշյալ կարգով պտի ծեծել և սաստել, միաժամանակ պատճառված վնասը հատուցել, որպեսզի ամեն ոք իր անասուններին խնամք տանի և ուսյաթների ունեցվածքին վնաս չպատճառվի: Եթե գյուղի մոտ և կամ գյուղերի միջև և կամ [անասունները] ջրելու վայրում ցանված հացահատիկ լինի, ապա ցանքսերը պետք է ցանկապատել:

Ռայաթների հարկերի և նրանց դրույթյան հարցը

3. Մեկ չիֆթ հող մշակող ուսյաթին, Բուրսայի մյուզով տարեկան անհրաժեշտ է շորս մյուզ սերմ ցանել: Չցանած տարին [ուսյաթը] հինուն ակչե պտի տա, իսկ եթե մեկ մյուզ ցանի, քսանհինգ ակչե պտի տա: Բարձր աստիճանավորները և էմիրները չպտի միջամտեն:

4. Եթե որևէ ուսյաթին դժբախտություն պատահի և նա՝ ի վիճակի չլինելով չիֆթը թողնի, սիփահին այդ հողը ուրիշին պտի տա և նրանցից բեննաֆի հարկ վերցնի, սակայն չիֆթի հարկը չպտի պահանջի:

5. Առագաստի (նորապսակի) վրանի հարկը (gerdek resmi). կավազույնից վաթսուն, միջակից քառասուն և վատից քսան ակչե են վերցնում:

6. Գյուղում տան տեղի թափուի դիմաց լավագույնի [համար] հիսուն ակչե, միջակի համար՝ երեսուն, և վատի համար տաս ակչե են վերցնում:

7. Եթե սիփահիները բռնություն ուսյաթին վնասեն, բայց նա նորից իր տեղը գա, [նրանից] թափուի հարկ չպտի վերցնել, իսկ

եթե ուսյաթը իր կամքով թողնի և գնա, տունը սիփահուն է պատկանում:

8. Սիփահին իր սեփական չիֆթիքից բացի, ուսյաթի հողին չպտի միջամտի, եթե վակֆին գրված լինի:

9. Եթե ուսյաթը մահանա, տղա և աղջիկ թողնի, չիֆթիքը տղային է մնում, աղջկան բաժին չի հասնում:

10. Եթե որևէ սիփահուն վրա գրված ուսյաթի չիֆթիքը մի ուրիշ սիփահուն հողի վրա գտնվի, չիֆթի հարկը պտի գրված տեղի սիփահուն տա, իսկ մյուս սիփահուն տասանորդ և սալարիե պտի տա: Եթե [ուսյաթը] մի չիֆթիքից ավելի տեղ մշակի, դեռնյումի ակչե պտի տա:

11. Եթե ուսյաթներից ոմանք հորից մնացած ընդհանուր (müsa') չիֆթիք ունենան ու եթե եղբայրներից մեկը իր բաժինը փոխանցի մյուս եղբայրներին, սիփահին չպտի միջամտի:

12. Ռայաթները [պարտավոր են] իրենց տասանորդը տանել մտակա շուկան, սակայն կիսրարներին (ortakçı) այդ չպտի առաջարկվի. նրանք [տասանորդը] գյուղի շտեմարանը պտի տանեն: Ռայաթները գյուղում սիփահուն համար անհրաժեշտություն դեպքում շտեմարան պտի պատրաստեն:

13. Ջրպետության (mirabilik) և նման այլ հարկերին վերաբերող ապօրինությունները վերացված են. դրանց մանրամասնությունները տրված են Մեվլանա-Վիլդանի կանուննամեում:

14. Եթե որևէ սիփահի ժամանակից առաջ ուսյաթից հարկեր վերցնի, որոնք սակայն պատկանեն նոր եկած սիփահուն, ապա նոր եկածը [հարկերը] պտի պահանջի առաջին սիփահուց և ոչ թե ուսյաթից:

15. Դատավորները (kadı) պաշտոնից ազատվելուց հետո իրենց դատական արձանագրությունները (sicillât) նշանակված դատավորին պետք է հանձնեն:

16. Կիսրարներն (ortakçı) իրենց բերքի կեսը բեյերին տալու պատճառով ավարիզից ազատված են:

17. Նախկինում ըստ հին դաֆթարի, ուսյաթների վրա նշանակված սովորաբային հարկերը (rüsüm-i örfiye) շորս մասի էին բաժանված՝ չիֆթ և կես չիֆթ, բեննաֆ և ջաբա:

Չիֆթիքի հարկի դեպքում՝ չիֆթիքի լավը, միջակը և վատը նկատի առնելով, լավ տեղի լրիվ չիֆթիքը վաթսուն դեռնյում, միջակ տեղիներ՝ ութսուն և ինսուն դեռնյում և վատ տեղիներ՝ հարյուր քսան դեռնյում է: Սակայն ժողովրդի մեջ հայտնի և ծանոթ

չիֆթլիքն այն է, որ [սա] իր անունն ու բերքը արդարացնի. գյուղի բնակիչները և երկրագործները դրան են չիֆթլիք ասում: [Չիֆթլիքի] քանակը Բուրսայի մյուղուվ տասներկու մյուղ է, Կոնիայի մյուղուվ՝ տասնութ, իսկ տեղում գործածվող քիլեով՝ վեց:

18. Չիֆթի հարկը. մուսուլմանների և անհավատների լրիվ չիֆթից երեսունվեց աղչե, կես չիֆթից՝ տասնութ աղչե է: Բեննաֆի հարկը տասներկու աղչե է, ջաբայի հարկը վեց աղչե է: Բեննաք է կոչվում բոլորովին հող չունեցողը կամ կես չիֆթից պակաս ունեցողը: Ջաբա է կոչվում առանձին և աղքատ ուսուցիչը, որը հոր հետ լինելով՝ առանձին է աշխատում: Առանձին աշխատանք (շահույթ) չունեցողին մյուլբերեդ (mücerred) են ասում, որից բացարձակապես հարկ չի վերցվում: [Չիֆթի] հարկը վերցվում է մարտ ամսի սկզբին:

19. Ոչխարի հարկը (resm-i ağınam) թիմար ունեցող սիփահիներից չի վերցվում. չի առնվում և այն ազատվածներից, որոնք որոշակիորեն այդպես են արձանագրված և սերունդից սերունդ չեն հարկվել: Նրանք նորից հարկ չպիտի տան:

Ոչխարը մայիս ամսի ծնից հետո գառան հետ միասին հաշվելով, երկուսից մեկ աղչե են վերցնում:

20. Ջրաղացի հարկը տարեկան վաթսուն աղչե է, իսկ վեց ամիս աշխատող [ջրաղացից]՝ երեսուն աղչե:

21. Այն անձինք, որոնք դաֆթարում սիփահու որդի (sipahi zade) և մենակյաց (zaviyedar) են գրված, ավարիզ չպիտի տան: Սրանք ևս իրենց նախնիների օրից չիֆթի հարկ չեն տվել. դարձյալ չպիտի տան: Եվ նրանք, ովքեր հարկեր են տվել, չիֆթի հարկը նույնպես պիտի տան, բայց ավարիզը չպիտի տան, եթե դաֆթարում որոշակի այդպես գրված լինեն:

22. Արոտի հարկը (resm-i otlak). հնուց արոտի համար հատկացված և արոտի հարկ առնված տեղերից հոտից մեկ ոչխար են վերցնում: Եթե ոչխարի [հոտը] գալիս ու ձմեռում է որևէ թիմարում, յուրաքանչյուր հոտից մեկ շիշեկ (şişek—երկու տարեկան գառ) իբրև ղշլաղի հարկ, իսկ փոքր հոտից վեց աղչե են վերցնում:

23. Չիթհանի հարկը, (resm-i bezerhane) տարեկան քսանհինգ աղչե է:

24. Օտար (haric) ուսուցիչներից մեկը եթե սիփահու թիմարում հող վերցնի, հարկերը՝ տասանորդը և սալարիեն թիմարի տիրոջը պիտի տա. եթե հողը քիչ լինի, երկու դեռնյումին մեկ աղչե պիտի տա. եթե այդ ուսուցիչը դաֆթարում ուրիշ սիփահու չիֆթ գրված

լինի չիֆթի հարկը անմիջապես սիփահուն պիտի տա: Հնուց ի վեր տասանորդը և սալարիեն հողի տիրոջը և չիֆթի հարկը ուսուցիչի տիրոջն է արձանագրված:

25. Հողամշակութային համար պիտանի և ուսուցիչի վրա արձանագրված չիֆթլիքի հողը եթե ուսուցիչը չմշակի, դատարկ թողնի, գնա ուրիշ տեղում ցանի, հողատերը [նրանից] տասանորդ ու սալարիեն առնելուց հետո, ուսուցիչի տերը (տեղի ֆեոդալը) ևս մեկ տասանորդ չպիտի վերցնի:

26. Եթե երեք տարի շարունակ հողը անմշակ և խոպան մնա, և եթե վարելու համար ուսուցիչին առաջարկ արվելուց հետո էլ ուսուցիչը հողը չվարի, [հողը] դատավորի միջոցով ուրիշին պիտի տրվի և [ուսուցիչից] տասանորդն ու հարկը պիտի վերցվի:

27. Ռայաթների ազատ ստրուկը (azadlu kulu) սիփահուն է պատկանում, ամիլը չպիտի միջամտի:

28. Մահացող ուսուցիչների չիֆթլիքները հավասարապես տղաներին են պատկանում, որոշ դաֆթարներում եթե բեննաք գրվի, դարձյալ վնաս չունի:

29. Սիփահու թիմարում վակֆ եղած չիֆթլիքները եթե հետո օգտագործվեն, դարձյալ սիփահիներին պիտի պատկանեն, «դաֆթարից դուրս է» ասելով, ամիլը չպիտի միջամտի:

30. Այն ուսուցիչը, որն ուրիշ տեղ գրված չլինի և որևէ սիփահու հողում բնակվի, հարկերը տեղի սիփահուն պիտի տա: «Դաֆթարում գրված չէ» ասելով, չի կարելի վեճ հարուցել:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 548
Թվականը՝ 1528 (935)

18. ԿԵՍԱՐԻԱՅԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԸ

Այս դաֆթարի մեջ գրված է Կեսարիայի լիվայի օրենքը:

1. Այս վիլայեթի (լիվա) որոշ գյուղեր ուրիշների մյուսքը լինելով, հնագույն օրերից վակֆի և մյուսքի տերերը մեկ տասանորդ վերցնելուց հետո, թիմարի համար, հացահատիկից, վուշից, այգուց և պարտեզից դիվանի (divani) անվան տակ մի տասանորդ էլ են վերցրել: Համաձայն հին դաֆթարի նորից այդպես արձանագրվեց:

2. Հիշված երկու տասանորդներից բացի, շահնեւրյան (şahnelik), կերի և կալի գարու (harman arpası) անվան տակ նույնպես որոշ քանակի հացահատիկ են վերցրել: Հին դաֆթարում արձանագրված չլինելու և Ռումի սովորության համաձայն [հարկեր] վերցնելու մասին պետության բարձր ատյանին դիմելու կապակցությամբ, որոշվեց Կարամանում տիրող սովորության համաձայն միայն երկու տասանորդ վերցնել, իսկ դրանից դուրս եղած շահնեւրյան, կերի և կալի գարու [հարկերը] վերացվեցին: Այս պատճառով էլ նոր դաֆթարում եկամուտ չգրվեց:

3. Լրիվ շիֆթի հարկը հիսունհինգ ակչե է, կես շիֆթինը՝ քսանյոթ և կես ակչե, բեննաֆի հարկը՝ տասնութ ակչե, ջաբայի հարկը՝ տասներկու ակչե: Կես շիֆթիից պակաս հող ունեցողը բեննաք է կոչվում, շիֆթ ու հող բոլորովին չունեցողը՝ ջաբա:

4. Ագաա (serbest) չլինող թիմարներից Կարամանի կանունին հակառակ, լրիվ շիֆթից տասնհինգ ակչե, կես շիֆթից՝ յոթ ու կես ակչե, բեննաքից և ջաբայից՝ հինգ ակչե բռնագրավել են սանջակի բեյի համար: Դարձյալ այսպես որոշվեց և արձանագրվեց:

5. Անհավատները հնուց ի վեր քսանվեցական ակչե խարաջ տալով, այլ հարկերը մուսուլմանների նման են տվել: Չիֆթի հարկը ավելի լինելու և հնուց ի վեր քսանվեցական ակչե խարաջ տալու պատճառով, խարաջները ներկայումս դարձյալ նույնությամբ թողնելուց են: Խարաջ տվող [ռայաթի] ամուրի որդիներին ջաբայի հարկ

արձանագրվեց, մուսուլմանների ամուրի որդիներին հարկ չնշանակվեց, քանի որ իրենց հոր [հետ են ապրում]. նրանցից ոչինչ չպիտի պահանջել:

6. Ոչխարի հարկը. Կարամանի վիլայեթի օրենքի համաձայն ոչխարը մայիս ամսի ծնից հետո գառան հետ միասին հաշվելով՝ երկուսից մեկ ակչե պիտի վերցնել, ոչ ավելի:

7. Ազատ շեղող թիմարներից ոչխարի հարկի կեսը թիմարի տիրոջը, կեսը սանջակի բեյին է արձանագրված:

Սակայն քոչվորներից (yürük) թիմարների եկամտի մեծ մասը շիֆթի հարկ է. թիմարի տիրոջ տնօրինության տակ եղած քոչվորներից ոչխարի հարկ չեն վերցրել, որի պատճառով թիմարում եղած քոչվորների ոչխարի հարկից սանջակի բեյին մաս (hisse) շարձանագրվեց. ոչխարի հարկը ամբողջովին թիմարին արձանագրվեց: Սանջակի բեյերի համար թիմարում լինող քոչվորներից ամուսնության հարկի կեսը և ոճիրի ու հանցագործության հարկերի կեսն արձանագրվեց: Դաֆթարին հակառակ անիրավություն չպիտի կատարվի:

8. Փեթակից երկու ակչե պիտի վերցնել, մեկ ակչե թիմարին և մեկ ակչե վակֆին ու մյուսքին: Սակայն հրամայվեց, որ ակչեն տասանորդի ենթակա չափով մեղր տվող փեթակից վերցվի, իսկ մեղր չտվող փեթակից ոչինչ չպիտի պահանջվի:

9. Ջրաղացի հարկի կեսը իբրև դիվանիյե (divâniye) կեսը իբրև մալիֆանե (mâlikâne) են վերցնում:

10. Ռայաթի այլ հարկերը. ղշլաղի, արոտի և ձիթհանի հարկերի կեսը և դրսից եկող և ցանողների հարկերը, ռայաթների վիճակը (?)...* այլ հանգամանքները, որոնք նոր դաֆթարում գրանցված են, Մեվլանա-Վիլդանիի գրած կանուննամեի վերջում, Կարամանի ընդարձակ դաֆթարի սկզբում ամբողջությամբ մեջ են բերված: Այդ կանուննամեում հիշված Կեսարիայի լիվայի օրենքներն ևս Կեսարիայում պիտի գործադրվեն: Այդ դաֆթարում հիշված հոգվածները Կարամանի վիլայեթի սովորություններին հակառակ եղածներն են: Մնացած ղեպերում այդ դաֆթարում գրված օրենքների համաձայն պիտի գործել:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 60
Թվականը՝ 1500 (906)

* Միտքը չի հասկացվում, աղավաղված է:

19. ՋԵՐՄՈՒԿԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԵՆ

Ջերմուկի լիվայի (Էբու-Քահիր Գահիյեի հետ միասին) կանուննամեն

1. Հացահատիկը հնգից մեկ (hums) և բամբակը վեցից մեկ (sudüs), մուսուլմանների այգիների ամեն հարյուր տունկից չորս ակչե, իսկ անհավատների ամեն հարյուր տունկից հինգ ակչե, բանջարեղենը տասանորդով, իսկ ծառերի պտուղները յոթից մեկ արձանագրվեց:

2. Ջուլհակի հարկը օրենքին հակառակ լինելով՝ վերացվեց:

3. Ոչխարի հարկը վճարող ուսուցիչներից չորսը հարկի չլից չվերցվի:

4. Հիշյալ լիվայի գյուղերի հողը քիչ լինելով, գյուղերի մեծ մասում մեկ կամ երկու չիֆթլիք կա և ուսուցիչներն էլ այդ մեկ-երկու չիֆթլիքի մշակութամբ են զբաղվում: Այդ պատճառով որոշ գյուղերում անկախ չիֆթ չի արձանագրված: Ամեն մեկ գյուղին, ըստ իր հողին, հողի հարկ (resm-i zemîn) արձանագրված լինելով, լավագույն հողից երկու դեոնյումին մեկ ակչե, վատ հողից՝ երեք դեոնյումին մեկ ակչե հողի հարկ են տալիս: Սակայն նման ուսուցիչներին չի թույլատրվում «չիֆթի չի կապված» ասելով, իր ունեցած հողը մշակելու փոխարեն, գնալ ուրիշ հողը մշակել: Եթե իր ունեցած հողը մշակելուց հետո գնա և ուրիշ տեղում ևս մշակությամբ զբաղվի, [նրանից] կրկին բաժին չպիտի պահանջել:

5. Խաղախորդարանի մասին. եթե ոչխարի և այծի կաշի բերեն դաբաղելու, յուրաքանչյուր կաշու համար մեկ սև ակչե են վերցնում, իսկ եզի կաշվից՝ մեկ և կես ակչե, գոմեշի կաշվից՝ երեք: Նորից այդ նույն ձևով որոշվեց:

6. Ոչխարի քամդայի համար. քաղաքում վաճառելու համար գյուղերից բերված և մորթված մեկ ոչխարից վեց սև ակչե քամդա,

եզից տասնութ սև ակչե քամդա են վերցնում, որի երեքը մեկ օսմանյան ակչեի է հավասար. այդպես էլ արձանագրված է: Ամեն մեկ ոչխարից երկու ակչե և եզից վեց ակչե պիտի առնել: Այլ կարգերի մասին արձանագրված է ընդհանուր կանոննամենում (kanun-nâme-i külli).

Էբու-Քահիր Գահիյեի կանուննամեն

1. Որոշվեց հացահատիկներից հնգից մեկը, բամբակից՝ վեցից մեկը, այգիների հարյուր տունկից չորս ակչե վերցնել:

2. Ջուլհակի հարկը վերացվում է:

3. Սրանից առաջ Հասան-բեգի կանոնով երկու հարյուր բաթման մեղր էին տալիս: Ներկայումս այդ, օսմանյան օրենքին հակառակ լինելով, վերացվում է:

4. Ռայաթների ոչխարները աղեթի աղնամ ('adeti aġnâm արձանագրվեցին, չորսը հարկի չլից չվերցնել:

5. Մեղրի յուրաքանչյուր փեթակին երկու ակչե արձանագրվեց:

6. Վերը հիշված նահիեյի հողերը քիչ լինելով և չիֆթլիքի հարմարություն չունենալու պատճառով չիֆթ չնշանակվեց, այլ հողի հարկ արձանագրվեց: Լավագույն տեղերից երկու դեոնյումին մեկ ակչե և վատ տեղերից՝ երեք դեոնյումին մեկ ակչե արձանագրվեց:

Յուրաքանչյուր ոք իր ցանած հողերը թող ցանի:

7. Մուսուլմանների բեննաքներին տասներկու ակչե բեննաֆի հարկ և վեց ակչե քրգաղիե արձանագրվեց:

8. Պտուղները յոթից մեկ արձանագրվեցին, իսկ անհավատների ամեն հարյուր տունկին հինգ ակչե արձանագրվեց:

9. Հիշյալ նահիեյում հաշվառուին (muhtesib) յուրաքանչյուր ոչխարի դիմաց մեկ ակչե, եզան դիմաց՝ երկու ակչե տալը օրենք է եղել, այդպես էլ պիտի տալ, ավելին չպիտի տալ:

Ստամբուլ, Բաշվեթալեթի արխիվ,
Դաֆթար № 735
Թվականը, Սուլթան Սյուլեյմանի
ժամանակաշրջանը:

20. ՍՍԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Սսի լիվայի Կայրթբայի* կանոննամբի բացատրությունը

1. Յորենից, գարուց, խոտից, վարսակից, կորեկից, քնջուլից, բուրշակից,** բամբակից, սոխից ու սխտորից, սեխից ու ձմերուկից, հացահատիկի ու պտուղի բոլոր տեսակներից տասից մեկն են վերցնում:

2. Բրինձը որտեղ էլ որ ցանվի, հողատիրոջ համար տասից մեկը տասանորդ են վերցնում:

3. Ամուսնացած թուրք ուսյաթներից Հալեպի ակչեով տարեկան յոթանասուն ակչե սուլթանական նեվրուզին տան հարկ (resm-i hane) են առնում: Աշխատանքի և վաստակի կարող ամուրիներից Հալեպի ակչեով տաս ակչե են վերցնում:

4. Ամուսնացած զիմմի ուսյաթներից (reâya-i zimmi) տարեկան Հալեպի ակչեով հարյուր երեսուն ակչե տան հարկ են վերցնում, [ըստ որում] վաթսուն ակչեն՝ տարեակզբին (նեվրուզին) և վաթսունվեց ակչեն՝ աշնան սկզբին: Յուրաքանչյուր ամուսնացածից և ամուրիից Հալեպի ակչեով նեվրուզի ժամանակ հիսուն ակչե ջիզիե են վերցնում: Յարսի-Բեյթի (يارسى بيت) բերդի ամուսնացած և ամուրի անհավատներից հիսուն ակչե ջիզիե են վերցնում:

5. Լրիվ տարին աշխատող ջրաղացից Հալեպի ակչեով տարեկան հարյուր քսան հինգ ակչե են վերցնում, իսկ վեց ամիս աշխատողից՝ վաթսուն Հալեպի ակչե:

6. Ուխարի հարկը. ամեն մեկ ուխարի համար մեկ Հալեպի ակչե են վերցնում. դրսից բերված ուխարի համար, որպես յաթաղի հարկ (resm-i yatak) լավ հոտից մեկ ուխար են վերցնում:

* Սուլթան Կայրթբայ (Kayıtbay) եգիպտոսի և Սիրիայի սուլթան (1468—1495):

** Բուրջաբ—կերի հացահատիկի մի տեսակը:

7. Ամուսնության հարկը. աղջկանից հարյուր քսան և այրի կնոջից վաթսուն Հալեպի ակչե են վերցնում, ոչ ավելի:

8. Գլուխ պատռողից վաթսուն Հալեպի ակչե են վերցնում, դանակի վերքի համար, երբ վիրավորվողը չի մեռնում, հարյուր:

9. Որոշ մյուլք համարվող ցանքսերից տասից մեկն է վերցվում. սիփահին որպես բեգեվանե (begevâne) (?) հինգից մեկը և մյուլքի տերը՝ որպես մալիֆանե (mâlikâne) հինգից մեկը:

10. Հին ժամանակվանից Սսի սանջակին պատկանող որոշ ուսյաթների Ադանայի սանջակում ապրելով [հանդերձ], սուլթանային հարկերը Սսի սանջակին են տվել: Դարձյալ այդ ձևով որոշվեց: Օրենքի խախտում չպիտի լինի:

11. Մեղրի, յուղի, պանրի բեռներից երկուական Հալեպի ակչե քաջ են վերցնում:

12. Եթե ոճիրներ տեղի ունենան, այդ մասին պետք է դիմել օսմանյան օրենքին. դրանից շեղում չպիտի կատարել*:

Մի բաջի արձանագրությունը

Առաջներում հիշյալ [Կուշթերմուրլու] բերդի նախապարհի բաջը երեք տեղում վերցնելով, անցնողներին մեծ նեղուլթյուններ էին պատճառում: Անցնող և գնացող (տրանզիտ) յուրաքանչյուր ստրուկի և ստրկուհու համար վեցական Հալեպի ակչե, կերպասեղենի և պարենային այլ ապրանքների ամեն մի ուղտի բեռից վեցական, ձիու բեռից՝ չորսական և ավանակի բեռից՝ երկուական Հալեպի ակչե էին վերցնում: Ներկայումս Կոստանլուի և Կարա-Իսալաույի բաջերը ամբողջովին վերացվում են: Միայն Գեովյուլք բերդի նախապարհի բաջերն վերցնելու հրաման է տրվել: Յուրաքանչյուր ստրուկի և ստրկուհու համար չորսական ակչե, կերպասի և պարենային մթերքների ուղտի բեռից Հալեպի ակչեով չորս ակչե, ձիու բեռից՝ երկու

* Հրատարակիչը հայտնում է, որ նույն դաֆթարում կա նաև Տարսուսի լիվայի կանոննամեն, որը հիմնականում համընկնում է Սսի լիվայի կանոննամբին: Տարբեր է ստորև բերվող հատվածը. «Քաղաքում բնակվող անհավատներից, սուլթանական նեվրուզին, ամուսնացածներից ութսունական Հալեպի ակչե տան հարկ և ամուսնացածներից ու ամուրիներից, Հալեպի ակչեով, հիսուն ակչե իսպենջ են վերցնում: Բուհարուն բերդի անհավատներից, յուրաքանչյուր ամուսնացածից և ամուրուց սուլթանական նեվրուզին, Հալեպի ակչեով հիսունական ակչե ջիզիե են վերցնում: Եվ Կուշթերմուրլուին ենթակա որոշ համայնքներից միրախուրիյե (mir ahuriye) է նշանակված. իբրև միրախուրիյե լրիվ չեֆթից վեց քիլե գարի, իսկ կես չեֆթից երեք քիլե գարի են վերցնում:

ակչե, ավանակի բեռից՝ մեկ ակչե վերցնելու հրաման է տրվել և ըստ հրամանի նոր դաֆթարում արձանագրվել: Այս բաջը, հիշյալ բերդից ոչ հեռու գտնվող Ակ-Քեոփրյուլի մոտ ճանապարհների բաժանման տեղում պիտի վերցնել: Այսուհետև արգելված վայրում քաջ չպիտի վերցնել:

Եթե ծախելու նպատակով ուղտ և ձի անցնի, ուղտից չորս ակչե, ձիուց՝ երկու ակչե քաջ պիտի վերցնել:

Վերոհիշյալ բերդի անհավատների, հին ժամանակներից մինչև այսօր, հիշյալ բերդի պաշտպանության և հիշյալ բաջը գնանձելու գործում օժանդակություն ցույց տալու համար ներված (mu'af) լի-նելով, ջիզիե և ծխի հարկ (resm-i duhan) չեն տալիս և նախկին սուլթաններից տրված հրովարտակ (mansur) ունեն:

Ներկայումս նրանց ծառայությունների փոխարեն ջիզիե և ծխի հարկ չի պահանջում: Նոր դաֆթարում ներված արձանագրվեցին:

Վերոհիշյալ ձևով գանձված բաջը փաղիշահական խասերին, իսկ այգիների տասանորդը Տարսուսի սանջակի բեյին եկամուտ արձանագրվեց: Հիշյալ ժողովուրդը մինչև այժմ կատարած ծառայությունները դարձյալ նույն ձևով պիտի կատարի:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 973
Թվականը՝ 1519 (925)

21. ՏՐԱՊԻԶՈՆԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԱՄԵՆ*

1. Տրապիզոնի սանջակում գտնվող թիմարների ուսթաները յուրաքանչյուր խաս այգիների համար տարեկան երեքական օր պիտի ծառայեն, [որպեսզի] խաս այգիները չփշանան:

2. Յուրաքանչյուր տնից բանջարանցի հարկը (resm-i bostan) երկու ակչե է:

3. Ազատ թիմարներից վեցական ակչե նայիբության հարկ (resm-i niyâbet), ազատ շեղող թիմարներից երեքական ակչե նայիբության հարկ վերցնելը հրամայված է և յուրաքանչյուր թիմարին արձանագրված:

4. Թիմարում լինող ուսթաները թիմարի տիրոջ նկատմամբ հարգանք պիտի ցուցաբերեն. [դա] հնուց ի վեր ընդունված կարգ է, որը և սուլթանական նոր դաֆթարում արձանագրված է: Հարկերի և իրավունքների [մասին] առարկություն չպիտի լինի:

5. Բաշթինեներին (baştine) տասանորդ է նշանակված: Բաշթինեից իսպենջ չպիտի պահանջել:

6. Այն ուսթանը, որն աշխատանքի և վաստակի տեր լինելով, լեվենդլիկություն (levendlik) անելով՝ հողը չմշակի և կամ իր տրամադրության տակ եղած որոշ չափի հողը ուրիշ մեկին կամ ծառային մշակել տալով, լրիվ չմշակի, թիմարի տիրոջը վնաս պատճառի և թիմարի տիրոջ զինվորների և հարկերի պակասության պատճառ լինի, կամ առևտրով զբաղվելով իր հողերը ամայի թողնի և չմշակի, հնուց ի վեր [գոյություն ունեցող օրենքի համաձայն] երեք քիլե լեվենդլիկության հարկ (levendlik) պիտի տա, երկու քիլե ցորեն և մեկ քիլե գարի: Հողի որոշ մասը ամայի թողած ուսթանից համապա-

* Այս կանոննամեի սկզբում հրատարակչի տված ծանոթությունից պարզվում է, որ կանոննամեի այն մասերը, որոնք ավելի շատ քաղաքի տնտեսության ներքին և արտաքին մասերին են վերաբերում, այստեղ չեն բերված, քանի որ, նրա ասելով, դրանք առանձին աշխատության նյութ են կազմում:

տասխան չափով թիմարի տիրոջ համար տասանորդ վերցնելու մասին հրաման տրվեց:

7. Թիմարի տիրոջ հողն ու տեղը, այգին ու պարտեզը, որ թիմարումն էլ որ լինի, [նայաթը] առանց վեճի ըստ հին դաֆթարի տասանորդը լրիվ պիտի տա:

8. Քանի որ ուրիշ տեղում աշխատանքն ու վաստակը հողամշակությամբ զբաղվելուց ավելի [եկամտաբեր] է եղել, գանձվող երեք քիլե լեվենդիից նայաթները ներկայումս չեն թուլացել: Քանի որ նրանք հողամշակության համար դարձյալ հետ չեն եկել, դրա համար էլ սիփահինների եկամուտը պակասել է. երբ իրենց դրության մասին սիփահինները բարձրագույն ատյանին դիմեցին, բարձր հրաման տրվեց, որ իրենց հողը շմշակող նման անձերից յոթանասունհինգ ակչե լեվենդիի պետք է վերցնել: Եվ երբ կրկին անգամ բարձրագույն ատյանին դիմում եղավ հրովարտակ տրվեց, որ այդ կերպ հողը լքող ու անմշակ թողնող ու այլ աշխատանքով զբաղվող անձերից հինգական քիլե [հացահատիկ] լեվենդիի պետք է վերցնել: Այս կարգը նոր դաֆթարում արձանագրվեց:

Ովքեր իրենց հողերի [միայն] մի մասը կմշակեն ու մյուս մասը անմշակ կթողնեն և այլ աշխատանքով կզբաղվեն, այդպիսիներից շմշակված հողի համապատասխան չափով [թիմարի] տերերը լեվենդիի պիտի վերցնեն: Հող չունեցող որևէ անձից սիփահինները այս պատրվակով լեվենդիի ք չպիտի պահանջեն:

Առանձին նայաթներ եթե ուրիշ գյուղում ամուսնանան և թողնելով իրենց հայրենական հողը, գնան հինգ տարի այնտեղ ապրեն և նայաթ գրվեն, այնուամենայնիվ իրենց լքած գյուղում նախապես իրենց մշակած հողերին կապված են համարվում, որպեսզի տասանորդը չկորչի: Նախատեսված է, որ հողին կապված, բայց այդ հողերը շմշակող և ուրիշին մշակել չտվող նայաթներից, լեվենդիի գրված այլ նայաթների նման, [հարկ] վերցվի, անգամ եթե հողը սիփահու միջոցով ուրիշին ծախված լինի: Այդ դեպքում ամայի և անմշակ թողնված հողերից, սիփահու հողի չափով [հողն անմշակ թողած նայաթից] անարգել լեվենդիի պիտի պահանջել, որպեսզի թիմարի եկամուտը չպակասի:

9. Այս լիվայի գյուղերի սահմանները անորոշ լինելով՝ յուրաքանչյուրից ըստ նայաթների [մշակած հողերի] տասանորդ են առել: Գարձյալ հին որոշման համաձայն պիտի կատարվի:

10. Որոշ տեղերում կախովի որթատունկերի (asma) խաղողի ամուրքը (şire resmi) հնուց ի վեր սիփահին է վերցրել. և հողից

ատացված հացահատիկի հարկը մի այլ սիփահին է վերցրել: Գարձյալ ըստ հին որոշման պիտի կատարվի:

11. Այս լիվայի հողամշակության տեղերը քիչ և դժվար մշակելի լինելու պատճառով նայաթներից ոմանք հայրենիքը թողել այլ վիլայեթներ են գնացել և ցրվել են. սրանից առաջ, վիլայեթ գրանցողը տեղում չգտնվող նայաթներից ոմանց անունը ճիշտ չի կարողացել գրել, ոմանց հոր անունը չի գրել, պապի անունն է գրել, ոմանց ամուրիության ազգանունով է գրանցել: Այս կերպով ցրված նայաթների միջև վեճերը շարունակվել են: Այդ պատճառով նորին վսեմության հրամանի համաձայն նորից գրանցման հրովարտակ տրվեց. ինչքան որ հնարավոր է նայաթներին [գրանցման համար] պետք է կանչել, չնորկայացողների [մասին տվյալները], իրենց գյուղի բնակիչներին և նրանց ազգականներին հարց ու փորձ անելով՝ ուշադրությամբ պիտի ստուգել: Հոր և պապի անունները հայտնի չլինողները գերդաստանի անունով պիտի գրանցվեն: Այլ գյուղերում և այլ վիլայեթներում բնակություն հաստատած նայաթները, որոնք ուրիշ [թիմարի տիրոջ] չեն գրանցվել, առանց առարկություն իրենց հարկերը գրանցված տեղում պետք է վճարեն:

12. Այն նայաթը, որ գրանցման ժամանակ թաքնված լինելու և կամ անփութության հետևանքով գրանցված չլինի, ինչպես նաև այլ սիփահու վրա արձանագրված չլինի, այդպիսիները ևս գյուղի սիփահուն են պատկանում: Ամիլը չպիտի միջամտի: Այն նայաթի տրդիները և նայաթի եղբայրը, որոնց հայրը դաֆթարում նայաթ գրված լինի և նրանք ուրիշի թիմարում գրված չլինեն, նայաթ են: Որոշ սիփահիններ կեղծիք կատարելով՝ նայաթներից ոմանց կրկին անգամ են գրել: Այդպիսիները տաս տարուց ավելի որ գյուղում որ ապրեն հարկը իրենց ապրած գյուղի սիփահուն պիտի տան:

13. Ազատ զեամեթի տերերի զեամեթների [գործերին] սուբաշին չպիտի միջամտի. եթե մարդասպանության դեպք տեղի ունենա, հանցապարտը դարձյալ զեամեթի տիրոջ (զայիմի) միջոցով տեղում պիտի պատժվի: Այսուհետև ոճրի և հանցանքի [հետաքննություն] գործում սանջակի սուբաշին չպիտի միջամտի:

14. Բեյլերբեյի և սանջակի բեյի համար գարու, խոտի, հարդի, փայտի և այլնի համար սալգուն (salgun) նշանակելիս, զեամեթներում բոլորովին սալգուն չպիտի նշանակվի, միայն ազատ չլինողներից պիտի սալգուն պահանջել:

15. Եթե որևէ նայաթ հողը շմշակի և արհեստով զբաղվի, և

կամ իր հողամշակութունից սիփահուն յոթանասունհինգ ակչե եկամուտ շտա, [ապա] մնացորդը պիտի հատուցի և յոթանասունհինգ ակչեն պիտի լրացնի: Այն ուսյաթը, որ կաթսայագործությամբ ու առևտրով զբաղվելու համար այլ վիլայեթ է գնում, տարին մեկ անգամ, կամ երկու տարին մեկ անգամ մեծ վաստակով տուն է գալիս, այդպիսիներից հարյուր հիսուն ակչե լեվենդության հարկ են վերցնում:

16. Տրապիզոնի սանջակը նորից գրանցվեց և բաժանվեց: Հիշյալ լիվայում գտնվող մենաստանների [մարդկանց] և առանց հերթի իրենց հողերի համար պատերազմի գնացողներին այս վիլայեթի գրանցողը նոր դաֆթարում ուսյաթ արձանագրեց և մի քանի սիփահիներին թիմար նշանակեց: Ներկայումս դաֆթարները երջանիկ ասիթանե (Ստամբուլ) են ուղարկված: Սրանից առաջ հին դաֆթարի համաձայն մենաստաններին (zâviye) իրենց հասանելիքները (zâviyelik) հին սովորության համաձայն որոշելու մասին հրաման տրվեց և անհերթ իրենց հողերի համար պատերազմի գնացողները, հին ժամանակվանից ինչ ձևով որ [հարկերից] ազատված են, դարձյալ ազատ պիտի լինեն: Եթե հին դաֆթարի համաձայն իրենց ստացածները կլրջից (kılıc) ավելի լինեն, եկամուտները վակֆի համար պիտի բռնագրավվեն: Մենաստանավորների (zâviyedâr) որդիներ չհանդիսացող և այլ գյուղերից եկած և վիլայեթում արձանագրվածները ուսյաթների նման իրենց օգտագործած հողի համար հարկերը սիփահուն պիտի վճարեն: Այսպես հրամայվեց և նոր դաֆթարում արձանագրվեց:

Թափուփ և Կադաստրոյի ընդհանուր
վարչութուն
Դաֆթար № 29.
Թվականը՝ 1583 (991).

22. ՎՐԱՍՏԱՆԻ (ԳՅՈՒՐՁԻՍՏԱՆԻ) ՎԻԼԱՅԵԹԻ ԿԱՆՈՒՆԱՄԵՆ

1. Վրաստանի վիլայեթը քարաստան է և հողեր քիչ ունի, ուստի և հին դաֆթարի համաձայն ամեն մի շնչին, ըստ իրենց ունեցած հողերի, քանհինգական ակչե իսպենջ արձանագրվեց: Վճարելուց հետո նրանց հողերից շիֆթի հարկ, կես հարկ (resm-i nîm) և դեռնյումի հարկ չպիտի վերցնել:

2. Վրաստանի վիլայեթի անհավատները մեկ հինգերորդ (humüs) են արձանագրված, նրանցից սալարիե չի վերցվում: Եթե կինը իր ունեցած հողն անմշակ և դատարկ չթողնի, նոր դաֆթարում նրա մասին արձանագրվածի համաձայն իր հարկերն ու բալնրաները տալուց հետո չի թույլատրվում [հողը] նրա ձեռքից առնել: Եթե ուսյաթներից մեկը մահանա, նրա հողը իր որդուն պիտի անցնի, որովհետև [հողը] ժառանգական մյուսը է: Հանգուցյալը եթե որդի չունենա, այլ աղջիկ ունենա, ուրիշների տված քափուփ [հարկը] տալու պայմանով, [հողը] աղջկան պիտի տրվի: Իսկ եթե աղջիկը չունենա, ուրիշների տված քափուփ տալու պայմանով, [հողը հանգուցյալի] եղբորը պիտի տրվի: Պապի հողը թոռանը չի փոխանցվում: Բարյացակամ մուսուլմանների գնահատած թափուփ [հողը] թոռան ձեռքից պիտի առնվի:

3. Եթե դաֆթարում արձանագրված ուսյաթները ցրվեն, համաձայն կանունի [նորից] իրենց տեղերը պիտի բերվեն: Իսկ եթե նրանց հեռանալուց տաս տարի և ավելին է անցել, և թողած հողերն անմշակ չեն մնացել, հողի տերը [այդ հողերը] թափուփ ուրիշին է տվել, չի կարելի [հեռացողներին] ետ բերել: Նրանց հարկերը իրենց բնակած տեղում պիտի վերցնել: Ռայաթի որդին ուսյաթ է, եթե ուրիշ [թիմարի տիրոջ] չի արձանագրված. դաֆթարում [ուսյաթների] շարձանագրվելը ձեռնտու չէ: Եթե ուսյաթը մշակության հարմար իր հողը չմշակի ու գնա ուրիշ սիփահուն հողը մշակի, նախազգուշացումից հետո այդպիսիներից օրենքով տասանորդ են վերցնում:

Իսկ եթե իր հողը մշակելուց հետո ուրիշ սիփահու հողն էլ մշակի, երկու տասանորդ վերցնելը արգելված է: Արգելված է դրսի (haric) ոռոգման թափուով մշակած հողը նրա ձեռքից առնելն և ներքին (dabil) ոռոգման տալը, եթե նա [հողը] անմշակ և դատարկ չի թողնում: Եթե օտար ոռոգման գա սիփահու հողում թափուով հող մշակի, քահրան տալուց հետո լավագույն հողի երկու դեոնյումից մեկ ահլե և վատ հողի երեք դեոնյումից մեկ ահլե են վերցնում:

Գեոնյումը՝ սովորական քայլաչափով, ըստ երկարության և լայնության քառասուն քայլ է. [դրանցից] ավելի կամ պակաս չպիտի վերցնել: Ռայաթի մշակության համար հարմար հողերից, առանց հարգելի պատճառի, երեք տարի շարունակաբար անմշակ և դատարկ թողնված հողերը օրենքով թույլատրվում է առնել թափուով ուրիշին տալ: Հնուց ի վեր արգելված է քաղաքացիների, ինչպես նաև բերդերի տերերի և գյուղերի անասունների արոտավայրերը մշակելն ու ցանկապատելը: Այգուց և պարտեզից ըստ արձանագրության քահրա վերցնելը օրենքին համապատասխան է: Դաֆթարում իբրև ըստ որոշակի գնի (ber vech-i maktu) արձանագրված այգիներից և պարտեզներից ընդունված որոշ գինը առնելուց հետո ավելի ոչինչ չպիտի վերցնել: Ռայաթներն իրենց սիփահիների տասանորդը մոտակա շուկան պիտի տանեն, իսկ դրսից եկող և մշակություն անողները՝ գյուղում գտնված ամբարները պիտի տանեն, օրենքն այսպես է:

4. Կալի ժամանակ ոռոգման հասցահատիկը [տասանորդի համար] պետք է հաշվել, պետերն առանց ուշացնելու տեղում պատրաստ կալը պիտի չափեն և ոռոգման չափի ճնշեն: Սակայն ոռոգման ևս առանց հողի տիրոջ գիտության, բերքը կախելով չպիտի տանեն:

5. Զրադացի հարկը նմանապես դաֆթարում արձանագրվածի համաձայն պիտի վերցնել. լրիվ տարի աշխատող [ջրադացից] վաթսուս ահլե, վեց ամիս աշխատողից՝ երեսուն ահլե՝ ոչ ավելի: Վիլայեթի գրանցումից հետո, եթե հին վայրում ջրադաց կառուցվի, գրանցի թիմարի տերը շրջակայքի ջրադացներից առնվող չափով հարկ պիտի վերցվի, ոչ ավելի: Սակայն եթե հին ջրադաց չլինի, գրանցումից հետո նոր [ջրադաց] կառուցվի, հողի տերը չպիտի միջամտի:

6. Եթե դրսից որևէ անձ [ոռոգման] գալով՝ սիփահու հողում ձմեռի, եթե ամուսնացած է, նրանից վեց ահլե ծուխի հարկ (resm-i

duhan) պիտի վերցնել, իսկ եթե հող մշակի, հողի հարկը պիտի վճարի, բայց ծուխի հարկ չպիտի վճարի: Զմեռող անձինք երեք տարի ծուխի հարկ պիտի տան, իսկ եթե երեք տարուց ավելի մնան, սիփահուն տասնութ ահլե բեննաֆի հարկ պիտի տան: Սիփահու հողում բնակություն հաստատած օտար ոռոգման, ոռոգման հարկերը պիտի տա նրան, ում վրա որ դաֆթարում արձանագրված է: [Ռայաթը] որ սիփահու հողում մշակություն զբաղվի, տասանորդն ու սալարիեն նրան պիտի տա, և եթե իր ձեռքում եղած հողից սիփահուն հարկ գրված լինի, հողի հարկը նմանապես պիտի տա: Եթե դաֆթարում մեկին ոռոգման չափ չի գրվել, ոռոգման հարկը մեկուսուսուս (mevkufci) է վերցնում:

7. Ոչխարի հարկը. երկու ոչխարին մեկ ահլե և ոչխարն ու գառը միասին հաշվելն օրենք է եղել: Ամբողջ երկրում ոչխարի հարկը ապրիլ ամսին վերցնելն օրենք է: Վիլայեթը գրանցելիս որոշ գյուղեր գրված են «առանց ոռոգման»: Հետո, եթե օտար ոռոգման գալով [գյուղը] շենացնեն և ոչխար պահեն, ոչխարի հարկը ('adet-i agnâm), եթե դաֆթարում գրված չէ, մեկուսուսուսները պիտի վերցնեն: Երկու ոչխարից մեկ ահլե ևս իբրև չուբուֆի ահլե, իսկ յուրաքանչյուր հոտից մեկ ոչխար իբրև շիշիկ վերցնելը հրամանի հակառակ է, չպիտի անել: Որպես մակաղատեղի հարկ (egil resmi) ոչխարը ձմեռելու դեպքում, հնուց մնացած օրենքի համաձայն, յուրաքանչյուր հոտից միջակ մեծության մեկ ոչխար են վերցնում, իսկ եթե հոտից պակաս լինի, տաս ոչխարից մեկ ահլե են վերցնում, ոչ ավելի: Լավագույն հոտը երեք հարյուր ոչխար է, միջակը՝ երկու հարյուր, փոքրը՝ հարյուր և հարյուր հիսուն ոչխար է:

8. Փեթակի հարկը (resm-i küvvare), իբրև մեղրի տասանորդ փեթակից երկու ահլե են վերցնում: Այն փեթակները, ոչխարները, այգիներն ու պարտեզները, որոնք վիլայեթի գրանցումից հետո են առաջացել, դրանց տասանորդն ու հարկերը թիմարի տիրոջն են պատկանում:

9. Ոչխարի հարկը ('adet-i agnâm) եթե թիմարի տիրոջը չի արձանագրված, մեկուսուսուս է վերցնում:

10. Ըստ հին դաֆթարի, հիշյալ վիլայեթում ազատ չլինող թիմարներում, ոչխարի հարկը նրանց (ֆեոդալների) եկամտի գումարի մեջ է հաշվված. նոր դաֆթարում ևս նույն կերպ արձանագրելու համար նվիրական հրաման տրվեց և հին որոշման համաձայն ոչխարի տուրքը արձանագրվեց՝ «ազատ չեն ոչխարի տուրքից» ('adet-i agnâm).

11. Ամուսնության հարկը (resm-i 'arusiye), միբիլիվանների

և զեամեթի տերերի և այլ ազատ թիմարների կույս աղջիկներից վաթսուն ակչե, այրի կանանցից երեսուն ակչե են վերցնում: Այլ թիմարատերերի ամուսնության հարկի կեսը արձանագրված տեղերից սիփահիները պիտի վերցնեն, իսկ մյուս կեսը՝ միբիլիվային արձանագրված վայրերի սանջակի պաշտոնյաները: Կույս աղջկա ամուսնահարկը տրվում այն վայրում, որտեղից որ նա եկել է, և նրան, ում ույաթն է հայրը: Իսկ այրի կինը, ուր որ էլ ապրի, ամուսնահարկը տեղի թիմարի տիրոջը պիտի տա: Որոշակի բնակավայր չունեցող Յուրուք և Յուզդեջի (yürük ve yüzdeci) ցեղերի մոտ, իրենց-ծնողների ենթակայության տակ գտնվող կույսն ու այրին նույնանման են: Զեամեթի և թիմարի տերերի և որսորդների աղջիկների, բերդապահների, դարիբների ամուսնահարկը կայսերական խասերի էմիրներն են վերցնում:

12. Վերոհիշյալ վիլայեթում բռնվող ստրուկներն և ստրկուհիները և անասունները պետք է բերվեն և հանձնվեն՝ կայսերական խասերին արձանագրվածները՝ կայսերական խասերի էմիրներին և սանջակի բեյին արձանագրվածները՝ սանջակի պաշտոնյաներին. և բերողները օրենքի համաձայն իրենց վարձատրությունը պիտի ստանան: Ընդունված ժամկետը լրանալուց հետո [բռնվածները]՝ վիլայեթի դատավորների միջոցով աճուրդով վաճառվելով, գինը պիտի բռնագաձեն: [Բռնված] ստրուկներին և ստրկուհիներին պահելու ընդունված ժամկետը երեք ամիս է, իսկ անասունների համար՝ մեկ ամիս: Հագուստ, կերպաս, գորգ և նման ապրանքներ գտնելիս, դատավորի միջոցով էմիրներին պետք է հանձնել, պահողները պիտի պատժվեն:

13. Անասունների [պատճառած վնասների] տույժը. եթե ույաթի ձին, եզն ու կովը և այլ տեսակի շորքոտանիները ցանքսերին վնաս պատճառեն, վնասները հատուցելուց հետո, անասունի տիրոջը հինգ զավազանի հարված պիտի տրվի և յուրաքանչյուր անասունի համար թիմարատերը հինգ ակչե տուգանք պիտի վերցնի: Բռնված անասունների համար, հիշվածի համաձայն [տուգանք] առնելուց հետո դեշտբանիի հարկ՝ ասելով, ամեն մեկ տան վրա նշանակելով ոչինչ չպիտի վերցնել:

14. Ան թամղա (tamğa-i siyah). ձիու շուկայում եթե ձի է վաճառվում տասներկու ակչե են վերցնում. սպանդանոցում եթե ոչխար է վաճառվում երկու ոչխարից մեկ ակչե են վերցնում. եթե գոմեշ՝ շորս ակչե, սևատավար՝ երկու ակչե: Եթե շամիչ, թուզ և այլ շոր պտուղներ են [վաճառվում]՝ մեկ բեռից երկու ակչե և ուղտի

բեռից՝ շորս ակչե, էշի բեռից՝ մեկ ակչե, իսկ թարմ պտուղի էրկու բեռից մեկ ակչե են վերցնում:

15. Գյուղերում բաշ չեն վերցնում:

16. Վրաստանի վիլայեթում մարհասիյե անունով ամեն մեկ շնչից երկու ակչե են վերցրել: Ռայաթների թեթևության համար, կայսերական նոր դաֆթարում արձանագրվածի համաձայն, յուրաքանչյուր տնից երկու ակչե պիտի վերցնել, ոչ ավելի:

17. Հացահատիկի շուկայի [վաճառքի] բաշը. եթե ցորեն կամ գարի է քաղաք բերվում ու վաճառվում, յուրաքանչյուր մյուզից կես քիլե են վերցնում, այլ հացահատիկների համար՝ նույնքան: Եթե ալյուր է բերվում, յուրաքանչյուր բեռը վեց քիլե լինելու դեպքում, վաճառողից շորս քիլեից մեկ ակչե [են վերցնում]:

18. Մյուզը հավասար է Ստամբուլի քսան քիլեի:

19. Հաշվառման օրենքը ֆաղաֆներում (kanunu ihtisabiye). Թերակղզուման դեպքում մեկ դիրհեմից մեկ ակչե տույժ են վերցնում. սակագինը (նարխ) դատավորի միջոցով պիտի նշանակվի, դիրհեմով վաճառվող ապրանքների վրա տասին տասնևմեկ ակչեի հաշվով նարխ պիտի նշանակվի, ավելին չպիտի նշանակել:

20. Գործածվող նուկին երկուհարյուր դիրհեմ է, իսկ բաթմանը՝ տասներկու նուկի:

21. Ոճրագործ մարդուն առանց քննության և առանց նրա շարագործությունը հայտնաբերելու սանջակի բեյի սուբաշիների և նրանց մարդկանց կողմից բանտարկելը և որոշ բան վերցնել ու ազատ արձակելը արգելված է: Որևէ ոճրագործի ոճիրը եթե վիլայեթի դատավորի (կադի) ներկայությամբ չապացուցվի, նրան բռնելն ու դատապարտելը շարիաթին և օրենքին հակառակ է: Սակայն ոճրագործությամբ ամբաստանվող անձին, եթե համառությամբ նվիրական դատարան գնալու հակառակություն ցույց տա, չի արգելվում բռնությամբ դատարան բերելը: Սակայն սանջակի բեյի սուբաշիներին արգելված է շարագործության ամբաստանությամբ, առանց դատավորի մոտ տանելու, ույաթներին շրջաթայելով գյուղից գյուղ ման ածելը: Նմանապես, մինչև որ դատարանում շարիաթական կարգով ամբաստանյալի հանցանքը չապացուցվի, նրան չպիտի շրջաթայել: Սանջակի բեյի սուբաշիները մեծաթիվ մարդկանց հետ ժողովրդի մեջ ման չպիտի գան, առանց փողի կեր և ուտելիք չպիտի վերցնեն:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ,
Դաֆթար № 195
Թվականը՝ 1570 (981)

23. ԳՅԱՆՉԱՅԻ ԼՅԱԼԵԹԻ ԿԱՆՈՒՆՆԸ

1. Գյանջայի Արրանի (Errâni) կոչված հողը Թիֆլիսին ենթակա Ղազախի սանջակի սահմանում է և երկարում է դեպի արեւելք, Կուր գետի եզերքով երեսունհինգ ժամ [ճանապարհով], հետո՝ հարավային կողմից Կուր գետին միացող Արազ [գետի] եզերքով, մինչև Բերգուշատի և Չյուլենդերի* վերջը. դեպի հարավ՝ նա տարածվում է երեսուն ժամ [ճանապարհով] և այսպիսով՝ [Արրանի հողը] մոտ վաթսուներեք ժամ երկարութուն ունի, լեռներին հասնելիս ութ ժամ և երբեմն տասը ժամ լայնությամբ հոսող գետերով և պտղատու ծառերով նա հարուստ մի երկիր է: Ռայաթները աջեմի ցեղերից և աշիրեթներից են և գյուղերից շատերում մետաքսը, բրինձը, բանջարանոցային բերքերը և հացահատիկի տեսակները շատ են: Լեռնային գյուղերի բնակիչները հայ** ցեղից են, ցորենը, գարին, վարսակն ու կորեկն են նրանց բերքերը, իսկ բրինձ, մետաքս և պտուղներ չունեն [լեռնային գյուղերը]:

2. Աջեմի (պարսիկների) ժամանակ Արրանի հողում չորսից մեկ տասանորդ (öşür) և տասներեքից մեկը բահրա վերցնելը օրենք է եղել: Բահրա կոչվածը, աջեմի (պարսկական) տերմինով՝ ամեն գյուղից հոսող ջրի առվի տիրոջը [վճարված] հարկն է եղել. հողի տերը չորսից մեկ տասանորդ տալուց հետո առվի տիրոջն էլ տասներեքիցից մեկ բահրա է տվել: Այժմ էլ այդ ձևով են վերցնում: Արրանի համեմատությամբ լեռնային հայաբնակ գյուղերի հողերը քիչ, անբերրի և բնակավայրերը անարժեք լինելով, աջեմի ժամանակում տասից մեկը տասանորդ և տասներեքից մեկը բահրա են տվել: Այս էլ ըստ հին ձևի է վերցվում:

3. Գյանջայի մետաքսը երկու տեսակ է. մի տեսակը կոչվում է

* برکشاط و چولندر
** ارامنه (Frâmine).

բենար (kenar), կոշտ մետաքս է վեց վակիյեից (vakiyye) բաղկացած, մեկ արքայական (hünkâri) բաթմանը ութից տասներկու ղուրուշով է գնվում ու վաճառվում. մյուս տեսակը կոչվում է շերբաֆ (şerbat), նուրբ մետաքս է. մեկ բաթմանը տասնութից քսանութ ղուրուշով է գնվում ու վաճառվում: Գյանջայի երկրի մետաքսի մեծ մասը բենար (kenar) մետաքսն է, որը պարսիկների ժամանակ ևս տասը ղուրուշի հաշվով, մանրամասն [դաֆթարում] մետաքսի բերքի [հողվածի] ներքո՝ յուրաքանչյուր բաթմանը հազար երկու հարյուր ակչե է արձանագրված, իսկ բամբակի [հողվածի] վերջում, հին չափով հարյուր քսան ակչե է գրանցված:

4. Բամբակացան գյուղերում մետաքսն ու հացահատիկները հազվագյուտ են: Բերգուշատի շրջանի գլխավոր մշակութունը բրինձն է (çeltük). տեղում գործածվող քիլեն քաղար է կոչվում. հարյուր հիսուն վակիյեն մեկ թաղարի է հավասար. մեկ թաղարին, հնում քնդունված հաշվով, վեց հարյուր ակչե է գրված: Այլ կարծր իրերի թաղարը՝ հարյուր ակչե է գրված:

Բանջարանոցային դեռնյումին վեց ակչե, այգու դեռնյումին քսանչորս ակչե [հարկ է նշանակված]: Ջրաղացի հարկը մեկ ղուրուշ է: Փեթակի հարկը՝ չորս փարա, կթան կովից իբրև յուղի հարկ (resm-i rügen)՝ չորս փարա և դինկի (dink)՝ համար՝ երեք հարյուր ակչե, բեննաֆը՝ քառասուն ակչե, իսպենը՝ հարյուր քսան ակչե, ոշխարի հարկը ('adet-i şanem) երկու փարա: Ամուսնության հարկը, հողի քափուն և բաղիհավան քաղաքի սովորության ու երկրի կարգի համաձայն յուրաքանչյուրն իր ժամանակին է վերցվում:

Հարկերի դրույթունն ու մետաքսի կշիռը

5. Եթե կշռված մետաքսը չորս բաթմանից պակաս լինի, գնողից յուրաքանչյուր բաթմանի համար երկու փարա են վերցնում, իսկ եթե չորս բաթմանից ավելի լինի, գնողից յուրաքանչյուր բաթմանի համար տասնվեց ակչե են վերցնում: Վաճառականի գնած մետաքսը, եթե դիվանի համլե (ivânî hamle) կոչված երեսուներկու բաթմանի հասնի, յուրաքանչյուր բեռից վաճառականից քսաներկու ղուրուշ են վերցնում: Առաջին գնման ժամանակ մեկ բաթմանի համար վճարված տասներկու կամ տասնվեց փարա կշռելու ծախսը (harci mizan) հաշվի մեջ չի մտնում: Եթե դիվանի բեռ կոչված

* دینك

մետաքսը երեսուներկու բաթմանից մեկ-երկու բաթման պակաս լինի, այդ դեպքում մեկ բեռան համար վճարված քսաներկու դուրուշի հաշվով շեն վերցնում, այլ բաթմանից երեսուներկու փարա են վերցնում: Վաճառողից ևս տաս բաթման մետաքսի դիմաց կշեռքի ծառայողների համար յոթանասուն դիրհեմ քաշով մեկ գյուլ (գծիկ) մետաքս են վերցնում: Վաճառողի ծախածը, եթե քսան բաթմանի հասնի, հաճախորդ վաճառակալներ մեկ գյուլ մետաքսը ձրիաբար է առնում: Կշռի գրագիրները յուրաքանչյուր բեռից քսանչորս փարա գրագրության վարձք են վերցնում: Քանի որ աջեմի (պարսկական) հին կանոնը այդպես է, այն հարգվում է:

Մախի և կափանի մասին՝ համաձայն աջեմի (պարսկական) կանոնի

6. Արդար յուղի, մեղրի և մեղրամոմի ուղտի բեռից երեք արասի կափանի հարկ և մեկ և կես փարա ծառայության վարձ (հիւճամիյ), ձիու բեռից՝ մեկ և կես արասի կափան և մեկ փարա ծառայության վարձ, էշի բեռից՝ տաս փարա կափան և մեկ ու կես փարա ծառայության վարձ, ձիու բեռից՝ ութ փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ [են վերցնում]: Այդ կշեռքիս, ուղտի բեռից տասնչորս փարա կափան, ձիու բեռից՝ երեք փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ, իսկ էշի բեռից մեկ փարա [են վերցնում]: Յորենի, գարու և կորեկի ուղտի բեռից հինգ փարա կափան և երկու փարա ծառայության վարձ, ձիու բեռից երեք և կես փարա կափան և մեկ և կես փարա ծառայության վարձ [են վերցնում]: Կերպասեղենի համար ուղտի բեռից, տասնչորս փարա կափան և երկու փարա ծառայության վարձ, ձիու բեռից՝ յոթ փարա կափան [են վերցնում]: Պղնձի համար ուղտի բեռից տասնչորս փարա կափան և երկու փարա ծառայության վարձ, ձիու բեռից՝ յոթ փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ, էշի բեռից՝ երեք փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ [են վերցնում]: Ձկան համար ուղտի բեռից վեց և կես փարա կափան և մեկ և կես փարա ծառայության վարձ, ձիու բեռից՝ երեք և կես փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ, էշի բեռից՝ երկու փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ՝ [են վերցնում]: Ձանազան տեսակի չուխայի, անագի, կապարի, լեղակի, վուշի, գուլպայի, կարմիր ներկի և քիշմիշի համար, ուղտի բեռից տասնչորս փարա կափան և երկու փարա ծառայության վարձ, ձիու բեռից՝ յոթ փարա կափան և մեկ փարա ծառայության վարձ, էշի բեռից՝ երեք և կես փարա կափան

և մեկ փարա ծառայության վարձ [են վերցնում]: Դաղստանի շալի (babunca-i Dagistanî) համար ձիու բեռից տասնչորս փարա կափան և երկու փարա ծառայության վարձ, էշի՝ բեռից՝ յոթ փարա կափան [են վերցնում]: Ձմերուկի բեռից մեկ ձմերուկ, սեխից մեկ սուրաշըլբ [են վերցնում]: Եվ ամեն բեռից երկու [փարա] հարկ և մեկ փարա սուրաշըլբ են վերցնում:

Ստամբուլ, Բաշվեքալեթի արխիվ
Դաֆթար № 924
Թվականը՝ 1724 (1140)

Р Е З Ю М Е

Собранные в данном сборнике османские законоположения XVI века («Кануннамэ») переведены нами на армянский язык из сборника архивных материалов, изданного в 1945 г. в Стамбуле О. А. Барканом¹. Сборник состоит из предисловия, текстов и комментариев. В предисловии дается краткая история возникновения османских законоположений, а также освещаются связанные с ними некоторые вопросы. Среди законоположений, касающихся в основном восточных областей Османской империи, т. е. Западной Армении (подпавшей в XVI веке под иго турецких феодалов), имеется два документа, относящиеся к истории Азербайджана и Грузии — законоположения Гянджи и Гюрджистанского вилайета.

В предисловии отмечается, что законоположения в большинстве случаев представляли собой вступительную часть османских дефтеров (реестровые книги). Они составлялись турецкими государственными сановниками после проведения общей переписи (tahrir) населения, земельных угодий и недвижимого имущества, установления налогов, распределения земельных участков между феодалами и т. д. в странах или областях, завоеванных турками. Все это записывалось в дефтерах. Дефтер каждой провинции начинался законоположением, относящимся к данной провинции. О ценности дефтеров в качестве исторических источников можно судить по книге проф. Джикия «Пространный реестр Гюрджинстанского вилайета», изданной в Тбилиси в 1947 году. О значении этих документов в

¹ Ömer Lâtîfi Barkan. „XV ve XVI inci asırlarda Osmanlı İmperatorluğunda Ziraat ekonomisinin hukukî ve mâlî esasları birinci cilt, Kanunlar, İstanbul, 1945.

своих трудах и докладах отмечали такие известные современные турецкие историки как И. Х. Узунчаршылы и О. Л. Баркан, венгерский турколог проф. Фекете Л. и другие.

В большинстве случаев законоположения отражают подлинную картину внутренней жизни Османской империи XVI века. В законоположениях довольно четко вырисовываются формы землевладения в армянских областях, турецкая налоговая система XVI века, подтверждаются факты прикрепления крестьян к земле. В этих памятниках сохранились некоторые сведения о взаимоотношениях между армянской сельской общиной и феодалами-завоевателями.

Турецкие законоположения XVI века возникли на основании прежних законоположений, существовавших в странах, завоеванных турками. Составители указанных документов, как это видно из текстов, были вынуждены считаться с теми социально-экономическими и внутренними политическими порядками, которые существовали там до турецкого завоевания. «Лучшая подать та, которую народ привык уплачивать с давних пор» («En iyi vergi halkın ötedenberi vermeğe alışmış olduğu vergidir»), — говорится в одном кануннамэ. В документах часто встречаются такие выражения: «по существующим обычаям», «по местным обычаям» и т. д. Это объясняется двумя причинами. Во-первых, у турок в XVI веке еще не был окончательно выработан общий кодекс и, во-вторых, в целях удовлетворения растущих нужд огромного военного механизма государства, турецких феодалов больше интересовало взимание множества различных податей, независимо от формы и способа взимания.

Как видно из документов, в Западной Армении и в других областях, населенных армянами, принимались законоположения известного правителя туркменского государства, аккойунли Узун Хасана. Последний издал эти законоположения в целях точной фиксации податей и повинностей крестьян (райятов) и устранения злоупотреблений местных феодалов и государственных сановников при взимании податей. В документах часто встречается такое выражение: «По закону Хасана падишаха» («Ber müceb-i kanun-i Hasan padişah»).

Одновременно, как видно из документов, переведенных со-

ставителями, турецкие законоположения стремились очернить закон Узуна Хасана, представляя его в качестве притеснителя народа. Так, в законоположении вилайета Эрзерума от 1540 года говорится, что население этой области «не выдержало гнета законов Узуна Хасана и обратившись к Высокому султанскому Престолу, попросило, чтобы был издан Румский закон» (т. е. Османский закон). Исходя из этого, турецкие современные историки, в том числе издатель документов О. Л. Баркан, представляют дело так, будто османское владычество принесло с собой облегчение положения трудового народа. В действительности же сами документы опровергают эти лживые утверждения некоторых турецких историков. Турецкое владычество принесло с собой жестокое угнетение и ограбление трудового народа.

Крестьянство составляло большинство населения Западной Армении. Помимо армянских крестьян, составлявших подавляющее большинство населения, там жили турецкие, курдские, азербайджанские и туркменские крестьяне, разделявшие общую судьбу эксплуатируемых. В этих документах они называются «райятами» (крестьянами).

Как видно из документов, райяты испытывали на себе тяжесть эксплуатации со стороны государственного аппарата и были опутаны сложной системой налогов, взимаемых как в пользу государства, так и в пользу местного феодала.

С целью усиления эксплуатации крестьян и обеспечения громадных военных расходов государства, турецкие феодалы старались узаконить прикрепление крестьян к земле. Об этом ясно говорят законоположения, согласно которым крестьянин, записанный в реестр, не имел права самовольно перейти в другое место.

«И если райят, — читаем мы в законоположении Эрзерума, — несмотря на имеющиеся в его распоряжении земли, убежит, сипахи (т. е. феодал) по закону имеет право вернуть его на место».

В документах часто говорится о злоупотреблениях при взимании податей со стороны государственных сановников и местных феодалов. Это злоупотребление выражается термином бид'ат (بدعت) — арабское слово, означающее «новше-

ство», то есть нечто не соответствующее и противоречащее принципам шариата (мусульманского кодекса). Правда, в законоположениях составители нередко отмечают, что эти бид'аты сняты. Однако частое упоминание о снятии бидата говорит лишь о том, что местные феодалы не считались с законоположением и продолжали бесчинствовать. Особенно в тяжелом положении находились крестьяне-армяне. Как «неверные» (kâfir) т. е. христиане, о чем неоднократно упоминается в документах, они эксплуатировались феодалами-завоевателями, требующими от них безропотного повиновения, более беспощадно.

В законоположениях армянских областей говорится также о «курдских обычаях», «курдских законах», «аширетских порядках» и т. д.

После присоединения Курдистана, южных и юго-западных областей Армении к Османской империи в 1515—1516 гг. положение курдских феодалов в Юго-Западной Армении окончательно укрепилось. Присоединение этих областей не привело и не могло привести к существенным изменениям в господствующей в стране феодальной системе, существовавшей в XV веке в эпоху владычества аккойунли. А суть этой феодальной системы заключалась в формальном признании верховного владычества туркменских государей, затем османских турок, при фактическом феодальном господстве на местах курдских феодалов.

В законоположениях встречаются разные единицы мер, веса, денег и т. п.

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

Ադեթի-ագնեմ ('adet-i agnâm—արար.) Մանր եղջերավոր կենդանիների համար գանձվող հարկերից մեկի անունն է: Կանուկնամեների համաձայն երկու ոչխարի համար որպես ագեթի-ագնեմ տարեկան գանձվել է մեկ աղչե: Ոչխարի ու գառան միջև տարբերությունն չի դրվել:

Ազատ-զեամեթ (serbest zeâmet—պարսկ. արաբ.) և ազատ քիմար (serbest timar—պարսկ. թուրք.) Սուլթանին, վեզիրներին և այլ բարձրաստիճան ֆեոդալներին հատկացված հողային տիրույթներին (գերիլթ) տրված անունն է: Այդ տիրույթները ճազաթ էին կոչվում, որովհետև այդ հողերի տեր ֆեոդալները վայելում էին իրավական ու հարկային որոշ արտոնություններ: Հասարակ ֆեոդալ՝ սիփահին չէր վայելում այդ արտոնությունները:

Չեամեթներ ու քիմարներ. Այսպես էին կոչվում պայմանական տիրապետություն իրավունքով պետական հողային ֆունդից ֆեոդալներին բաժանված հողամասերը: Այն հողերը, որոնց տարեկան եկամուտներն ըստ դավթարների կազմում էին քսան հազարից մինչև հարյուր հազար աղչե, կոչվում էին զեամեթներ, իսկ տարեկան երեք հարյուրից մինչև քսան հազար եկամուտ բերող հողերը կոչվում էին քիմարներ: Այդ հողերի տեր ֆեոդալները համապատասխան ձևով կոչվում էին զաիմներ և քիմարիներ: Չախմեթը և թիմարլիները հայտնի էին նաև սիփահիններ անունով:

Ալեմդարլըք (âlemdarlık—պարսկ. թուրք.) Ալեմդար նշանակում է գորշակահիր, գորշակահրություն պաշտոն, աստիճան: Ինչպես երևում է կամախի կանուկնամեի չորրորդ հոդվածից ալեմդարլըք անունով հարկը գանձվել է վանքերից:

Ակչե (akçe—թուրք.) Թուրքական արծաթե դրամի միավոր: Թուրքերեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան աղչեները հավասար էին մեկ քառորդ դրեհմ արծաթի, իսկ դրեհմը հավասար էր 3,06 դրամի:

Աջեմի օղլան ('acemi og'lan—արաբ. թուրք.) Թուրք պետական պաշտոնյաների կողմից բռնի կերպով հավաքված քրիստոնյա երեխաներին ու պատանիներին տրված անունն է: Աջեմի օղլան բառացի նշանակում է օտար պատանի: Պատանիներին հավաքում էին՝ ենիչերիական բանակի շարքերը լրացնելու և այլ պետական աշխատանքներում ծառայեցնելու նպատակով:

Ամուսնուրյան հարկերը (rûsümü 'arusane—արաբ.) Կույս ազջիկը և այլ կինը ամուսնանալու ժամանակ տեղական ֆեոդալին ամուսնական հարկ ('arusiye) էին վճարում. ազջիկները՝ 60 աղչե, այլ կանայք՝ 30:

Ամուրիուրյան հարկ (resm-i mücerred—արաբ.) Հստ էրդրուսի կանուկնամեի մուսուլման գյուղացիներից ամուրիության հարկ չի գանձվել:

Ասեսիե ('asesiye—արաբ.) Ասես էին կոչվում գեղերապահները, ասեսիեն գեղերապահության համար գանձվող հարկի անունն է:

Ավարիզ ('avariz). Արարերեն ճարիգա՝ բառի հոգնակի ձևն է, որը նշանակում է պատահական [հասույթներ]: Այս տերմինի տակ հասկացվում էին դանազան արտակարգ դեպքերի, հատկապես պատերազմների ժամանակ, հպատակների կատարած տարբեր պարհակային աշխատանքները: Ավարիզը հաճախակի փոխարինվում էր տուգանքով:

Արոտի հարկ (resm-i otlak—արաբ-թուրք.) Օթլաք նշանակում է ուրտ, արոտավայր: Ռեսմի-օթլաք կամ օթլաքի արոտի օգտագործման համար գանձված հարկի անունն է:

Բադիհավա (bâdihava—պարսկ. արաբ.) Եկամտի լրացուցիչ աղբյուրների հետամուտ լինելով, թուրք ֆեոդալները տուգանում էին գյուղացիներին: Բադիհավան ֆեոդալների օգտին գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անունն է:

Բադիհավայի-հուրդե (bâdihavâ-i hurde—պարսկ.) Փոքր, մանր բաղիհավա: Բողոքի կանուկնամեի հիսունհինգերորդ հոդվածում բադիհավայի-հուրդեի մասին տրված բացատրությունից պարզվում է, որ այդ հարկը վճարվելու դեպքում պատիժները վերացվում էին:

Բաթման (batman—թուրք.) Թուրքիայում և արևելյան որոշ երկրներում գործածություն մեջ եղող ծանրություն շափ, որը հավասար էր վեց օխայի (օխան՝ 400 դրեհմ), այսինքն՝ յոթ հազար վեց հարյուր ութսուն դրամի: Տարբեր տեղերում բաթմանը հաճախ տարբեր ծանրություններ է ունեցել:

Բահրա (bahra—պարսկ.) Բառացի նշանակում է բաժին, մաս: Այսպես էր կոչվում հողագործ գյուղացիության կողմից պետություն ու ֆեոդալին տրված ռենտան: Բահրան, ինչպես երևում է կանուկնամեներից, կարող էր լինել բերքի 1/10-ից մինչև 1/3-ը:

Բայրամլըք (bayramlık—արաբ. թուրք.), բայրամչեք (bayramcek—արաբ. թուրք.) Բառացի նշանակում է տոնական: Մուսուլմանական տոների օրերին հողագործ գյուղացիների պարտադիր ընկերավությունները՝ իր ֆեոդալին և տեղական պետական պաշտոնյային:

Բաշ ալչեսի (baş akçesi—թուրք.) Բառացի նշանակում է գլխի [համար] աղչե: Սա էլ, ինչպես երևում է ներդրված կանուկնամեից, հին տեղական սովորություն համաձայն գանձվող գլխահարկի անունն է:

Բաշտիցե (baştine). Պետական հողային ֆունդից թափուր իրավունքով ժառանգաբար փոխանցվող արտը, հողամասը (Բալիանյան երկրներում):

Բաշ (bac), բաշի բամդա (bac-i tamg'a), բաշի բուզուրգ (bac-i büzürg) կամ մեծ բաշ, սև թամդա (tamg'a-i siyah—թուրք. պարսկ.) Բաշ հին պարսկերեն բաժ բառն է, որը հետագայում ազատազվել և դարձել է բաշ: Բառացի նշանակում է հարկ, տուրք: Ընդհանրապես վերոհիշյալ տերմինների մասին կանուկնամեների տեքստերի հրատարակիչ Օ. Լ. Բարիկանը տալիս է հետևյալ բացատրությունը. Վաշ բառն, ասում է նա, ընդհանրապես հարկ իմաստով է դրժածվում: Բաշի թամդա՝ նշանակում է դրժվի հարկ: Դրժվը քաղաքում է դրժածվող ու վաճառվող ամեն տեսակի ապրանքներից, գործված կերպասից

և մորթված կենդանիներից դանձվող հարկի անուան է: Սա մեծ մասամբ սև թամդա (թամդաի սիահ) է հոշվում: Տրանդիա կերպով կրկրից անցնող և կամ երկրում մնալու համար բերված ապրանքներից դանձվող մաքահարկը բաջի բուղուրը, այսինքն մեծ բաջ էր կոչվում: Այս երկրորդ տեսակի ապրանքները շուկայում ծախվելիս դրանց համար առանձին դանձվող դրոշմի հարկը բաջի-թամդա է կոչվում: Թամդան այստեղ ընդհանրապես բաջ-այսինքն հարկի իմաստով է դործածված:

Բեննաք (bennak—հայ.), բեննաքի հարկ (resm-i bennak—արաբ. հայ.). Հայերեն բնակվել բառից: Հողագործ գյուղացու Ֆեռդալին վճարած հարկերից մեկն է. կար երկու տեսակի բեննաք՝ էքինլու բեննաք (ekinlû bennak) և զարա բեննաք (caba bennak): Էքինլու բեննաքի հարկ էին վճարում այն գյուղացիները, որոնք ունեին կես (նիս) չիֆթից պակաս հողատար, իսկ զարա բեննաքը գյուղացին վճարելու էր Ֆեռդալին նաև այն ժամանակ, երբ բուրդովին հող չուներ:

Բեյր-ուլ մալ (beyt-ül-mâl—արաբ.). Բառացի նշանակում է գանձատուն, ավելի լայն իմաստով՝ անժառանգ հանդուցյալների կալվածքները ու ինչքերը կառավարող և պահպանող վարչություն, գանձարան:

Բերաք (berât—արաբ.). Հրովարտակ, արքունի մուրհակ, որ հաստատում էր հարկերից և այլ պարտավորություններից ազատված լինելը: Որևէ արտոնություն և աստիճան հաստատող հրաման, հրովարտակ:

Բերիյե (berriye—արաբ.). Անապատ, ամայի դաշտ, անմաքդարնակ վայր: Դիարբեքի կանուենամեղում գործ է անված նման վայրերում ապրող գյուղացիների իմաստով:

Բիլ'աք (bid'at—արաբ.). Բառացի նշանակում է նորամուծությունը կանուենամեղում բիլ'աթը, որը մենք թարգմանում ենք ապրիլություն, դործ է անվում իբրև շահաթակհան օրենքների և սկզբունքների չհամապատասխանող և նրան հակասող նորամուծություններ:

Բոզ բահրա (boz bahra—թուրք. պարսկ.). Ձիֆթը չմշակելու դեպքում բահրայի խանգարման համար պահանջվող տույժը: Բոզ նշանակում է գորշ այսինքն չմշակված հող:

Բուլազըրըք (bulacılık—թուրք.), բուլուզըրըք (bulucılık—թուրք.). Այս բառերն աղավաղման հետևանքով տեքստում անիմաստ են: Թուրքերեն bulmak (գտնել) բայը չի պարզում այդ ազավաղումը:

Բուլգարի (bulgari—թուրք.). Մի տեսակ բարակ կաշի և այդ կաշվից կարված ճոքավոր կոշիկ:

Բույրուք (buyruk—թուրք.), բույրուք (buyruk—թուրք.). Բարձրագույն հրաման, հրամանագիր:

Դաֆրարայ (defterdâr—արաբ. պարսկ.). Դաֆթար բառից. դաֆթարի (դրանցման մատյանի) կազմողն ու վարելը: Այս դեպքում վիլայեթի կամ սանջակի (լիվայի) գրանցման գործի վարել:

Դեշտբանի (deştbanî—պարսկ.). Դաշտերի պաշտպանություն համար հարկ: Այս հարկը որպես տույժ պետք է դանձվեր այն ժամանակ, երբ գյուղացու անասունը (ձին, եղջր, գոմեշը, սշխարը և այլն) մասեր մի որևէ ցանք ու վնաս պատճառեր: Կենդանու տիրոջը, որպես պատիժ, դավապանի հինգ հարված էին տալիս և նրանից հինգ ակշի էին դանձում: Սակայն ինչ-

պես դժվար չէ եզրակացնել «Գյուրջիստանի ընդարձակ դաֆթարից» դեշտբանիի տույժը դարձել էր պաշտերի պահպանություն համար դանձվող մշտական հարկ:

Դեոնյում (dönüm—թուրք.), դեոնյումի հարկ (resm-i dönüm—արաբ. թուրք.). Դեոնյումը հողի թուրքական չափ է. մեկ դեոնյումը հասարակ քայլով, ինչպես այդ մասունանշված է կանուենամեղում, քառասուն քայլաչափ երկարությունը և լայնությունը եղած հողային տարածությունն է: Դեոնյումի հարկը հողային հարկերից մեկի անունն է, որը վճարվում է ըստ դեոնյումների:

Դեվրե (devre—արաբ.). Բառացի նշանակում է շրջագյուլություն: Յայլայ (ամառանոց) բարձրանալիս մոտակա գյուղերի բնակիչներից դանձվող հարկի անունն է: Դեվրեն, ինչպես և կանուենամեղում հիշված կայմեն (kaim), շահենլիք (şahnelik) և եմլիք (yemlik) կանուենամեղ բնորոշումով սանջակի բեյի և նրա մարդկանց կողմից հորինված բացարձակ ապրիլություններ էին:

Դիեք (diyet—արաբ.). Արյան դին, որը վճարվում էր սպանվածի հարապատենքին ու ազգականներին:

Դիզարի քիմարներ (dizdar timarları—պարսկ. թուրք.). Պարսիկերեն դեֆար բառից, նշանակում է բերդապահ, բերդի գլխավոր պահպան: Դիզարներն ունեին իրենց հատուկ թիմարները, որոնք հիշվում են ազատ թիմարների շարքում:

Դիվանի (divanî—պարսկ.), դիվանի (divaniye). Դիվան՝ ատյան, մեծ ժողով, բարձրագույն ժողով և այլ իմաստներով է օգտագործվում: Բանաստեղծությունների ժողովածուն նմանապես դիվան է կոչվում: Կանուենամեղում գործ է անվում պետական, պետությունը վերաբերող հարկի իմաստով:

Զավիյե (zâviye—արաբ.). Իսլամական մենաստանները, սրբաք թեքները կոչվում էին զավիյե՝ անկյուն: Զավիյեի գավիյեին հասանելիք գումարն է: **Զիմմի** (zimmî—արաբ.). Բառացի նշանակում է պարտապան: Իսլամական պետությունների ոչ-մուսուլման հպատակները կոչվում էին զիմմի:

Զուլկադիրի, **զուլկադիրի** (zulkadirli, zulkaderiye). XIV—XV դարերում հարավային Անադոլիում կազմակերպված իշխանություններից մեկի անունն է: Զուլկադիրիները թուրքմենական ցեղից էին: Այդ իշխանություն հիմնադիրը եղել է Զուլկադիր-Չեյնեդդին-Կարաջանը, որից առաջացել է զուլկադերի անունը: Զուլկադիրիները դադարեցրել էին Մարաշի, Էլբիստանի, Նորբերդի և Բիհիսիի շրջանները: Օսմանյան սուլթան Սելիմ Յավուզը (1512—1520) 1516 թվականին գրավեց այդ իշխանություն հողերը:

Էմին (emin—արաբ.). Վարել, պետական շտաբաված անձ, վերակացու, ստտիկան, էմինիք՝ ստտիկանություն:

Ընդարձակ դաֆթար (defter-i müfassar—արաբ.). Վիլայեթներում և լիվաներում (սանջակ) պարբերաբար կատարված գրանցման մատյանները կոչվում էին դաֆթարներ, որոնք լինում էին ընդարձակ (müfassar) և համառոտ (muhtasar):

Ընդհանուր կանունամեղ (kanunnâme-i külli—պարսկ. արաբ.). Ինչպես դաֆթարներն են եղել ընդարձակ և համառոտ, այնպես էլ օրենքներն ունեցել են իրենց ընդարձակ կամ լրիվ և համառոտ կամ կրճատ ձևերը:

Ըրգադի (irgadiye) կամ բրգադի հարկ (resm-i irgadiye). Ըրգադի ունարեն նշանակում է շինարարություն վրա աշխատող գործավոր: Ըրգադի

էր կոչվում գյուղացիներէց տեղի ֆեոդալների օգտին տարեկան որոշ օրեր պարտադիր աշխատանք (կոռ) կատարելու փոխարէն գանձվող հարկը: Անվանվում էր նաև կուլլուկ (kulluk)՝ ծառայութիւն:

Թաղար (tag'ar—մոնղ.) Բառացի պարկ, պայուսակ: Հայաստանի որոշ շրջաններում գործածվող հացահատիկի չափ է, որի ծանրութիւնը տարբեր տեղերում տարբեր է եղել: Ինչպէս պարզվում է Գյանջայի կանոննամակի չորրորդ հոդվածից, թաղարը հավասար է եղել հարյուր հիսուն օխայի:

Թանգա (tenge—մոնղ.) Իրամական միավոր, որը մուսաբ է գործել Թուրքիա Միջին Ասիայից և Իրանից: Ինչպէս երևում է կանոննամակների հոդվածներից, մեկ թանգան հավասար է եղել երկու օսմանյան ալչէի:

Թափու (tapu—թուրք.) Թափուն XVI դարում Թուրքիայում նշանակում էր 1) հողաբաժին պահելու իրավունք, որ տալիս էր ֆեոդալ հորատները: Թափուն հիման վրա գյուղացիին կախման մեջ էր դրվում ֆեոդալից: 2) Հողային տուրք (resm-i tapu), որ գյուղացին հողաբաժին ստանալիս վճարում էր ֆեոդալին: Այդ հարկը վճարվում էր այն դեպքում, երբ հողաբաժին ստացող գյուղացին տվյալ հողաբաժին նախկին զբաղեցնողի անմիջական ժառանգորդը չէր:

Իլթիզամ (iltizam—արաբ.) և **մյուլթեզիմ** (mültezim—արաբ.) Եկամտի միջանի տեսակները կամ ամբողջ եկամուտը (տասանորդ և այլ հարկեր) կապալով տալու կարգը կոչվում էր իլթիզամ, այստեղից էլ՝ իլթիզամով տալ: Իլթիզամ վերցնող կապալառուն կոչվում էր մյուլթեզիմ: Մյուլթեզիմը իլթիզամ ստանալու համար պարտավոր էր նախապէս պետական գանձարանին համապատասխան երաշխավորութիւն և ապահովութիւն տալ:

Իսպենց (ispenc). Ծնթարվում է, որ պարսիկներն բառ է բաղկացած երկու բառից, իզ, որ նշանակում է «բից», և պենց «հինդ», այսինքն հնդից մեկը: Օսմանյան կայսրութեան մեջ իսպենջը դիւանհարկի մի տեսակ էր, որը գանձվել է քրիստոնյա հպատակներից մինչև XVII դարը: Իսպենջի գումարը եղել է 25 ալչէ: Այդ գումարի գանձումը հիմնված էր իսլամական շարիաթի այն սկզբունքների վրա, որ բոլոր ոչ-հպատացյալները (քաջիբ) համարվում էին ստրուկ, գերի, իսկ գերին այդ դարերում Թուրքիայում գնահատվում էր հարյուր քսանհինգ ալչէով, որի շարիաթական մեկ հինդերորդը (humus-i ser'i) 25 ալչէ էր: Ուրեմն «անհավատ» հպատակը՝ ստրեկան 25 ալչէ վճարելով, ձեռք կրէր արդար իրավունք: Ինչպէս պարզվում է կանոննամակներից իսպենջի գումարը միշտ չէ, որ 25 ալչէ է եղել:

Խալաթի քափու (hilat tapusu—թուրք.), **քեթիսուլա աղբրլըր** (kethüda ağ'ırlığı—պարսիկ թուրք.) Խալաթ-խալաթ, պատմուճան: Խալաթի թափուն վարչական և հարկային ապօրինութեան և կամայականութեան տիպիկ օրինակներից է: Գյուղերում նոր քեթիսուլաներ նշանակվելու դեպքում գյուղացիներից բունի կերպով գանձել են այս հարկը՝ «խալաթի թափուն», «քեթիսուլապալութեան» ծանրութեանն անուանելով:

Խարաջ (harac—արաբ.) Հիմնական հողային հարկի անունն է: XVI—XVII դարերում խարաջը կորցրել էր իր նախկին նշանակութիւնը և, խարաջ անունով հասկանում էին գյուղացիներից գանձվող բոլոր հարկերը միասին վերցրած, առանձին դեպքերում «խարաջ» օգտագործվում է ջիզիե տերմինի փոխարէն:

Միսի հարկ (resm-i duhan—արաբ.) Յուրաքանչյուր ծխից (անտեսութիւն, տուն) գանձվող հարկը:

Կազա (kaza—արաբ.) Փոքր վարչական միավոր. սանջակները բաժանվում էին կազաների:

Կաշրիկ-կուզուսու (kaşık kuzusu—թուրք.) բառացի նշանակում է գդալի ցառ, փոխարեքական իմաստով՝ փոքրքաշակ:

Կալի հարկ (harman akçesi—թուրք.) Կալի համար ֆեոդալին վճարվող հարկը:

Կարա սալգուն (kara salgun—թուրք.) Հրգանիի շրջանի գյուղերից մեկի վճարած մեծագումար հարկերից է, միանվագ ձեռով տարեկան չորս հազար ալչէի չափով: Թե ինչն է հարկին ստացել է կարա (սև) անականը, դժվար է ասել, հավանաբար իր ծանրութեան համար էր սև կոչվում: Մալգունը միանվագ տարեկան հարկն է, որը բաժանվում էր ընտանիքների վրա:

Կափան կամ զափան (kapan—արաբ.) Շուկաներում մեծաքանակ ապրանքներ կշռելու համար նախատեսված հատուկ մեծ կշեռք: Այդ կշեռքի օգտագործման համար գանձվող հարկը կոչվում էր կափանի հարկ (resm-i kapan) կամ կշեռքի հարկ (resm-i میزان):

Կերի հարկ կամ աեսմի ալեֆ (resm-i älef—արաբ.) Արարերեն ալեֆ քառից է, որը նշանակում է խոտ, կեր: Ինչպէս ցույց է տալիս ինքը բառը, այս հարկը պարտադիր կերպով գանձվում էր գյուղացիներից՝ պետական ծառայողների ու տեղի սրբահինների ձեռքն ու անասունները կերակրելու համար: Հարկը գանձվել է ինչպէս բնամթերքով (գարի, խոտ, հարդ և այլն), այնպէս էլ զրամով: Ըստ Բիթլիսի կանոննամակի, որպէս աեսմի ալեֆ յուրաքանչյուր անձից գանձվել է վեց ալչէ:

Կես հարկ (resm-i nîm—արաբ.) Ձիֆթը, ինչպէս այդ երևում է կանոննամակներից, լինում էր լրիվ և կես, ըստ այնմ էլ չիֆթի հարկը գանձվում էր լրիվ և կես: Հետեաբար կես հարկը չիֆթի հարկի կեսն է:

Կըլլը (kilic), **կըլլը հակկը** (kilic hakkı). Բառացի նշանակում է սուր, սրի իրավունք: Այսպէս էին կոչվում զեամեթի կամ թիմարի տեր ֆեոդալի եկամուտները:

Հակ-ուլ-կալեմ (hak-ul-kalem—արաբ.) Նշանակում է զրադրութեան զրասենյակի համար իրավունք, վճար:

Հասանը փադիշահ (Hasan padişah). Խոսքը վերաբերում է Ակկոյունլու թուրքմենների հայտնի տիրակալ Ուղուչ Հասանին (1453—1477):

Հասան փադիշահի բարմանն ու սև ալչեն (karaca akçe). Ինչպէս երևում է կանոննամակներից, մինչև XVII դարը Թուրքիայի Արեւելյան նահանգներում գործածութեան մեջ են եղել Ուղուչ Հասանի կշռի չափերը և դրամական միավորները: Հասան փադիշահի բարմանը տասներկու նուկի էր, նուկին էլ՝ հարյուր վաթսուհ զերհեմ, այս հարկով բարմանը հավասար կլինի 1920 զերհեմի: Ուղուչ Հասանի երեք սև ալչեն հավասար է եղել մեկ օսմանյան ալչէի:

Համլե, **դիվանի համլե** (hamle, divanî hamle). Համլե արաբերեն բառացի նշանակում է ժամանութիւն, կշիւ: Ինչպէս երևում է Գյանջայի կանոննամակից, այս կշիւը գործածվել է նաև Գյանջայի շրջանում և հավասար է եղել 32 բարմանի: Դիվանի համլեն կառավարական պաշտոնական համլեի անունն է:

Հաշվառում կամ իհթիսաբիե (ihtisabiye). Կանոննամակներում գործ է ածվում գլխավորապէս կշիւների և չափերի վրա կատարված հսկողութեան,

հաշվառման իմաստով: Հսկողութեան և հաշվառման պաշտոնյան կոչվում էր մյուհեսիբ (mühtesib), իսկ այդ հաշվառման և հսկողութեան համար գանձվող հարկը կոչվում էր իհիսաբիե (ihtisabiye):

Հյուսջեթ (hüccet—արաբ.)։ Բառացի՝ փաստ, ապացույց, որևէ մեկի սեփականութունը հաստատող և կամ թե որևէ որոշման հիմքը պարզող պաշտոնական գրութուն, որ տալիս էր շարիաթական գատարանը:

Հողի հարկ (resm-i zemîn—արաբ.)։ Հողի օգտագործման համար, ըստ հողի որակի, սահմանված հարկը:

Հումուս (hümus—արաբ.)։ Բառացի $\frac{1}{5}$, բերքի $\frac{1}{5}$ -ը, որը տրվում է ֆեոդալին:

Մակիու (maktu—արաբ.)։ Բառացի նշանակում է որոշակի, կտրված: Այսպես էին կոչվում այն հարկերը, որոնք յուրաքանչյուր տարի սխաբեմատիկաբար, առանց հաշվի առնելու բերքի քանակն ու պայմանները, նախապես որոշված հատուկ գումարով՝ գանձվում էին պետութեան կամ հողատեր ֆեոդալի օգտին:

Մահրեմ (mahrem—արաբ.), ճամահրեմ (namahrem—պարսկ. արաբ.)։ Մահրեմ նշանակում է մերձավոր, ազգական, որի հետ շարիաթական կարգով ամուսնութուն չի թույլատրվում: Նամահրեմը օտարական է, որին չի թույլատրվում կանանոց (հարեմ) մտնել:

Մալիքանե (malikâne—արաբ.)։ 1. Ժառանգական ավատ: Այսպես էին կոչվում բարձրաստիճան պաշտոնյաներին, սպաներին և վաստակավոր անձանց սեփականության իրավունքով տրված հողը, չիֆթլիքը և այլ եկամտաբեր կալվածները: 2. Ֆեոդալ հողատիրոջը (մալիքին) վճարվող հողային հարկը:

Մանգիր կամ մանգր (mangir—թուրք.)։ Պղնձյա հին գրամ, որի շորքե մեկ ակնելի էր հավասար:

Մարխասիե (marhasiye—արաբ.), մարխասիեի հարկը. Արաբերեն մուրախաս բառից է, որը նշանակում է լիազոր, առաջնորդ: Ինչպես երևում է. կամարի կանուկնամեի շորորոզ հողվածից, այս հարկը նշանակվել է տարեկան միանվագ գումարով վանքերի վրա և գանձվել է տեղի քրիստոնյա բնակչության յուրաքանչյուր տնից տարեկան տասից տասնհինգ ակնելի չափով:

Մեվկուֆչի (mevkufçi—արաբ. թուրք.)։ Արաբերեն մեվկուֆ բառից, որը նշանակում է վակֆ, վակֆին վերաբերող: Մեվկուֆչի վակֆի գործերի կառավարչի կամ պաշտոնյայի անունն է:

Միրաբի հարկ (resm-i mirabi—արաբ. պարսկ.) կամ հակ-ի շուրուբ (hak-i şurub—արաբ.)։ Հողամշակութեան ընթացքում ջուրն օգտագործելու համար գանձվող այս հարկը, որը կոչվում էր նաև միրաբիլիբի հարկ (mîrabîlik resmî), կազմում էր տվյալ մարզի, շրջանի, գյուղի, ֆեոդալի բերեմնե նաև առանձին մյուլթաստիթը կարևորագույն եկամուտներից մեկը: Բանի որ Արևմտյան Հայաստանի և առհասարակ արևելյան երկրների կլիմայական պայմաններում ոռոգման հարցը գյուղատնտեսության համար կենսական նշանակութուն ունեւր, գրա համար էլ այս հարկը առիթ է տվել շարաշահումների: Դա արտացոլված է Հրզրումի, Մալաթիայի և մի շարք այլ վայրերի կանուկնամեներում:

Միրախուրիե (mirahuriye—պարսկ.)։ Միրախուր էր կոչվում թագավորի ախուսակետը: Միրախուրութուն անունով գանձվող այս հարկը բնատուրբով կոչվել է «ադեբի միրախուրիե» (‘adet-i mirahuriye):

Միրիվա (miriliva—պարսկ.)։ Պետութեան կողմից նշանակված լիվայի (սանջակի) կառավարիչը:

Միրմիրան (mîrîmîran—պարսկ.)։ Պետութեան կողմից նշանակված նահանգի բարձրաստիճան կառավարիչ պաշտոնյան, թուրքերեն կոչվում էր նաև բեյլբերեյի (հետագայում վալի):

Մյուդ (müd—հուն.)։ Կշռի չափ է, բաթմանի մի այլ տեսակը: Օսմանյան պետութեան տարբեր շրջաններում մյուդը տարբեր ծանրութուն է ունեցել՝ Ստամբուլի քսան քիլեից մինչև ութ քիլե, իսկ քիլեն հավասար է ութ հարգար դիրհեմի:

Մյուսելլեմ (müsellem—արաբ.)։ Բառացի նշանակում է ներված, ազատված հարկերից: Այսպես էին կոչվում որոշ ցեղեր ու գյուղական համայնքներ, որոնք ռազմական ծառայության և կամ ստանձնած որոշ պարտականութունների կատարման համար (ճանապարհների պահպանում, ջրանցքների կառուցում, բերդերի նորոգում և այլն) ազատվում էին զանձարանին հարկ վճարելուց:

Մուկաթա՛ա (mukata’a—արաբ.)։ Արաբերեն մակթու բառից է, որ նշանակում է գինը որոշված հողամաս, որ դեամեթի և թիմարի կարգից դուրս տրվում էր որոշ գումարի դիմաց. հողակտորը կոչվում էր մակտուա, իսկ գումարը՝ մակաթաա:

Մուշակի հարկ (resm-i muşak)։ Գյուղացիներից տեղի ֆեոդալների օգտին տարեկան որոշ օրեր պարտադիր աշխատանք (կոո) կատարելու փոխարեն գանձվող հարկը: «Մուշակը» հավանաբար հայերեն մշակ բառն է, որովհետև էրգանի կանուկնամեում ասված է, որ այդ հարկը գանձվում է հայերից: Իսկ մուսուլմաններից չի գանձվում: Մուշակի հարկը կամ տարեկան վեջ օր ծառայութուն էր, կամ քսանչորս ակնե հատուցում:

Մսխալ (miskal—արաբ.)։ Կշռի չափ է, որ հավասար է 1,5 դիրհեմի կամ 4,8 գրամի:

Ցազբըլըք (y azıcılık—թուրք.)։ Գրագրութեան, քարտուղարութեան վարձ:

Յուրուք (yürük)։ Թուրքերեն yürümek քայլել, շարժվել բառից: Այսպես էին կոչվում այն ցեղերը, որոնք քոչվորական և կիսաքոչվորական կյանք էին վարում. այդ ցեղերը՝ մեծ-մասամբ թուրքմենական, քրդական և թուրքահան ծագում ունեին: Սրանք հայտնի էին նաև յուզգեջիններ անունով: Սրանց նկատմամբ օսմանյան կանուկնամեներում նախատեսված էին որոշ առանձնաշնորհումներ:

Նայիբեթ (nâibceğ—պարսկ. թուրք.) կամ ճիաբեթի հարկը (resm-i niyâbet)։ արաբերեն նայիբ, որտեղից և նայիրջեք բառը կոչվում էր կադիի (շարիաթական գատավոր) փոխանորդը: Նիաբեթը, նայիրութեան, նայիր պաշտոնի անունն է: Նիաբեթի հարկը նայիրութեան համար գանձվող հարկն է:

Նարխ (narh—արաբ.), ճարխըլըք (narhçılık—արաբ. թուրք.)։ Պետութեան կողմից որոշ ապրանքների վրա նշանակված սակագինը կոչվում էր նարխ: Նարխ նշանակող պաշտոնյան կոչվում էր նարխչի: Նարխըլըք նարխի համար գանձվող հարկն է:

Նուկի (nügi)։ Ծանրութեան կշիռ: Նուկին հավասար է 20՝ դիրհեմի, այսինքն՝ 640 գրամի:

Շահնե (şahne—պարսկ.), շահնելիք (şahnelik)։ 30 քիլեից բարձր բերք աստացող գյուղացիներից գանձվող հարկը բնամթերքով կոչվել է շահնելիք:

Շահնեն այս հարկը հավաքող ու քաղաքի որոշ գործերին հսկող պաշտոնյայի անունն է:

Շահրուխի (šahrūhi—պարսկ.). Լենկթիմուր: ուղի Մուլթան Շահրուխի գրամական միավորն է:

Շամի-էշրեֆի (šami eşrefi—արաբ.). Շամը Գամասկոսի արաբերեն անունն է: Շամի էշրեֆի՝ Շամի գրամական միավորներից է, որը ինչպես նշվում է կանոննամենքում, հավասար է եղել քառասուն օսմանյան ակչերի:

Շիրեքիլիք (širecilik—թուրք.). Էրզանիի զավառի Բայուր հայկական գյուղի վճարած բաղամթիվ մեծագույնը հարկերի մեջ շիրաքիլայան (խաղողի շերա պատրաստելու) համար դանձվող գումարը:

Ոչխարի հարկ (resm-i ag'nâm). Այս հարկը կանոննամենքում հիշատակվում է նաև աղբի աղեմ ('adet-i agnâm), կայուն ռեսմի (koyun resmi) անուններով: Կանոննամենքում հիշատակված են նաև այդ հարկի հետևյալ տարբերակները՝ յայլաղի հարկ (resm-i yaylak), արտավայրերը բարձրանալիս ոչխարների համար դանձվող հարկը, զըշլաղի հարկ (resm-i kişlak) կամ յարաղի հարկ (resm-i yatak). ձմեռելու վայրերում ոչխարների համար դանձվող հարկը:

Չափ (çab—հայերեն). Արևմտյան Հայաստանում մինչև վերջին ժամանակները գործածություն մեջ էղող տախտակից շինված հացահատիկի չափ մի չափը չորս կող է:

Շերքեգների (çerakise) ժամանակից. նկատի է առնվում XIV—XVI դարերում Նիդիպոսի չերքեգ մամուլների իշխանությունը, որի սահմանների մեջ էին մտնում Սիրիան, հյուսիսում՝ Մարաշը, էլիստում՝ Մալաթիան, Արևելքում՝ էլշեգիրեն մինչև Գերգորը:

Չիֆթ, չիֆրիք (çift, çiftlik). Պարսկերեն Չիֆթ բառից, որ նշանակում է գույլ: Չիֆթը կամ չիֆթլիքը այն հողակտորն էր, որ հնարավոր էր մշակել մի գույլ եզան միջոցով: Ինչպես երևում է կանոննամենքից, չիֆթը կամ չիֆթլիքը մի հողային տարածություն էր, որն հավասար էր լավագույն տեղի համար 80 դեոնյումի, միջակ տեղում՝ 100 դեոնյումի, իսկ վատ տեղում 120, 130 դեոնյում հողի:

Չիֆթի հարկը (resm-i çift—արաբ. պարսկ.). Չիֆթլիքը մշակելու իրավունք ձեռք բերելու համար վճարվող հարկն է: Չիֆթի հարկը ինչպես և չիֆթլիքը ևնում էր լրիվ (tam) և կես (nim):

Չոբանբեգի (çoban begi). Թուրքերեն բառացի հովիվների պետ: Այս հարկը, ինչպես և յայլաղի, զըշլաղի հարկերը դանձվում էին պետական դանձաբանին պատկանող յայլաղների (ամառանոցների) և զըշլաղների (ձմեռանոցների) օգտագործման համար:

Չաբա բեննաքի հարկը (resm-i caba bennak). Այս հարկը դանձվում էր այն հողագործ գյուղացիներից, որոնք զրկված էին որևէ հողակտորից:

Չեբելու (cebelu). XV—XVII դարերում Օսմանյան կայսրությունում մեջ գեամեթի և թիմարի տեր ֆեոդալները պարտավոր էին պայմանական իրավունքով իրենց հատակցված հողի դիմաց զինվորական ծառայություն կատարել, իսկ պատերազմի ժամանակ յուրաքանչյուր 5000 ակչե կկամօրի դիմաց պարտավոր էին բանակին տալ մեկ ռազմիկ՝ ջեբելու անունով:

Չիզիե (cizye—արաբ.). Գլխահարկ, շտրիաթական հարկերից ամենաժանրը, որը դանձվում էր ոչ մուսուլման հպատակներից և նվաստացուցիչ

ընույթ ունեեր: Ջիզիեն դանձվում էր բոլոր հարկատու ոչ մուսուլման հպատակներից՝ համաձայն նրանց նյութական դրության: Ըստ այնմ էլ բոլոր հպատակները բաժանվում էին երեք հիմնական խմբի, ցածրերի (ednâ), միջակների (evsat) և բարձրերի ('âlâ), որոնք համապատասխան ձևով պետի վճարեին՝ 10, 20 և 30 ակչե: XVII դարի սկզբից հարկի գումարը բարձրացավ 15, 30, 45 ակչեի: Թուրք պատմագիրների վկայությամբ ջիզիե հարկի ավելացումները հետագայում ևս շարունակվել են: Ջիզիեն չափի ավելացումը պետական ղեֆիցիտը ծածկելու կարևորագույն աղբյուրներից մեկն էր: XIX դարի երկրորդ կեսից ջիզիեն փոխարինվեց բեդլի-ասկերի (զինվորագրության փոխարեն) հարկով, որը տեղի մինչև 1908 թվականը՝ օսմանյան սահմանադրության հայտարարումը:

Ռայաթ (հոգնակի՝ ռեայա, reâya—արաբ.). Կանոննամենքում և առհասարակ սկզբնաղբյուրներում գործածվում է հարկատու հողագործ գյուղացիություն իմաստով՝ անկախ ազգային և դավանական պատկանելիությունից: Հետագայում թուրքերը ռեայա էին անվանում հատկապես քրիստոնյա հպատակներին:

Ռաբաթ (ribat—արաբ.). Միջնադարյան քաղաքի արվարձանները կոչվում էին ռաբաթ:

Ռեցմ (recm—արաբ.). Քարկոծել, քարով խփել: Հանցագործին կամ ոճրագործին մարմնի կեսը թաղելով և քարկոծելով սպանել:

Ռում (Rum), ռումի օրենք (Rum kanunu). Բառացի նշանակում է Հոռոմ, հռոմեական օրենք: Մահայն օսմանյան պետության սկզբնական շրջանում օսմանցի թուրքերը նույնպես ուում են անվանվել, որպես Ռումի, այսինքն Բյուզանդական երկրի նվաճողները: Ռումի երկիր, Ռումի օրենք և այլն, պետք է հասկանալ օսմանյան երկիր, օսմանյան օրենք իմաստով:

Սալարիե (salâriye). Պարսկերեն սալար՝ հրամանատար, առաջնորդ բառից: Սալարիեն արտակարգ ղեկավարի, հատկապես պատերազմների ժամանակ հրամանատարի օգտին բերքի մասը կամ գումարն է: Ավարիզի մի տարատեսակն է:

Սելամլիք (selamlık—արաբ. թուրք.). Այսպես է կոչվում այն հարկը, որ վճարում էին գյուղացիները տեղում նոր նշանակված ֆեոդալի օգտին, երբ գնում էին նրան զիմավորելու:

Սիչիլ (sicil—արաբ.). Դատարանական վճիռների արձանագրության մատյան: Սիչիլի՝ դատարանական վճռով արձանագրված հանցագործ, ոճրագործ:

Սովորուբայիե հարկեր (tekâlif-i örfiye). Թուրքիայում բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական կատեգորիայի՝ շարիաթական հարկեր (rûsûm-i şeriye) և սովորուբայիե հարկեր (rûsûm-i örfiye կամ tekâlif-i örfiye): Սուսլին կարգի հարկերի մեջ մտնում էին՝ աշարը (տասանորդ), խարաջը, ջիզիեն և գեքարը: Շարիաթական այս գլխավոր հարկերի հիման վրա, տարբեր դարերում և տարբեր վայրերում նշանակվել և դանձվել են բազմաթիվ և բազմատեսակ այլ հարկեր (ըստ թուրք պատմագիրների ավելի քան ութսուն հարկ), հողամշակության և անասնապահության տարբեր բնագավառների, ջրաղացի, ամուսնություն, ոճրի և հանցագործությունների համար և այլն:

Սովորուբայիե հարկերը նշանակվում էին սուլթաններին հատուկ հրամաններով՝ երկրի և պետության բացառիկ կարեքների համար, մասնավորա-

պես պատերազմների ժամանակ: Այդ հարկերը թեև պաշտոնապես հայտարարվում էին ժամանակավոր, բայց պետութայն ռազմա-ֆեոդալական բնույթի և հարկատու քրիստոնյա բնակչութայն կատարյալ իրավագրկութայն պայմաններում, հաճախ դառնում էին մշտական: Թվով 97-ի հասնող այդ սովորութային հարկերի շարքում ամենից ավելի ծանրը պատերազմների կապակցութայն նշանակված բազմաթիվ հարկերն էին՝ ավարիզը, իմդաղի-սեֆերիեն (օգնութայն արշավանքի համար), պաքսիմեթ բահա (գումար հացի համար), ուլուֆե բահա (գումար սոճիկների համար) և այլն, և այլն:

Սուբաշի (subaşı—թուրք.), սուբաշլըք (subaşılık—թուրք.). Սուբաշի էր կոչվում կարգ ու կանոնի պահպանման հսկող պաշտոնյաների պետը: Ինչպես պարզվում է կանոննամեներից, սուբաշիները գտնվում էին սանջակի բեյերի տրամադրութայն տակ: Սուբաշի բառացի նշանակում է շրպետ, անցյալում ոտոզման ջրերի բաշխման և ոտոզման գործերին հսկող պաշտոնյան է եղել: Հետագայում այդ պաշտոնը ավելի ընդարձակ իմաստ է ստացել: Սուբաշին ժամանակակից ոստիկանապետի դերն էր կատարում: Սուբաշլըք՝ սուբաշի օգտին գանձված հարկը:

Սուլթանահան Գեվրուզ (nevruz-i sultanı). Պարսիկերեն նովրուզ նշանակում է նոր օր: Հին իրանական տարեցույցով տարեկիզբը մարտ ամսի 9-րդ օրն էր: Սուլթանահան Գեվրուզ կամ Գեվրուզի սուլթանի՝ սուլթան Զալալեդդին Մելիք-Շահի տարեցույցով ընդունված նեվրուզն է:

Վակիյե (vakiyye—արաբ.). Գործ է ածվում նաև վուկիյե (vukiyye), ուկիյե (ukiyye) ձևերով: Ծանրութայն չափ, որ հետագայում կոչվել է օկիկ կամ օբա: Վակիյեն հավասար է եղել 200 մինչև 400 դիրհեմի:

Վիլայեթ (vilâyet—արաբ.). Նրկիր, երկրամաս, նահանգ: Օսմանյան աղբյուրներում, հատկապես XV—XVI դարերում հաճախ վիլայեթի փոխարեն գործածվում էր էյալեթ (eyâlet) տերմինը:

Տան հարկ (resm-i hane—արաբ. պարսկ.). Այս հարկը ինչպես նաև Բիթլիսի կանոննամեներում հիշատակված ջուլիակի հարկը (resm-i cüllah) և ապատանի հարկը (resm-i mekân) գանձվել է Շրպեթի սովորութայն համաձայնս:

Տասնորդ (öşür—արաբ.). Ինչպես բոլոր մյուս մուսուլմանական երկրներում, այնպես էլ թուրքիայում, որպես հողային ու օրինական հարկ գյուղացիութայնից գանձվում էր տասնորդ, բերքի $\frac{1}{10}$, երբեմն էլ $\frac{1}{8}$ և ավելին:

Տոնական հարկ (resm-i iydiye—արաբ.), Գեվրուզի հարկ (resm-i nevruzıye). ընդունված կարգով գյուղացիները իսլամական տոները առթիվ պարտավոր էին որոշ նվերներ տալ իրենց տերերին. այդ նվերը հարկի բնույթ ստացավ և կոչվեց Եյդիյե (iydiye), այսինքն տոնական: Նեվրուզը (տարեկիզբը) տոներից մեկն էր, և այդ կապակցութայն գանձվող հարկը կոչվում էր նեվրուզի հարկ:

Տուգանքի տասնորդ (öşrü cerime—արաբ.). Ապօրինի հարկերի պահանջն ու գանձումը ձևակերպելու համար հնարված հարկ:

Բյուրեկչի (kürekçi—թուրք.). Բառացի նշանակում է թի բանեցնող: Կարիքի և գանադան արտակարգ դեպքերի, հատկապես պատերազմների ժամանակ գյուղացիները կատարում էին գանադան պարհակային կառուցումներ և այլն, այդ պարհակները կոչվել են «բյուրեկչի»:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ս

Կանոննամեների ձեռագիր արաբատառ տեքստերի մասին որոշ պատկերացում տալու համար արտատպում ենք Օ. Լ. Բարկանի գրքում տպագրված բազմաթիվ կանոննամեների ֆոտոպատճեններից մի քանիսը, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանին և հայաբնակ շրջաններին, ինչպես նաև Վրաստանի, Գյանջալի վիլայեթներին և Ատամբուլի խասերին:

قانون نامه خواص قنطنطیبه

گفته شده است... قانون نامه خواص قنطنطیبه... کما یدکند با غش اولد که خط خطان اولد شایه... خواص قنطنطیبه صیغه زلبینه منوطلدی... اما و بنید اینا زلم و رعایای زیر اعشارت...

عالمش کدر اعشارت بدو جاصلند... اولد قدر کور فاعلینک نصفی جوی خط اولد... نضاف جوی خط و نضاف جوی خط اولد... اولد اعشارت نضاف جوی خط اولد... اولد اعشارت نضاف جوی خط اولد...

قانون نامه خواص قنطنطیبه

سرمه جی بازم و کلک... اولد قدر کور فاعلینک نصفی جوی خط اولد... نضاف جوی خط و نضاف جوی خط اولد... اولد اعشارت نضاف جوی خط اولد... اولد اعشارت نضاف جوی خط اولد...

و رعایای زیر اعشارت... اولد قدر کور فاعلینک نصفی جوی خط اولد... نضاف جوی خط و نضاف جوی خط اولد... اولد اعشارت نضاف جوی خط اولد... اولد اعشارت نضاف جوی خط اولد...

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ արևելագիտության սեկտորի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Բ. Լ. ՉՈՒԳԱՍՉՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ռ. Պ. ՄԱՆՈՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Կ. Հ. ՅՈՒԹՈՒՋՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԻՍԵՅԱՆ
Սրբագրիչ՝ Լ. Ս. ՍԱՐԱՋՅԱՆ

144-1971
1971
USSR 1971

ՎՋ 06234, պատվեր 397, խՀՊ 828, հրատ. № 2282, տպարանակ 1500

Հանձնված է արատգրություն 31/X 1963 թ., ստորագրված է
տպագրություն 23/VII 1964 թ.:

Տպագր. 9,5 մամ., հրատ. 7,1 մամ.:

Թուղթ 60×92¹/₁₆: Գինը կազմում է 63 կ.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան,
Բարեկամություն 24